




# ԶՄԻԱԾԻՆ





ԼԲ  
ՏԱՐԻ




# ԷԶՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՕՆԱԿԱՆ  
ԱՄՍԱԳԻՐ  
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ  
ԱԹՈՌՈՒՅ  
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Վարդ

1975





**ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և Քեմտրքերիի նորընտիր արքեպիսկոպոս Դոնադո Ֆրեդերիկ Գոկանի միջև փոխանակված պաշտոնական գրությունները	3
Քեմտրքերիի արքեպիսկոպոս Դոնադո Ֆրեդերիկ Գոկանի հրավեր-նամակը	8
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին . . . . .	8
Հայոց Հայրապետի նամակը Քեմտրքերիի նորընտիր արքեպիսկոպոս Դոնադո Ֆրեդերիկ Գոկանին . . . . .	4
ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ողջույնի և սիրո կոմիտեի Քեմտրքերիի արքեպիսկոպոս Դոնադո Ֆրեդերիկ Գոկանին . . . . .	5
Հաղորդագրություն . . . . .	6
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Գևորգյան ճեմարանի հիմնադրության 100-ամյակը . . . . .	7
ԿԱՐԱՊԵՏ ՍԱՐԿԱՒԱԳ ՏԷՐ-ՄԿՐՏՉԵԱՆ—Ուխտի խօսք արտասանուած Տ. Տ. Գեորգ Դ կաթողիկոսի շիրմի վրայ . . . . .	10
ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆ—Նորին Վեհափառության օծման երկրորդ տարեդարձը և ս. Էջմիածնի ուսումնարանի հիմնարկությունը . . . . .	13
Գևորգյան ճեմարանի դասախոս և սիրված բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանի ճառը ճեմարանի հիմնադրության 15-ամյակի առթիվ . . . . .	16
ՍԱՄՎԵԼ ԱՆԹՈՍՅԱՆ—Հայ դպրության մոր դարբնոցը . . . . .	18
ԽԱՉԱՏՈՒՐ ԿԱՆԱՅԱՆ—Ողջույնի և երախտագիտության խոսք Գևորգյան ճեմարանի 100-ամյակի առթիվ . . . . .	25
ՄԻՀՐԱՆ ԳԱՄԱՂԵԼԻ ԳԱՄԱՂԵԼՅԱՆ—Էջմիածնի Գևորգյան ճեմարան . . . . .	28
Կ. Պոլսի հայոց ամենապատիվ տ. Ծնորիք սրբազան պատրիարքի 1974 թվականի տարեկան տեղեկագիրը . . . . .	35
Խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսի միջազգային քարտուղարության նստաշրջանը Մայր Աթոռ ս. Էջմիածնում . . . . .	38
ՄԱՅՐ ԱԹՈՒՌՈՒՄ—Եկեղեցական թեմ. լուրեր . . . . .	47
ԵԶՆԻԿ ԱԲԵՂԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ—Մովսէսի հայոց վարդապետի գրեալ պատասխանի թղթոյն Տրապիզոնի առ հատուածեալն Գրիգոր երեց . . . . .	50
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԿԱՎԱԳ ՍԱՐԳՍՅԱՆ—Մեծ պահոց խոհեր . . . . .	59
Յուզակ Մայր Աթոռ ս. Էջմիածնի մոր ստացված ձեռագրերի . . . . .	62

**ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ**

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».  
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 6/III 1975 թ.: Ստորագրված է տպագրության 8/IV 1975 թ.:  
Տպագրական 4 մամուլ + 3 ներդիր, թուղթ 80x84<sup>1</sup>/<sub>8</sub>, պատվեր 175

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1975 թ.



ՀՐԱՄԱՆԱԻ

**Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ**

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ԲԵՆՏՐԻԵՐԻ ՄԱՅՐ ՏԱԺԱՐ. ԼՈՆԴՈՆ

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

**Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ**

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՔԵՆՏՐԵՆԻԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ. ԼՈՆԳՈՆ

# Քոյր Եկեղեցիներ



**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ  
ՔԵՆՏՐԲԵՐԻԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
ԴՈՆԱԼԴ ՖՐԵԴԵՐԻԿ ԳՈԿԱՆԻ ՄԻԶԵՎ  
ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ՔԵՆՏՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈՆԱԼԴ  
ՖՐԵԴԵՐԻԿ ԳՈԿԱՆԻ ՀՐԱՎԵՐ-ՆԱՄԱԿԸ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ**

Զերդ Սրբություն,

Հաճելի է Մեզ, հաճում մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի, Զերդ Սրբությանն ուղարկել Մեր ողջույնները և տեղեկացնել Ձեզ, որ ամենակարող Աստուծո օգնականությամբ հույս ունենք շուտով ստանձնելու Մեր պատասխանատվությունները որպես Քենտրբերիի արքեպիսկոպոս:

Մեր գահակալությունը իբրև արքեպիսկոպոս տեղի է ունենալու Քենտրբերիի Մայր տաճարում 1975 թվականի հունվարի 24-ին, ուրբաթ օրը, կեսօրից հետո, «Քրիստոնեական միության աղոթքի շաբաթվա» ընթացքում: Այս առթիվ ուրախություն և պատիվ է Մեզ համար հրավիրել Զերդ Սրբությանը, որ անձնապես ներկայացվի սույն արարողությանը: Եթե դա հնարավոր լինի, մեծ հաճույք պիտի պատճառի Մեզ, և Ձեր ներկայացվելը լավագույն վկայությունը կհանդիսանա այն լավ հարաբերությունների, որոնք գոյություն ունեն հայ և անգլիկան եկեղեցիների միջև: Հույսով ենք նաև, որ դրանով առավել ևս կգարգանան լավ հարաբերությունները Զերդ Սրբության և Մեր միջև:

Սպասում ենք լսելու Ձերդ Սրբության ներկայացուցչի հանդիսությանը մասնակցելու վերաբերյալ: Մինչ այդ հղում ենք Ձեզ Մեր ջերմագին ողջույնները:

Ձերդ Սրբության եղբայր ի Քրիստոս՝

**ԴՈՆԱԼԴ**

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅՈՐՔԻ

Յորք,  
25-ը հոկտեմբերի 1974 թ.

**ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՆԱՄԱԿԸ ՔԵՆՏՐՈՆԻՒԻ  
ՆՈՐԸՆՏԻՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈՆԱԼԴ ՖՐԵԴԵՐԻԿ  
ԳՈԿԱՆԻՆ**

Ձերդ Գերաշնորհություն,

Մեծ գոհունակությամբ կարդացինք Ձեր 25 հոկտեմբեր 1974 թվակիր նամակը, որով տեղեկացնում եք Մեզ Ձեր գահակալության բարի լուրը որպես Քենտրբերիի արքեպիսկոպոս, գահակալություն, որը տեղի է ունենալու 24 հունվարին Քենտրբերիի պատմական Մայր տաճարում:

Այս ուրախ առիթով Մենք Մեր շնորհակալությունն ենք հայտնում նաև Ձեր եղբայրական հրավերի համար, որ Մենք անձնապես ներկա լինենք վերոհիշյալ արարողությանը:

Մեր սույն գրությամբ հաստատում ենք Մեր նույնքեր 9 թվակիր հեռագիրը և Մեր այս նամակով ցանկանում ենք տեղեկացնել Ձեզ, որ Մենք սիրով ենք ընդունում Ձեր հրավերը, և որը Մենք կարծում ենք, թե մեկ նոր արտահայտությունն է ձեր մեծ եկեղեցու և անձնապես Ձեր եղբայրական զգացմունքների՝ դեպի մեր եկեղեցին և դեպի նրա գլուխը հանդիսացող Մայր Աթոռ սուրբ Էջմիածինը:

Թող ամենակարողն Աստված ս. Հոգու միջոցով զորացնի զՁեզ Ձեր նոր պարտականությունների մեջ և լուսավորի Ձեր մեծ առաքելությունը՝ ի փառս մեր Տիրոջ և մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի:

Մենք շատ ուրախ պիտի լինենք, եթե մոտ ապագայում առիթը ունենալինք անձնապես Ձեզ հետ ծանոթանալու և բերելու Մեր եղբայրական բարի մտղթանքները Ձերդ Գերաշնորհությանը և ձեր մեծ եկեղեցուն:

«Այսուհետև զօրացարուք Տերամբ և կարողությամբ զօրութեան նորա» (Եփես. 2 10):

Սիրո ողջունիվ՝

**ՎԱԶԳԵՆ Ա.**

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,  
12-ը նոյեմբերի 1974 թ.

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ ՍԻՐՈ  
ԿՈՆԴԱԿԸ ՔԵՆՏՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
ԴՈՆԱԼԴ ՖՐԵԴԵՐԻԿ ԳՈԿԱՆԻՆ

ՆՈՐԻՆ ԳԵՐԱԾԵՆՈՐՀՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ ԴՈՆԱԼԴ ՖՐԵԴԵՐԻԿ ԳՈԿԱՆ  
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ՔԵՆՏՐԲԵՐԻԻ ԵՒ ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻՈՑ, ՈՂՋՈՒՅՆ  
ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՍԻՐՈՑ ԵՒ ՅԱՐԳԱՆՔ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ, Ի ԳԱՀԷ  
ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱԾՆԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՒ Ի  
ԳԱՀԱԿԱԼԷ ՆՈՐԻՆ

«Այլ ինքն Աստուած և Հայր մեր և Տէր  
մեր Յիսուս Քրիստոս՝ ուղղեսցէ զճանա-  
պարհս մեր առ ձեզ» (Ա. Թեաաղ. Գ 11):

Գոհութիւն Աստուծոյ ամենակալին որ այսօր ուրախութիւնը կը շնորհէ Մեզի, ողջոյնի և սիրոյ Մեր այս գիրը Ձեզի յղելու, ձեռամբ մեր անձնական ներկայացուցիչ՝ տ. Կոմիտաս արքեպիսկոպոս Տէր-Ստեփանեանին, Մեր փոխանորդը Արարատեան թեմի, այն պահին երբ սուրբ Հոգին Ձեզ կ'առաջնորդէ Քենտրբերիի արքեպիսկոպոսութեան պատմական գահին վրա, որուն բարձունքէն Դուք կոչուած էք ղեկավարելու անկլիկան մեծ եկեղեցին և մխիթարելու անոր հաւատացեալ զաւակները:

Մենք կը շնորհատրենք Ձեզ Մեր սրտի բովանդակ ջերմութեամբ և կ'աղօթենք որ Տէրը զօրացնէ Ձեզ և մնայ Ձեզի միշտ օգնական, ճամբուն վրայ Ձեր սուրբ առաքելութեան, նուիրուած՝ ձեր եկեղեցոյ ծաղկումին, մարդկային աշխարհի մէջ Քրիստոսի Աւետարանի փառաւորումին և քրիստոնէական տիեզերական եղբայրութեան ամրապնդումին:

Բերկրեալ սրտով կարդացինք Ձերդ Գերաշնորհութեան 25 հոկտեմբեր 1974 թուակիր հրաւեր նամակը և 19 նոյեմբեր թուակիր հետագիրը, զոր կը նկատենք մէկ նոր ու սքանչելի արտայայտութիւնը ձեր եկեղեցոյ և անձամբ Ձերդ Գերաշնորհութեան պայծառ զգացումներուն դէպի Հայաստանեայց եկեղեցին ու անոր գլուխը հանդիսացող սուրբ Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետութիւնը: Մենք վստահ ենք թէ ինչպէս անցեալի մէջ, նաև յետ այսու, Ձեր հովուապետութեան շրջանին, պիտի շարունակուին աւանդական եղբայրական սիրոյ կապերը Էկումենիկ ոգիով մեր եկեղեցիներու միջև, որուն համար Ձեզի երախտապարտ ենք Մենք և մեր ժողովուրդը որ ի Հայաստան և որ ի սփիւռս աշխարհի, նաև մեր հաւատացեալները ի Լոնտոն և ի Մեծն Բրիտանիա, որոնք միշտ վայելած են հայրական հոգածութիւնը անկլիկան եկեղեցոյ և անոր զահակալներուն:

Թող Աստուած Ձեզ պարգևէ կենաց երկար ու խաղաղ տարիներ, լուսաշող ու պտղառատ գործունէութեան տարիներ, ի փառս Փրկչին մերոյ Յիսուսի Բրիստոսի, և յանասանութիւն անկլիկան մեծ եկեղեցոյ:

«Այսուհետև զօրացարոյք Տերամբ և կարողութեամբ զօրութեան նորա» (Եփես. Զ 10). ամէն:

*Վաչագան*

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տոսա կոնդակս ի 24-ը յունուարի  
1975 փրկչական ամի,  
և ի տունարիս հայոց ՌՆԻԴ,  
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի  
ՀՄՐ. 798

### Հ Ա Ղ Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Սույն թվականի փետրվարի 19-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, լոնդոնահայ համայնքային և եկեղեցական խորհուրդի անունով գեր. տ. Ներսես եպիսկոպոս Պոզապալյանը՝ հայրապետական պատվիրակ և հոգեվոր տեսուչ Անգլիայի հայոց, տիար Հայկ Ապաճյան՝ պատվակալ ատենապետ համայնքային և եկեղեցական խորհուրդի, և տիար Բարսեղ Կյուպենկյան՝ Խորհուրդի վարչական մարմնի պատվակալ ատենապետ, համաձայն նախօրոք առնված ժամադրության, հյուրընկալվեցան Անգլիո առաջնորդ և Քենտրբերիի արքեպիսկոպոս գեր. տ. Դոնալդ Ֆրեդերիկ Գոկլանի կողմն Լամբեթի պալատին մեջ:


Համայնքային և եկեղեցական խորհուրդի ներկայացուցիչները այս առթիվ թարգմանը հանդիսացան Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի եղբայրական ողջույններուն և ապա անգլիահայ գաղութի շնորհավորանքները և որդիական հարգանաց հավաստին ներկայացուցին անգլիկան եկեղեցվո նորընտիր գահակալին:

Իր հերթին Քենտրբերիի արքեպիսկոպոսը մասնավոր հետաքրքրություն ցույց տվեց հայ գաղութի կրոնական, ազգային և մշակութային կյանքի նկատմամբ: Ձերմ փափագ հայտնեց Հայոց Հայրապետին անձամբ ողջունելու՝ ապագայի առաջին հնարավոր այցելության առթիվ: Նաև, ընդառաջելով իրեն տրված հարցին, պատասխանեց՝ ըսելով, որ շատ կփափագի քրիստոնեության վաղեմի օրրան Հայաստան այցելել՝ ողջունելու Հայոց Հայրապետը և սգրական Արարատ սարն իր սեփական աչքերով տեսնելու:

Այս առթիվ անգլիահայ գաղութի կողմն պատրաստված հուշանվերներ հանձնվեցան անգլիկան եկեղեցվո նորընտիր գահակալին, և ջերմ տպավորություններով ու մաղթանքներով տեսակցությունը իր ավարտին հասավ:

ԼՈՆԴՈՆԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՎ  
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Լոնդոն,  
23-ը փետրվարի 1975 թ.



# Երկար Գրք

## ԳԵՎՈՐԳՅԱՆ ԾԵՄԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅԱՆ 100-ԱՄՅԱԿԸ

1974 թվականին լրացավ Մայր Աթոռ ս. Էջմիածնի Գևորգյան ճեմարանի հիմնադրության 100-ամյակը:

Անցյալ տարի, դեկտեմբերի 15-ին, կիրակի օրը, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի նախագահությամբ Վեհարանի հանդիսությանը դահլիճում նշվեց Գևորգյան ճեմարանի 100-ամյակը:

«Էջմիածին» ամսագրի սույն համարը նվիրվում է այդ պատմական ու մշակութային մեծ իրադարձության ոգեկոչմանը:

Հոբելյանները բացառիկ առիթներ են լուրաքանչյուր ժողովրդի մշակույթի տարեգրության մեջ, լուսավոր հանգրվաններ, որպեսզի հասարակությունը համազգային հանդիսությամբ և արժանավայել շուքով երախտագիտության իր սրտագին տուրքն ընձայի հոբելյանական տարեդարձներին և հոբելյարներին:

Ահա այսօր նույն մտածումներով և երախտագետ սրտով-Գևորգյան ճեմարանի հիմնադրության 100-ամյակի և նրա շուրջ 45-ամյա փառավոր, ազգօգուտ գործունեության ոգեկոչումն ենք կատարում:

Այս ոգեկոչումը նշանակալից է նաև նրանով, որ անցյալում Մայր Աթոռը և Գևորգյան ճեմարանի ղեկավարությունը հաճախ որոշել են նշել կրթական այս փառավոր հաստատության 25 և 40-ամյա հոբելյանները, բայց այդ ազնիվ մտադրությունները զանազան պատճառներով չեն իրականացել:

Այսօր մենք ուրախությունն ունենք, Ս. Ս. Վազգեն Ա Ամենայն Հայոց ուսումնասեր և մանկավարժ կաթողիկոսի գահակալության օրով և Նրա իսկ հրահանգով, նշելու Գե-

վորգյան ճեմարանի հիմնադրության և բեղմնավոր գործունեության հոբելյանները:

Հայ դպրոցը հազարամյա տարիների պատմություն ունի:

Արարատյան դաշտում, հայրենի հողի վրա, հայոց հնագույն և ամենախոշոր եկեղեցական հոգևոր մշակութային կենտրոն Վաղարշապատ-Էջմիածնում, ուր ս. Գրիգոր Լուսավորչի քարոզությամբ «բղխեցին հայոց շնորհ պատուիրանացն Աստուծոյ» (Կորյուն), բացվել են Ե դարի առաջին քառորդում, գրեթե գլուխով և Աստվածաշնչի հայերեն թարգմանությամբ սկզբնավորված հայ մշակույթի օրերին, ս. Սահակի և ս. Մեսրոպի ջանքերով, հայագիր առաջին դպրոցները՝ «Դպրոցք հօտին ուսմանց» (Ղ. Փարպեցի), որպես «բացեալ աղբիւր գիտութեանն Աստուծոյ», որին դիմում էր ժամանակի ուսումնաձայնակ հայ երիտասարդությունը աշակերտական մեծ խմբերով՝ «ի կողմանց և ի գաւառաց Հայաստան աշխարհի, յորդեալք և դրդեալք» (Կորյուն):

Հայրենի հողի վրա առաջին հայագիր դպրոցների բացումը համազգային, համաժողովրդական տոն էր հայ ժողովրդի և, մանավանդ, հայ երիտասարդության համար, «քանզի ամենայն անձն յորդորեալ փափաքէր յուսումն հայերէն գիտութեան, որպէս ի խաւարէն յասորի տանջանացն զերծեալք ի լոյս խնդալին» (Ղ. Փարպեցի):

Հայ դպրոցները դարերի հետ շուրանակաբար հաջորդել են միմյանց: Երբեք չի կրտորվել կրթական այս լուսավոր օջախների կյանքի թելը:

Ուսման սերը և դպրոցաշինությունը մեր ժողովրդի արտի տարերքն են եղել:

Գրի և դպրության, գիտության և կրթության նկատմամբ բաց է եղել միշտ հայ ժողովրդի լույսի ծարավի հոգին հազարամյակների ընթացքում. «Մաներո՛ւք, զի որպէս կորուսթին աչաց ստեղի է մարմնոյն, նոյնպէս և տգիտութիւն ոգոյ ստեղի է Աստուծոյ» (Ս. Սահակ Պարթև):

Ահա թե ինչու մեր ժողովրդի զգացմունքների և հավատքի առաջ արբերի շարքն են դասվել նաև «մերոյ լուսատրութեան լուսատր վերակացունները» (Մ. Խորենացի), հայ տր վերջի և դաստիարակության սուրբ գործին նվիրված մտածումի և ոգեկանության մեծ ճարտարապետները, մեր «ուսարուսպետները, դպրապետները», ուսուցիչներն ու մանկավարժները, որոնք թե՛ հայրենի հողի վրա և թե՛ գաղթօջախներում, անցյալի խավար ու մոռալ դարերում, միշտ վառ են պահել հայ ուսման և դաստիարակության ջահը՝ ի գին նահատակության:

Ժողովրդի մեծությունը չի չափվում նրա քանակով, այլ նրա հոգու հարստությամբ, նրա մտավոր լուսավորությամբ, ստեղծարար ճիգերով և պատմական իրագործումներով:

Այդպիսի ժողովուրդներից է եղել նաև մեր ժողովուրդը: Ապրում է այն ժողովուրդը, որ ստեղծագործել գիտի, որ կյանք ու առաջադիմություն է ստեղծում. որովհետև մշակույթը հոգեկան ուժերի գիտակցական ստեղծագործությունն է. և հառաջադիմության ընդունակ մի ժողովուրդ չի՝ կարող մեռնել:

Մեծ են եղել անցյալում մեր ազգային-եկեղեցական տարեգրության և հայ մշակույթի պատմության մեջ. հոգևոր ճեմարանների, վարդապետարանների, ընծայարանների, դպրեվանքների, վանքերի դերը առհասարակ, որոնցում մշակվել, զարգացել և աչքի լույսի պես պահվել-պահպանվել են մեր դարավոր մշակույթի թանկագին գանձերը՝ դպրությունը, արվեստը, գրչագրությունը, մանրանկարչությունը և այլն:

Վանքերում ծաղկած հայ մշակույթը արդյունք էր մեր ժողովրդի հոգևոր բարեպաշտական զգացմունքների և հայ լուսամիտ հոգևորականության վաստակի:

Էջմիածին, Սյունյաց վարդապետարան, Դիլի, Տաթև, Սանահին, Հաղբատ, Նարեկ, Գլաձոր, Ծոռլորի Կարմիր վանք, Հոռմկլա, Սկևռա, Աղթամար, Երուսաղեմ, Սիս, Արմաշ և այլ հոգևոր կենտրոնների անուններ վաղուց անցել են մեր մշակույթի պատմության մեջ: Հոգևոր, մշակութային այդ կենտրոնների մեջ առաջինն է և հնագույնը ս. Էջմիածնի դպրոցը, որպես «արքիոր գիտութեանն Աստուծոյ, մեծ «ուսարմարան»,

«մայր դպրոց» և կամ «գլուխ ամենայն գիտնոց հայոց»:

Մայր Աթոռում վերջին ժամանակներում ևս անցյալի ոգով և օրինակով հոգևորական տիպի բարձրագույն ճեմարան բացելու հարցը մտահոգել է մեր լուսամիտ շատ հայրապետների: Օրինակ, Ներսես Աշտարակեցու (1843—1857) ջերմ ցանկությունն է եղել Մայր Աթոռում բանալ «համալսարան» 200 աշակերտների համար՝ «ի փառս Աստուծոյ, ի պատիւ ս. Լուսատրչին լուսամիալ անուանն և ի պարծանս Մայր Աթոռոյն և ազգի նորաս»:

Սակայն, երջանկահիշատակ Տ. Տ. Գևորգ Դ Կաթողիկոսի (1868—1882) անվան և գործունեության հետ է կապված Մայր Աթոռում Գևորգյան ճեմարանի բացումը, 1874 թվականին:

Գևորգ Դ-ի ծրագրի համաձայն Գևորգյան ճեմարանը կոչված էր մեծ ու պատվավոր դեր կատարելու հայ եկեղեցու և մանավանդ Մայր Աթոռի կյանքում, իր կոչման և պարտականության գիտակից, հավատավոր ու հայրենասեր, բարեկիրթ, բազմակողմանի զարգացած նոր հոգևորականություն պատրաստելու գործում. «Պատրաստել զկուսակրօն եկեղեցականս, բարեկիրթս, քաջահմուտս եկեղեցական և աստուածարանական ուսմանց և յարտաքին կարևոր և կենցաղօգուտ գիտութեանց և լեզուաց, ի պէտս Հայց. եկեղեցոյն», ինչպես նաև ճեմարանի շրջանավարտներից՝ «արժանընտիր պաշտօնեայս» (քահանաներ) և «ուսուցիչս վարժարանացս ազգին»:

Գևորգյան ճեմարանն իր գոյության 45 տարիների ընթացքում պատվով և պատասխանատվության խորունկ գիտակցությամբ կատարեց իր պարտականությունը մեր եկեղեցու ժամանակակից տարեգրության մեջ և հայ եկեղեցուն նվիրեց քարձրաստիճան հոգևորականների փառավոր գիտնական մի սերունդ, որոնց թվում՝ Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյան, Գևորգ վարդապետ Չորեքչյան, Գարեգին վարդապետ Հովսեփյան, մեծանուն Կոմիտաս վարդապետ և ուրիշ արժանավոր հոգևորականներ, ինչպես նաև մեծավաստակ հայագետների, մանկավարժների, պատմաբանների երաժշտագետների, լեզվաբանների, հասարակական հայրենասեր գործիչների մի պատկառելի սերունդ:

Գևորգյան ճեմարանն իր գոյությունը պահեց մինչև 1917 թվականի դեկտեմբերը:

Դառն, ողբերգական ճակատագիր էր վիճակվել նաև Մեծ եղեռնի օրերին մեր հոգևոր ճեմարաններին, դպրեվանքերին:

Փակվել էին նաև մեր երբեմնի ծաղկուն դպրեվանքերը՝ Երուսաղեմի, Արմաշի, Սսի:



ԵՐԶԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Դ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.  
ՀԻՄՆԱԴԻՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ

Ամայացել էին մեր շեն ու պայծառ վանքերը: Հայ հոգևորականությունը, հավատարիմ իր դարավոր ազգային-եկեղեցական ավանդություններին, ի գլուխ իր հավատացյալ հոտին, ապրեց իր պատմության ամենաողբերգական էջերից մեկը: Հովվի արյունը խառնըվեց իր հոտի արյան հետ: Դա մեծ հարված էր հայ եկեղեցու կյանքի և գոյության դեմ:

Մեծ աղետից հետո հարկավոր էր ոտքի կանգնեցնել հայ եկեղեցին, նոր շունչ, ոգի և կենդանություն տալ նրան, նուրազած եկեղեցական շարքերը համալրել նոր ու խոստովանալից ուժերով և հայ եկեղեցին դնել իր հոգևոր կոչման ու հայրենասիրական առաքելության ճանապարհի վրա:

Համաշխարհային պատերազմից հետո հայ եկեղեցու վերականգնման ճիգերը հաջողությամբ պսակվեցին Երուսաղեմում, Անթիլիասում և Կ. Պոլսում:

Գևորգ Զ հայրենասեր և լուսամիտ կաթողիկոսը 1945 թվականի նոյեմբերին բացեց Մայր Աթոռում հոգևոր ճեմարան, որպես հարազատ շարունակությունը երբեմնի Գե-

վորգյան ճեմարանի, մեծ հույսեր կապելով հայ եկեղեցու վերականգնման աշխատանքներում հոգևոր ճեմարանի գոյության և նըպատակների հետ: «Այժմ վստահ կարող ենք լինել,—գրել է նա 1945-ին,—ս. էջմիածնի ճեմարանը, ս. Երուսաղեմի, Տանն Կիլիկիո ընծայարանների հետ, ըստ ամենայնի ի վիճակի կլինեն հայ ժողովրդի հոգևոր եկեղեցական կարիքներն հոգալու»:

Այս տարի, նոյեմբերին, լրանում է հոգևոր ճեմարանի վերաբացման 30-ամյակը, ճեմարան, ուր կյանքի կոչվեցին Գևորգյան ճեմարանի հոգևոր, մշակութային, հայրենասիրական ավանդությունները նոր պայմաններում, նոր պահանջների համաձայն:

Փա՛ռք մեր լուսամիտ, հայրենասեր Հայրապետներին, որոնք ս. Գրիգոր Լուսավորչի օրերից, դարերի միջով, մինչև Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետը, վառ են պահել հայ մշակութային, հայ կրթության և գիտության շահը՝ ի պայծառություն մեր եկեղեցու և ի մխիթարություն մեր հավատացյալ ժողովրդի:





ԿԱՐԱՊԵՏ ՍԱՐԿԱԻԱԳ ՏԵՐ-ՄԿՐՏՉԵԱՆ

ՈՒԽՏԻ ԽՕՍՔ  
ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ Տ. Տ. ԳԷՈՐԳ Դ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ՇԻՐՄԻ ՎՐԱՅ\*

Շիրիմ, որ մեր բարերար Հօր ճշխարներն են ամփոփում. ահիւ և դողութեամբ ենք մօտենում քեզ այս վճռական խորհրդատր պահուս կրկնելու և երեքկնելու մեր ուխտը ուխտ սրբազան հաստատութեան և անբակտելի հաստատութեան. դու մեզ վստահութիւն ներշնչիր մեծ մեծ պարտքերի մի այսպիսի ծանր լուծ քաղցր հեշտութեամբ մեր վերա առնելու: Անձկալից սրտով քեզ ենք կանչում, Վեհին Գեորգայ պանծալի անուն, որ ոսկելէն տառերով մեր կրթութեան դրօշակի վերայ մակագրած՝ տարիներէ ի վեր մեզ ոգևորել, ուղղութեան ճանապարհով մինչև այս կէտն են առաջնորդել, դու և այժմ կնիք եղեր մեր ուխտի համար, արթուն յուշարար մնալով կեանքի ամեն քայլափոխումս թէ որոյ ոգոյ ենք մենք գաւակ. այդ անուամբ գուարթանանք տագնապի թուկէում. այդ անունից երկնչենք, երբ փորձանաց դէր գայթակղութեան թուլութեան որոգայթ մեր առաջը լարէ, և ո՞վ է այն չուտականը, որ սրբութեան քողը կրել համարձակելով այդ անուան արատ բերելուց պիտի չփախչէ:

\* Գեորգյան ճնմարանի հիմնադրության 100-ամյակի առիթով հրատարակում ենք Կարապետ ասրիկավագ Տեր-Մկրտչյանի (ապա հայտնի էպիսկոպոս), գրող Դազարոս Աղայանի և բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանի՝ ճնմարանի դերի և առաքելությանն ճշմանակոյթանը նվիրված հոդվածներն ու հուշերը, որոնք լույս են տեսել «Արարատ» ամսագրում:

Այժմ Հայր, որ անշուշտ դիտում են երջանիկների կայանքից մեր այս գումարումը թող խաղաղեն բազմաշխատ գործերդ, փափագների լեցուած են. հեռատես խորհուրդների կատարումն ընդունած. Քո մեծ գործին արդիւնք, բազմապատիկ խնամոցդ տրիտուր, ահա Տիրոջ սեղանի առաջ ենք դնում մեր սրտերը, մեր հոգին, մեր ամբողջ կարողութիւնը, Նորան լինի ամենը, Նորա տան սպասարարութեան սուրբ գործին նուիրած: Տկար են արդարև ու տարութեր մեր սրտերն ու հոգին, յողդող մեր մտքերը, անհաստատ մեր կամքը. ըստ ամենայնի դուրանաքեայ է և անարժան թերևս մեր այս նուէր, սակայն ամենայն յօծարութեամբ բերած. օրհնիր մեր ուխտը և բարեխօս եղիր Նորա առաջ, որ ոչինչը ինչ դարձնել կարող է, տկարը՝ զօրացնել, անարժանը՝ նուիրագործել և արժանի կացուցանել. Նա տայ մեզ կարողութիւն սրբութեամբ սկսելու և կատարելու:

Հայաստանեայցս Սրբազնագոյն Հովուապետի, մեր մեծագոյն հայրապետաց արժանընտիր յաջորդի ձեռն ենք յանձնում մեր այս սրբազան ուխտի կնիքը, կրկնելով իր առաջ ուխտ մտադիր հնազանդութեան. Նա, որ տէր է ցալով և գաւազանա առաջնորդելու մեր սպասարարութեան գործին, այլ որի աջու աչք գորովագոյթ հայր են խոստանում ամենքին: Անկեայ է նա և անհաղորդ մեր սրբազան ուխտին, որ այդ հայրական գթոյն Վեհութիւնը գնահատել չի իմանալ և կմո-

ուանայ երբէք կամակոր հպատակութեամբ պատրաստ գտնուել մեր հոգևոր Տիրոջ մէն մի հրամանին: Հայոց Հայրիկը, որ ասես մեր երջանիկ նախնեաց շարքից է իջել, հայ կրօնաւորի տիպարը կենդանի օրինակաւ մեր առաջը նկարելու. որի սիրտը միշտ վառ է եղել հայ անուան սիրով կրակով, որի քերականում միշտ կենդանի է եղել սուրբ Աւետարանի ճշմարտութեան խօսքը՝ Նա թող ներշնչէ մեզ այն հոգին, որ մարդկանց հոգիները սիրով կապել, ճշմարտութեամբ ղեկավարել գիտէ: Անտէր ազգի հոգսերի ու վշտերի ծանրութեան ներքոյ անբնականաձև ալիք մեր երիտասարդական անձնապատանուծիւնը մինչև գետին է խոնարհում Ձեր պատկառելի վսեմութեան առաջ, Ձեզ ենք կամենում հետևել հեզ և խոնարհ սրտով, ամբասիր ու բարեբեր մի կենաց առաջնորդ մեզ եղէք:

Օրհնեցէք մեզ և դուք, Սրբազան Հայրեր, ս. Էջմիածնի հնօրեայ միաբանութիւն, ներկայացուցիչ փառաւոր անցեալի և պահպան աւանդական սրբութեանց, որ այսօր կրկին նուիրագործութեամբ ի շարս ձեր դնել յօժարում էք մեր տհաս ոգիքը. ձեր առաջ ենք երեքկնում մեր ուխտը. յարգել անցեալը, ճշմարտութեամբ պահել նուիրական աւանդութիւնները, խոնարհել այն ամեն սրբութեան առաջ, որ մեր պաշտելի նախնեաց անուան ու գործի դրոշմն է կրում. օրհնեցէք և աղօթեցէք, որ այդ հայրերի շաղովն ընթանալ նոր ուժով հին բայց և միշտ նոր, կենդանի, հարազատ և կենդանարար ոգին արծարծել կարող լինենք:

Հասպա դու, Հայոց ժողովուրդ, որ այդպէս հետաքրքիր աչքերով դիտում ես մեզ և պիտ շարունակես դիտել ու քննել մեր իրաքանչիւր քայլափոխը. որ անտուն անտէր գաղթականից սկսած մինչև ճոխ պալատների մէջ գուարնացող մեծատունը թշուառութեանց ու մոլորութիւնների մի ծով ես ներկայացնում, բռնում ես անհամար վերքեր, որոնց սպեղանի, վշտեր, որոնց սփոփում պետք է և մատով ցույց ես տալիս. ահա մեր հովիւներն ու վարդապետները. ահ, ես ճանաչում եմ այդ հայրամքը, դարձուր, տանել չեմ կարող, նա հալում մաշում է իմ երիտասարդ հասակը: Տես ժողովուրդ, հայի արին արցունքը թող լինի մեր ուխտի չորրորդ կնիքը. քո հատաչանքը երբէք դադար չտայ մեզ թմրութեան անկողնի վերայ, ընդոստ վեր ելնենք, Կայենի նման աստանդական շրջենք, եթէ քո ցաւերը տեսնենք ու անտարբեր մնանք. ուղեկցիր և դու մեզ քո մաղթանքներով, Լուսաւորչի Աստուածը չի նիւրհում, Նա քո աղաչանքն էլ կլսէ:

Եւ վերջապէս Դուք, ներկայացուցիչներ մեր ուսուցիչների և դաստիարակների, որ

մեր մանուկ սրտերն ու մտքերը ղեկավարել էք, բարոյ և ուղղութեան շաղի վրայ դրել վերջինը ձեզ ենք յիշում, բայց ոչ ի յետինս, և դուք եղէք մեր ուխտին վկայ և աղօթեցէք, որ ձեր ցանած բարի սերմերը զարգանան և պտղաբերեն:



Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյան


Իսկ դուք Գեորգեան ճեմարանի սիրասուն ասներ, մեր սննդակից եղբայրներ, որ նոյն դաստիարակութեան շաղով ընթանում էք մեր ետևից. նոյն Մասեաց հովն է ձեր կործքերին գօրութիւն տալիս, նոյն սուրբ տեղիք են իրենց հովանին ձեր վերայ սրփում, այս անբակների ոգին ձեզ այժմ տակաին օրօր է ասում. անուշ այդ կազդուրիչ քունը բարեհաջող թող լինի արթնութեան ըրպէն. յուշ ձեզ այն ժամանակ այս պահուն խորհուրդը: Թող շնորհաց ս. Հոգին առաջնորդէ ձեր քայլերը և տայ իրաքանչիւրին, ինչ որ արժան է և Իր բարի կամաց տրամադրութիւնը. սակայն երբ ժամը հնչէ ու այս ուխտի կնիքը նաև ձեր առաջ բացուի. ս. եկեղեցու սպասարարութեան գործին նուիրելու հրաւիրէ. քայլեցէք անվախ, վստահութեամբ դրէք ձեր ձեռքը մահի վերայ և ետ մի նայէք, արտի Տէրը կհոգայ թէ ձեր և թէ իր ցանքի մասին. խոյ մի մնաք միայն այս ժողովրդի հատաչի համար, այս սրբազան տեղեաց խորհրդատր լեզուն հասկանալ տ-


վորեցէք: Այո, այդ լեզուն խօսէ թող այս ժամուն և մեր սրտերում. մեր շնորհատու Մայր Հայաստանեայցս ս. եկեղեցոյ գերագահ Աթոռ և լուսոյ խորան, թող և մեր շուրջ շողայ այն լոյսը, որով յիփացած մեր երանելի նախնիք նահատակութեան ասպարէզ ելան, այդ լոյսը նուիրագործէ մեզ սրբութեամբ մօտենալու ահաւոր խորհրդոյն, քո սպասարոյթեան, քո վերաշինութեան գործի հաստարիմ ծառայութեան արժանի

շնորհքն ընդունելու: Երկնաւոր ճարտարապետ այս հրաշագան տաճարի, Յիսուս, անմահ խաչեցեալ... «Ո՞ տացէ ի Սիոնէ գփրկութիւն Իսրայելի, ի դարձուցանել Տաւռն զգերութիւն ժողովրդեան իրոյ»:


«Զմի խնդրեցի ի Տաւռնէ և զայն աղաչեմ, բնակել ինձ ի տան Տաւռն զամենայն ամուսկենաց իմոց»:

(«Արարատ» ամսագիր, 1894, սեպտեմբեր, էջ 291—292)





ԳԵՎՈՐԳՅԱՆ ԺԵՄՆԱՐԱՆ



ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆ

**ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅԱՆ ՕԾՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ  
ԵՎ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ**

Նախընթաց մայիսի 25-ին բախտավոր գտնվեցանք ականատես լինելու երկու փառավոր հանդիսակատարությանց, որոց մինն էր Նորին Վեհափառության օծման երկրորդ տարեդարձը և երկրորդը՝ տեղվույս կառուցանելի ուսումնարանի հիմնօրհներբը: Առավոտյան ժամերգությունից հետո Արմաշու վանահայր գերապատիվ Գևորգ վարդապետը մի համառոտ, բայց ազդու ատենաբանությամբ շնորհավորեց Նորին Վեհափառության օծման երկրորդ տարեդարձը, հայտնելով յոր վանուց միաբանության կողմից իրանց ամենայն ջերմեռանդությամբ պատրաստ լինելը Նորա ազգաշահ մտադրությունքը և տնօրենությունքը ի կատար հասուցանելու համար, և խնդրելով Նորա միակ քաղցր ակնարկությունը և խրախույսը ի լուսավորություն ազգիս և ի պայծառությունն ս. եկեղեցվո: Ժամից հետո միաբանությունը ժողովեցավ Վեհարանի մոտ, և Նորին Վեհափառության առջև կատարեց մեր նախնյաց սովորական մաղթանքը, որո խորհրդավոր խոսքերը նոր լսողին մի խոր մտածության մեջ էին ընկղմում և երևակայության առջև ներկայացնում մի անցյալ լի փառոք և պատվով, ուրախությամբ և երջանկությամբ...

Մաղթանքից հետո տեղվույս ուսումնարանի հառաջադեմ աշակերտներից միևն կարդաց մի իմաստալից ճառ, և ապա Վեհափառ Հայրապետը Պահպանիչ ասաց,

օրհնեց միաբանությունը և բոլոր հանդիսականներին, որոնք արժանացան Նորին Սրբության աջն համբուրելու և ընդունելու Նորա հայրապետական օրհնությունը:

Ս. պատարագից հետո գնաց Նորին Վեհափառությունը ամենայն ուխտյուք և միաբանությամբ նոր ուսումնարանի հիմնարկությունը օրհնելու: Այստեղ շարական և հոգևոր ընթերցմունք ըստ կարգին կատարելուց հետո Վեհափառ Հայրապետը ինքնին յոր ձեռոք առաջին քարը դրավ, և ապա գաղղիական լեզվի ուսուցիչ Պ. Կ. Ֆոյաջյանը ի դիմաց հանդիսականաց կարդաց ճառ: Տեղվույս ժողովուրդը՝ մեծ և փոքր, արական և իգական, աստիճանավոր և հասարակ, որոնք ներկա էին հանդիսի կատարմանը, ճառը ավարտելուց հետո՝ «Կեցցե մեր Վեհափառը» գոչելով և հրացաններ արձակելով՝ թնդացրին օդը փողահարների հետ ի միասին:

Երեկոյան ճրագալույց էր, և հրեղեն տաներով փայլում էր հետագա գրվածքը, — Կեցցե Գևորգ Դ կաթողիկոս Ամենայն Հայոց:

Հայոց հավատ, Հայոց տուն,  
Կեցցե հավետ հաստատուն:

Ահա այսպես մեծ ուրախությամբ և հրրճվանոք անցուցինք նախընթաց մայիսի 25-րդ օրը, որո որքան նշանակություն ունենալը

մեր հեռավոր ազգակիցներին զգալի կացուցանելու համար, քաղցր է մեզ առաջարկել ճոցա հեռագա խորհրդածությունը։  
Մեկ մարդ այնքան մեծ է, որքան մեծ է նորա օգտավետությունը ընդհանուր մարդ-

ճոցա գործերը անհամեմատ քարձր և ընդարձակ կլիներ և կանցնեն իրենց հանձնված գործունեության ասպարիզի սահմանից։

...Այսպես մարդկության մեջ երբեմն-եր-



Գեղարքյան ճեմարանի 1879—1880 թթ. դասախոսական կազմը՝ շրջապատված մի խումբ ուսանողներով

կության կամ մեկ ժողովուրդի ընդհանրության համար։ Օգտավետությունը գործի մեջ է կայանում և ոչ կոչման։ Կոչումը միայն մեկ միջոց է, որո մարդս կարող է շատ կամ սակավ օգուտ տալու կարողություն և առիթ ունենալ։ Համալսարանական վկայագիր ունեցող մի անձն ավելի միջոց և կարողություն ունի մեծամեծ օգուտներ բերելու, քան թե մի հասարակ դպրոցե ելածը։ սակայն կարող է և ընդհակառակն լինիլ, եթե առաջինը յուր կոչման համեմատ նախապատրաստված չլինի և կամ այնքան բարոյական ձգտումն չունենա, որ կարողանա գործով ապացուցանել յուր կոչման բարձր նշանակությունը։ Այսպես՝ ուսումնական, վարժապետ, քահանա, առաջնորդ, և այլ կոչումներ՝ ավելի բարձր սոցանից՝ առանց գործոց՝ լոկ անուններ են։ և այն ժամանակ կարող են մեծ տիտղոսով պատվիլ, երբ

բեմն գիսավոր աստղերի պես երևցած բարոյասեր, ուսումնասեր և ազգասեր անձինք, որոնք զգացել են, որ մասնավորի բախտավորությունը ապաքախտ ընդհանուրի մեջ ապերջանկություն է միանգամայն և թշվառություն, ամենայն ջանք և ճիգն ի գործ են դրել մերթ բանիվ և մերթ գրով հասկացնել ժողովրդին յուր սեփական իրավունքը, շարժել նորա ինքնագործունեությունը, և իբրև ամենահեշտ միջոց հասնելու այդ նպատակին, մատնացույց են եղել ուսումնարանի վերա։ Ուսումնարանը, այս մարդկային սեռի ջուրն ու հոգին, որից առանց կրկին ծնանելու նորան փրկություն չկա. ի սկզբանե անտի մինչև մեր օրերը մարդատյաց և բռնասեր մարդոց աչքում փուշ է եղել. վասն զի դա է, որ մի ամբողջ ժողովուրդ ստրկության, աղքատության, նախապաշարմանց և հա-

զար ու մեկ քստմեղի հանգամանքների անգութք և զազարառեսիլ նանկերից ազատում և մարդավայել վիճակի մեջ է ձգում: Դա է որ, իբրև մի երկրորդական ավազան՝ մի ազգի բոլոր անդամներին նորեն ծնանում, մի սիրտ և մի հոգի, մի արյուն և մի մարմին է առնում ամենին: Դա է, որ մի ազգի մեջ ցանված չար որոմները ժողովում և այրում է անշեջ հրով. որ հերկում է մի բոլորովին խոպանացած անդաստան, և նախապատրաստում նորան բուսուցանելու այն բարի-բարի սերմերը, որ մեր Արարիչը ի սկզբանե դրել է նորա մեջ և երկայնամտությամբ սպասում է նորա աճելուն և բեղմնավորելուն: Եվ որովհետև միայն գողը կուզե մուտ գիշեր, ձկնորսը պղտոր ջուր, խաբեբան՝ հիմարություն, անգզամբ՝ մոլություն, բռնակալը՝ երկյուղ և ստրկություն, աղվեսը՝ որջ, թռչունը՝ բույն և այլն և այլն, ուսումնարանը գտում, մաքրում է այդ աղտելի և անվայել հատկությունքը, էլ այնուհետև մարդոց մոլությունը սնունդ չի գրտնում և հետևապես անհետանում է մոլությունը. երկիրը երկինք է փոխվում և մարդը Աստված, զի «Որք ընկալանն զնա, ետ նոցա իշխանությունն որդիս Աստուծոյ լինի»:

Այս ամենակարևոր պահանջմունքը քաջ հայտնի լինելով և մեր հասարակաց Հորը, գթառատ և ազգասեր Հայրապետին, յուր վարդապետության օրերը անգամ, ուր որ դրել է իր ոտքը՝ նույն տեղ կառուցել է և ազգային դպրոցներ: Եթե ընդ իշխանությամբ այլոց ժամանակը՝ այս փրկարար հիմնարկությունքը նորա սրտին մոտիկ և սիրելի առարկան է եղած, ո՞րչափ առավել այսօրվան օրս նորա համար սիրելի և փափագելի յուր ազգօգուտ նպատակներին հարմարացուցած ուսումնարանների կառուցումը:

...Այսօրվան օրս մեր ազգությունը քաղաքական չէ, այլ բարոյական: Այսպիսի դրության մեջ ինչ տեսակ մարդոց մեջ ավելի կարոտություն ունինք մենք, եթե ոչ բարեկիրթ, ծրաշան, ազգասեր և անձնակեր հոգևորականների մեջ: Երբեք պատահած չէ, որ մի ազգ ունենալով լուսավոր և գիտնական հոգևորականներ, նա թշվառության մեջ լինի եղած. և սորա հակառակ երբեք պատահած չէ, որ մի ազգ երջանիկ լինի, եթե նորա հոգևորականներից բաղկանում է մի տգետ և խաբեբա դասակարգ: Մարդկության պատմությունը ակներև ցույց է տալիս, որ յուրաքանչյուր ազգ յուր հոգևորականների բարոյապես և մտավորապես անկման հետ ընկնում է, կանգնման հետ՝ կանգնում: Վասն զի ժողովրդի հոգին՝ կյանքը հոգևորականների ձեռին է, նոքա են նորա պաշտպանողը և մատնողը Աս-

տուծո և թագավորի առջև, նոցա հետ կապողը և արձակողը:

Այսպես երբ ազգի հոգևորականք և աշխարհականք ձեռք-ձեռքի տված միաբան սիրով հառաչ են զնում, այդպիսի ժողովրդի թե՛ ոգեկան և թե՛ մտավոր ուժը օրեցօր աճում և զարգանում է և հետևապես հոգևորականք ստանում են իրանց կորցրած նախկին փառքն ու պատիվը:

...Հոգևորականը, որ պիտի լինի բարոյականության դաստիարակ, առաքինության հայելի, որբոց միսիթարիչ, միով բանիվ որ պիտի այն աստիճան հարգ ու պատիվ ունենա յուր ժողովրդի մեջ, որ նորա ձայնը քարանձավներու արձագանք չլինի, նորա խոսքը գետինը չընկնի, այդ համարմունքը պակսեցրել է նա ոչ թե նորա համար, որ ժողովրդի սերը, հավատը ստեղ է, կամ իբր թե աղանդավորները շատացել են, այլ որովհետև մտավոր զարգացման մեջ շատ և շատ հետ է մնացել նա:

Մեր հասարակաց Հայրը, մեր Վեհափառ Հայրապետը՝ նախընթաց մայիսի 25-ին՝ յուր օծման երկրորդ տարեդարձի օրը մի հոյակապ ուսումնարանի հիմն դրավ, որո միակ և եթ նպատակը պիտի լինի տալ մեր ազգին բարոյական և ուսումնական հոգեվորականներ: Ասում են տալ մեր ազգին, որեմն ազգի համար են լինելու այդ հոգեվորականները, ազգի բարօրությանը պիտի ծառայեն: Ուստի կհուսանք, որ ազգը յուր սեփական, յուր անձին վերաբերյալ բոլոր հոգսերը չի բարձիլ մի այնպիսի Հայրապետի վերա, որո շրջակա հանգամանքներին նայելով, բացի Աստուծո միակ ողորմության և ազգի միաբանական սիրով աշխատության՝ ուրիշ բանի վերա կարող չէ դնել յուր հույսը և հետևապես տեսնել հանրաշահ մտադրությանց և ձեռնարկությանց օգտավետ արդյունքը: Այո, նա այսօրվան օրս մեր ազգի պետև և գլուխն է, սակայն, ինչպես արդեն ասացինք, գլուխն ինքն ըստ ինքյան ոչինչ նշանակություն չունի, առանց ամբողջության մյուս անդամների, որ է ազգի ընդհանրությունը և ամբողջությունը, թե՛ մեծ և թե՛ փոքր, թե՛ աղքատ և թե՛ հարուստ, թե՛ աշխարհական և թե՛ հոգևորական: Գլուխը՝ մտածում է, ոտները պիտի երթան՝ ձեռները պիտի գործեն: Կհուսանք որեմն, որ մեր ազգը այս իրեն սրտի ամենամոտիկ հանգամանքի վերա անտարբեր չի նայի, այլ ամենայն կերպով, թե՛ բանիվ և թե՛ մտք, թե՛ բարոյապես և թե՛ նյութապես կաշխատե ի կատար հասուցանել յուր իսկ սրտի խորհուրդները, շնորհիվ յուր Վեհափառ Հայրապետին՝ Գևորգ Դ-ի:

(«Արարատ» ամսագիր, 1869, էջ 25—39՝ քաղվածաբար):



ԳԵՎՈՐԳՅԱՆ ԾԵՄԱՐԱՆԻ ԴԱՍԱԽՈՍ ԵՎ ՍԻՐՎԱԾ ԲԱՆԱՍՏԵՂԾ  
 ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԾԱՌԸ ԾԵՄԱՐԱՆԻ  
 ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅԱՆ 15-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Արքայան հարք և  
 Պատվարժան հանդիսականք.  
 Այս վսեմ օրվան շքեղ հանդեսը կրկին  
 և կրկին անգամ ապացուցանում է թե որ-  
 քան նվիրական պիտի լինին միշտ ամեն մի  
 անկեղծ հայի համար, որքան մոտ մեր ա-  
 մենիս արտին այս հոյակապ հաստատու-  
 թյան երջանկահիշատակ հիմնադրի այն  
 խորհուրդն ու նպատակը, որ այսօր արդեն  
 14 անգամ միացնում է մի այսպիսի հոգևոր  
 գերդաստան այս պատկառելի հարկի տակ:

Ի՞նչ էր արդյոք այդ խորհուրդը. ո՞չ ա-  
 պաքեն այն, որ ավանդաբար դարե դար  
 անցնելով հասել է մեր օրերը, որ հայի  
 պատմական կյանքի գրեթե մեծագույն մա-  
 սի հիմնաքարն է եղել, որով պայմանա-  
 վորվել են մեր ազգային ինքնաճանաչու-  
 թյան պանծալի հաղթանակները և այն բո-  
 լորը, որով մենք այսօր մեզ իրավունք ենք  
 համարում պարծենալու:

Մի գաղափար, որ Լուսավորչից սկսած՝  
 Մեծին Ներսիսի, Սահակա, Մեսրոպա և  
 ուկեղարու մտավոր շարժման բոլոր ա-  
 նաբյալների աշխարհաշեն գործունեության  
 հիմքը լինելով, ոգևորել է այնուհետև Հա-  
 յաստանյայց առաքելական ս. եկեղեցու  
 բոլոր արտացավ Հայրապետներին ու ազ-  
 գի պետերին, որ փրկել է հային՝ բախտի  
 չարանենգ հարվածների ու սուկալի չա-  
 րիքների երեսից, որ միմիայն կարողացել է  
 մեր ազգի գոյությունը պահպանել մինչև  
 լուսավոր դարուս վերջը,—մի այսպիսի գա-  
 դափար անընդուն և այսօր մեր բոլոր հոգե-  
 վոր գործունեության ոգի ու ուղղություն  
 տվողը, մեր բոլոր ձգտումների նպատակը  
 պիտի լինի:

Ո՞վ այսօր կարող է ուրանալ որ հայ ազ-  
 գըն և Հայաստանյայց սուրբ եկեղեցին  
 անբակտելի կապով կապված՝ մի անբաժան  
 միություն պիտի կազմեն, ինչպես միշտ են  
 եղել. որ երկուսի գոյությունն էլ փոխադար-

ձաբար պայմանավորվում են միմյանցով.  
 եկեղեցին է եղել միշտ մեր պատմական  
 կյանքի ալեծուսի ծովի գոռ փոթորիկների  
 երեսից ազատ մնալու միակ նավահանգիս-  
 տը. եկեղեցին է եղել միշտ, որ արձակել է  
 Հայաստան աշխարհի այս ու այն խոռվյալ  
 ծայրերը ավետաբեր աղավնին՝ խաղաղու-  
 թյան ձիթենին կոցին. եկեղեցին է եղել,  
 որտեղից սիրո հրեշտակը դուրս գալով՝  
 լուսավետոր թևերը տարածել է տգիտու-  
 թյան ու ներքին անընդհատ գծտույթանց  
 խավարի մեջ խարխափող երկրի վրա:

Այս է մեր գոյության պատմական, դա-  
 րերով սրբագործված պայմանը,—իսկ  
 պատմական օրինաց դեմ գնալ անպատիժ  
 կերպով չէ կարող և ոչ մի ազգ: Ահա ուրե-  
 մըն և այսօր մեր նշանաբանը՝ մի Հայաս-  
 տանյայց ազգային եկեղեցի, որի վրա է  
 մեր հույսը, որից պիտի ծագե և դեպի փր-  
 կություն առաջնորդող լույսը:

Բայց եկեղեցին վե՞մով չէ եկեղեցի. եկե-  
 ղեցին խորհուրդ ունի միայն ճշմարիտ  
 քրիստոսական սիրով տոգորված, ճշմա-  
 րիտ հավատո լուսով պայծառացած՝ փու-  
 թաջան ուսուցիչներով, որոնք վարդապե-  
 տեին Փրկչի ավանդած աստվածային բա-  
 նը, որ իսկական առաջնորդ լինելով սիրո  
 և լուսո՝ իրանց անձը միշտ պատրաստ լի-  
 նեին դնելու իրանց բանավոր հոտի համար:

Այս է մեր զենքը, այս է մեր փրկության  
 ուղիղ ճանապարհը, այս է այսօր մեր միակ  
 նպատակը, և այս վսեմ խորհուրդը լցուցա-  
 նելու համար է որ երջանկահիշատակ Գե-  
 վորգ Դ Հայրապետը անդով ջանքով աշ-  
 խատեցավ և գլուխ բերեց այս պատկառելի  
 հիմնարկությունը, որի տարեդարձը տոնելու  
 համար այսօր խանդազին սիրով ու բաղ-  
 ձանքով ժողովված ենք այստեղ:

Ի՞նչ ավելի խորհրդավոր, ավելի բարձր  
 նպատակ կարող է լինել մի հաստատու-  
 թյան համար, քան մի ամբողջ ազգի հոգե-

վոր առաջնորդներ, ճշմարիտ գիտության լուսով զինվորված հովիվներ պատրաստե-  
լը և ո՛ր ավելի խորհուրդ պիտի ունենար  
այդպիսի մի հիմնարկություն, եթե ոչ Մայր  
Աթոռի ծոցում, որի վրա են ուղղված ա-  
կրնկալությամբ բովանդակ հայ ազգի աչ-  
քը, որից ամեն բան է սպասում նա: Եվ  
մենք տեսնում ենք որ Հայաստանյայց Ա-  
թոռը յուր սրբազնասուրբ Պետով ամենա-  
ընթուշ խնամատարության առարկա է

մի քաղցր լուծ է որ դնում են նոցա վրա  
ազգն ու եկեղեցին, մենք կարող կլինինք  
ասել թե, իրավի, այս համազգային հաս-  
տատության վրա գործ դրված ջանքերը ի  
դերև չեն ելանում:

Այստեղ, այս հիմնավորց ա. տաճարի հո-  
վանու տակ, ակնոր Մասյաց ստորոտում,  
մի վայրկյան հետ նայենք և տեսենք մը-  
տավոր աչքով, թե ինչ է կատարվել դարե-  
րի ընթացքում այս հողի վրա, ուր մենք ենք



Գևորգյան ճեմարանի դասախոսներից մի խումբ (1903 թ.)

դարձրել այս տաճարը, ոչինչ ջանք չխնա-  
լելով նորա հառաջադիմության և հարա-  
տելության համար: Մի ազգ, մի եկեղեցի,  
մի բարձրագույն ու գիտության տաճար  
(մի գոնե առ այժմ)—ահա թե ինչ պիտի  
միշտ ունենանք աչքի առաջ, ահա թե ինչ  
միշտ անջինջ կերպով տպավորված պիտի  
լինի մանավանդ նոցա սրտում, որոնք վա-  
լելի են և վայելում են այդ նվիրական երեք  
սրբությանց մայրական խնամքն ու հոգա-  
տարությունը: Թող չմոռանան նոքա թե որ  
չափով երախտապարտ են այս շնորհատու  
հաստատությանը, չմոռանան թե ինչ ծանր,  
բայց և քաղցր պարտականություն կա ի-  
րանց վրա—իրանց բոլոր ուժերով, հոգով և  
մարմնով ձգտելու դեպի սրբա վեսմ նպա-  
տակը: Եվ միայն այն ժամանակ էրբ ճե-  
մարանիս սաները քաջ կըմբռնեն թե այս

այժմ կանգնած՝ նայենք թե ինչ աղետալի  
տեսարանների վկա է եղել այս մեզ համար  
պատմական սրբություն դարձած դաշտը.  
տեսնենք ինչ տեղից ենք եկել, ուր պիտի  
գնանք և ինչ ճանապարհով:


Եվ հավատանք որ կգա մի օր, երբ Անու-  
շավանի նվիրական սուսիքը նորից մեղմիկ  
կշշնջեն: Չէ՛ մեռած չէ, դեռ կենդանի է այս  
չարատանջ ազգը. կենդանի է, որովհետև  
հառաջադիմության ընդունակ մի ազգ մեռ-  
նել չէ կարող:

Մաղթենք ուրեմն ի սրտե որ միշտ հաս-  
տատուն, միշտ պայծառ մնան մեր սիրեց-  
յալ ազգն ու եկեղեցին. կեցցե Մայր Աթոռն  
ու Վեհափառ Հայրապետ, կեցցե ճեմա-  
րան:

(«Արարատ» ամսագիր, 1888, էջ 628—680)



# ՎԵՆԱՐԱՆՈՒՄ



ՄԱՄՎԵԼ ԱՆԹՈՍՅԱՆ  
(Հոգևոր ճեմարանի դասախոս, դոցենտ)

## ՀԱՅ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԴԱՐՔՆՈՑԸ

Այսօր ողջ քաղաքակիրթ աշխարհն ընդունում է, որ հայը ուսումնաստենչ է և ստեղծել է համաշխարհային արժեք ու նըշանակություն ունեցող մշակույթ: Այս փառավոր ավանդույթը մեր ժողովրդի մեջ սկիզբ առավ Հայաստան աշխարհ քրիստոնեության մուտք գործելով: «Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»<sup>\*</sup>. այսպես է ընկալել մեր ժողովուրդը քրիստոնեության մուտքը Հայաստան և այն խորհրդանշող ս. Էջմիածնի Մայր տաճարի կառուցման երկնառաք տեսիլքը: Հայ եկեղեցի և լուսավորություն հասկացություններն իրարից անբաժանելի, իրար լրացնող, իրար համահիշ դարձան մեր ժողովրդի գոյության բոլոր դարաշրջաններում: Այս իմաստով բոլորովին պատահական չէր, որ քրիստոնեության ընդունումից միայն մեկ հարյուրամյակ հետո հեռատես հայ հոգիները մեր ժողովրդի գոյատևումը կապեցին լուսավորության, գրի ու դպրության հետ:

Ս. Սահակն ու ս. Մեսրոպը լուսավորության մեծ ծրագիր կազմեցին, դպրոցներ բացեցին, հայկական առաջին դպրոցները,

և առաջիններից առաջինը՝ այստեղ, Էջմիածնում, դպրոցներ, ուր «վարժվում էին հոգեպատում գրքերի քաղցրուսույց ընթերցանությամբ»<sup>1</sup>:

Մեր ուսումնաստենչ նախնիները երկրներ անցան, ծովեր ձեռքեցին՝ իրենց գիտելիքները լրացնելու, ամբողջացնելու համար: Բարձր պատրաստակալությամբ մարդիկ ունենալու նպատակով մեր ժողովուրդը բացվեց դեպի արտաքին աշխարհ, մերոպյան դպրոցի աշակերտները շուտով հմտացան, առնականացան և ձեռք զարկեցին այն ժամանակվա համար իրապես խիզախ և տիտանական մի գործի՝ Աստվածաշնչի և հունա-ասորական դպրության լավագույն նմուշների թարգմանությանը, մի խնդիր, որ կատարեցին պատվով և գերագույն բարեխղճությամբ:

Հայ դպրոցը մեր ժողովրդին տվեց ազգային ինքնագիտակցություն և դարերով ազգային արտահայտություն չստացած՝ մտքի նրբության ու ճաշակի դրսևորման հնարավորություն: Այսպես ստեղծվեց համաշխարհային արժեք ներկայացնող այն մշակույթը, որը կոչվում է հայկական: Մեր մշակույթին քաջաձանոթ օտար գիտնա-

<sup>\*</sup> Ձեկուցում՝ կարդացված Վեհարանում, Գևորգյան ճեմարանի Ցիմնադրության 100-ամյակին նվիրված հանդիսության ժամանակ, 1974 թ. դեկտեմբերի 15-ին: Հրատարակվում է կրճատումներով:

<sup>1</sup> Տե՛ս Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1962, էջ 122:

կանները շատ բարձր են գնահատել նրա առանձին արտահայտությունները:

Ուսումնաստեղությունը հայ իրականության մեջ դարձավ ազգային գեղեցիկ ավանդույթ: Մեսրոպյան դպրոցները հետագայում վերաճեցին աշխարհի այս մասում հռչակված միջնադարյան հայկական համալսարանների և դպրեվանքերի՝ Սյունյաց դպրոցը, Արարատյան նահանգի դպրոցները, Կեչառիս, Հաղբատ-Սանահին, Գլա-

Մայր Աթոռում դպրոց միշտ էլ եղել է պատմական հանգամանքների բերումով՝ երբեմն ընդմիջումներով: Իսկ 1441 թվականից Հայրապետական Աթոռի Էջմիածին վերադարձից հետո, մինչև մեր օրերը, Մայր Աթոռի դպրեվանքը գործել է գրեթե անընդմեջ: Մեր պատմության անցած ժամանակաշրջաններում, Մեսրոպ Մաշտոցից սկսած ընդհուպ մինչև 19-րդ դարի վերջը, հայ դպրության պատվաբեր գործն իր ու-



Գևորգյան ճեմարանի դասախոսների մի խումբ (1902 թ.)

ծոր, Տաթև կնի: Հայաստան աշխարհի պատմական նակատագրին զուգընթաց գիրն ու դպրությունը ծաղկում էին ապրում այս կամ այն «աշխարհում», նահանգում, և այս վտակներից ու գետակներից գոյանում էր հայ դպրության ծովը, որ մինչև մեր օրերն է բերել-հասցրել ծովածավալ մի գրականություն՝ շուրջ 25 հազար օրինակ ձեռագիր մատյաններով: Էջմիածինը հանդիսացավ նաև մայր մատենադարան, ուր 5-րդ դարից սկսած հատիկ-հատիկ հավաքվել էր շուրջ հինգ հազար ձեռագիր մատյան:

սերի վրա վերցրեց եկեղեցին, իսկ Էջմիածինը դարձավ այդ գործի ջահակիրը:

Մեր ժողովրդի, առավելապես արևելահայության համար բախտորոշ նշանակություն ունեցավ Արևելահայաստանի միակցումը Ռուսաստանին:

Էջմիածնի Մայր Աթոռի հովանավորության տակ բարձրագույն դպրոց ունենալու միտքը տասնամյակներից ի վեր ազգային մտահոգության առարկա էր դարձել: Կազմակերպվելիք դպրոցի ինչ-որ չափով նախընթացները կային արդեն: 1816 թ. Մոսկվայում սկսել էր գործել Լազարյան ճեմարանը,

տակայն այն «ակադեմիա կոչումը չկրցավ ընդունիլ, զի Լազարյանց հաստատությունը, ոչ ժողով գիտնականաց ուներ, և ոչ վերին աստիճանի գիտությանց ուսումնարան»<sup>2</sup>: 1824 թ. կանոնավոր գործում էր նաև Ներսես Աշտարակեցու՝ Թիֆլիսում առաջնորդելով ժամանակ հիմնած Ներսիսյան վարժարանը: Մյուս կողմից՝ ըստ 1836 թ. «Պոլիտեմիե»-ի հայ եկեղեցուն իրավունք էր տրվում բացել ծխական դպրոցներ ամեն եկեղեցուն կից, իսկ ամեն թեմում՝ նաև թեմական դպրոց: 1837 թ. բացվեց Երևանի թեմական դպրոցը, իսկ 1838 թ.՝ Շուշու թեմականը:

Դեռևս 1847 թ., Ներսես Աշտարակեցու գահակալության օրոք, Էջմիածնում բարձրագույն դպրոց բանալու համար որոշ քայլեր են արվել: Օրմանյանն այդ մասին ասում է. «Մայր Աթոռո մեջ մեծ ուսումնարան մը ունենալու միտքը շատ հին էր, և վերջին դարուն մեջ ապրող կաթողիկոսներն գրեթե ամենքն ալ մեծագույն փառաքն ունեցան, և իրենց ժամանակներուն ու պարագաներուն համաձայն ձեռնարկներ ալ կատարեցին, բայց գոհացուցիչ արդյունք մը չունեցան» («Ազգապ.», էջ 4240): Մակայն այս բոլոր մնաց որպես ծրագիր: Արևելահայ իրականության մեջ հայկական առաջին բարձրագույն դպրոց բացելու պատիվը պատկանում է Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի (Քերեստեճյան) կաթողիկոսին, որի կենսագիր Մ. Աբելյանը «մեծագործ» մակդիրով է կոչում նրան: Իսկ Օրմանյանը, նրան գնահատելով, գրում է. «Այսօր Գևորգի անունը անհակառակ լավագույն և ընտրելագույն կաթողիկոսներուն մեջ տեղ մը գրաված է» («Ազգապ.», էջ 4457):

Գևորգ Դ կաթողիկոսի կյանքին ու գործունեությանը ծանոթանալիս մեր առաջ հառնում է մի տիպար և ուսումնաստեճ հայ հոգևորական: Նա ծնվել է Պոլսում 1813 թ. հուլիսի 3-ին: Արեղա է ձեռնադրվել 1835-ին: Դեռևս վարդապետ, 1844 թ. կոչվում է Պրուսայի թեմի առաջնորդության, ուր 14 տարի անընդմեջ մնացել է իր պաշտոնին: Եպիսկոպոս ձեռնադրվել է 1848 թ.: 1858 թ. ընտրվում է Պոլսո պատրիարք:

1865 թ. վախճանվել էր Մատթեոս Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսը, և Էջմիածնում գումարված «ընտրողական ժողովը» 1866 թ. սեպտեմբերի 17-ին Գևորգ Կոստանդնուպոլսեցուն ընտրում է կաթողիկոս

Ամենայն Հայոց: Իբրև ժամանակի հասարակական կարծիքի արտահայտություն, Օրմանյանը հետևյալ կերպ է գնահատում ազգի այս որոշումը. «Գևորգի անձն ու ընտրությունը... ընդհանուր համակրության ատարկա էր դարձած, և Գևորգի կաթողիկոսանալը իբր ազգային գաղափարներու հաղթանակ կողջունվեր» («Ազգապ.», էջ 4141):

Նորընտիր կաթողիկոսը Էջմիածին է ժամանում 1867 թ. մայիսի 12-ին, իսկ օծման տեղի է ունենում մայիսի 21-ին: Նույն թվականի հուլիսին հովվապետական այցելության է մեկնում Կովկաս և Ռուսաստան՝ վերադառնալով 1868 թ. փետրվարին: Այդ ուղևորությունը փաստորեն մի հովվական այցելություն էր հայկական թեմերը, «եկեղեցին և դպրոցը բնեղը... ուսման և հայտնության հորդորներ կարդալը» ևս եղել է այդ ուղևորության քաղկացուցիչ մասը:

Մաղաքիս արքեպ. Օրմանյանի գնահատությամբ «գործունյա և արդյունավոր անձ» է եղել Գևորգ Դ-ը և բացառիկ ուշադիր՝ դեպի ուսումնական գործը, իրեն հատուկ է եղել այդ տարերքը, և այրվել է ուսումնական գործի հրաշքով: Նրա ուսումնական ձեռնարկումները ազգային համբավ էին վայելում. Պրուսայի ազգային վարժարանի հիմնումը՝ երկու սեռի մոտ 1000 աշակերտներով, կապված է իր անվան հետ: «Դպրոցական խնդիրը կրճա ըսվի որ իրեն միտքին մեջ սենյակ գաղափարի չափ ամբացյալ էր» («Ազգապ.», էջ 4116):

Գևորգ Դ-ը բաջ ծանոթ է եղել արևելահայության կյանքին և «Պոլիտեմիե»-ին և ներքուստ հավատացած, որ Էջմիածնում կարող է արդյունավորել իր ուսումնական մտահղացումները: Նրա գահակալության օրոք բոլոր հայաբնակ քաղաքներում ու գյուղերում վարժարաններ են բացվում: Այդ գործը առավել լավ հիմքերի վրա դնելու նպատակով 1867 թ. հունիսին Էջմիածնի միաբաններից կազմում է ուսումնական մի հանձնաժողով: Ավելի ուշ՝ 1873 թվին թեմական տեսուչների պաշտոն է հաստատում, մարդիկ, որոնք, իբրև առաջնորդների ուսումնական գծով փոխանորդներ, թեմերում շրջելով, լիազորված էին դպրոցներ բացելու և ուսումնական գործի ընդհանուր դրվածքին հսկելու և օգնելու: Հասկանալի է, որ ուսումնական գործի հանդեպ մասն նախանձախնդրություն ցուցաբերող անձը պիտի աշխատեր նաև ճեմարան բացել: Գևորգ Դ-ը մշակում է մի մեծ ծրագիր. նախ՝ ապահովել իր ձեռնարկի տնտեսական կողմը: 1—2 տարվա մեջ նա հսկայական գումար է գոյացնում, ճեմարանի հա-

<sup>2</sup> Տե՛ս Մաղաքիս արքեպիսկոպոս Օրմանյան, Ազգապատմ, մասն երրորդ, Երուսաղեմ, 1927, էջ 3474: Մ. Օրմանյանից արված հետագա մեջբերումներն այս աշխատությունից են:

մար հանգանակություն է կազմակերպում, որ համաժողովրդական բնույթ է ստանում: Փաստաթղթերը վկայում են, որ ընչազորիկ հայեր նույնիսկ 2 ուրբի, 1 ուրբի գումար են տվել այդ նպատակի համար՝ չուզենալով անմասն մնալ համաժողովրդական այդ մեծ ձեռնարկումից: 1869 թ. մայիսին, իր գահակալության երկրորդ տարեդարձի օրը, «մեծահանդես արարողությամբ» կատարվում է ապագա ճեմարանի հիմնարկերը: Ճեմարանի պաշտոնական անվանումը եղել է՝ **Ժառանգավորաց հոգևոր ճեմարան սուրբ Գևորգյան**. ժողովորդն է այն **Գեվորգյան ճեմարան** կոչել: Դեպքերի անհաշող դասավորումով ճեմարանի շինարարությունը ձգձգվում էր, սակայն Գևորգ Դ-ի անտեղիտայի հաստատակամությունը, ճարտարությունն ու հաստատամտությունը հաղթում են, և 1874 թ. սեպտեմբերի 28-ին, ս. Գևորգի տոնին, կատարվում է ճեմարանի բացումը, և երկու օր հետո շուրջ 60 աշակերտներով սկսվում է կանոնավոր դասավանդումը: Իր կաթողիկոսության շուրջ 20 տարիների ընթացքում Գևորգ Դ-ը յուրովսանն օգտակար է եղել ճեմարանին՝ խելացիորեն հարթելով. մանավանդ, ցարիզմի ոտնձգությունները հայ դպրոցական կյանքի նկատմամբ: Գևորգ Դ-ը վախճանվեց 1882 թ. դեկտեմբերի 6-ին: Ուսումնադաստիարակչական աշխատանքի ամբողջական դրվածքի հետևանքով առաջին տարիների ճեմարանն իր մեջ վերանել է, Օրմանյանի բառերով ասած՝ «ազատ երկրորդական ուսումնարանի», որ աշակերտները կարող էին «ձրի երկրորդական ուսում առնել և ազատաբար դուրս ելլել»: Գոնե Գևորգ Դ-ի ժամանակ «և ոչ մի շրջանավարտ կամ աշակերտ հոգևորականության չհետևեցավ և միաբանության չանդամակցվեցավ» («Ազգայ.», էջ 4242): Աշակերտների թիվը հաջորդ տարիներին շուտով անսպասելիորեն ավելանում է, ուստի 1879 թվին ստիպված են լինում նոր միահարկ շենք էլ ավելացնել՝ որպես ննջարան, ապա և հին և նոր շենքերի միջև մի հիվանդանոց, որպեսզի հիմնական շենքը ամբողջությամբ ուսումնական նպատակով միայն օգտագործվի: Մինչև 1888 թ. ճեմարանավարտ հոգևորական չլինելու պատճառը պետք է բացատրել մանավանդ Գևորգյան ճեմարանում կրոնագիտական առարկաների դասավանդման թույլ դրվածքով և տիպար հոգևորական դասախոս չունենալու հանգամանքով: Այդ է վկայում նաև Օրմանյանը: Մակար Ա կաթողիկոսը Գևորգյան ճեմարանի ուսուցչական կազմը հարստացրեց որակյալ մասնագետներով: Այս մասին Օրմանյանն ասում է. «Բայց

գործի սկսելն է ետքը... հրավիրյալ ուսուցիչներ զգացին, թե ....կրոնական ճյուղը, որ հիմնական և էական է և պետք էր ըլլար հոգևոր ճեմարանի մը համար, իրենց համահավասար և համապարանական ավանդող չունեք, և հազիվ թե սուրբ Գրոց պատմությունը կավանդվեր ստորին դասարաններու մեջ, և բարձրագույն լսարաններու մեջ կրոնական դասեր կպակսեին» («Ազգայ.», էջ 4580): Այս նպատակով Մակար կաթողիկոսի կողմից Մաղաքիա եպս. Օրմանյանը 1887 թ. հրավիրվում է Գևորգյան ճեմարան՝ որպես կրոնագիտական առարկաների դասախոս: Օրմանյանի հմայքի և ազդեցության շնորհիվ հոգևոր կոչում ստանալու ուխտ արեց մի նոր շնորհալի սերունդ, որոնց մեջ էին Կարապետ Տեր-Մկրտչյանը, Արտակ Նահապետյանը, Գեվորգ Չորեքչյանը, Գարեգին Հովսեփյանը, ապա և՛ Կոմիտաս վարդապետը և ուրիշներ, հավատավոր հոգիներ, որոնք հայ եկեղեցու և հայկական դպրության սյուները դարձան:

Գևորգյան ճեմարանում ուսումնառությունն ինը տարի էր՝ 6 տարի դպրոցական և 3 տարի՝ բարձրագույն: Իսկ ինչ վերաբերում է ճեմարանի նպատակներին և խընդիրներին, ապա դրանք սպառիչ ձևակերպված էին ճեմարանի կանոնադրության մեջ, այն է՝ «Ուսումնաարտ աշակերտք ճեմարանիս պարտին ընդունել յատկապես գաստիճան վարդապետութեան և առհասարակ եկեղեցականութեան և նոր ուսուցչութեան ազգային ուսումնարանաց»<sup>3</sup>: Որպես համահայկական ուսումնական հաստատություն, աշակերտների ընտրության հարցում ոչ միայն առավելությունը տրվում էր աղքատ ընտանիքների զավակներին, այլև Թուրքիայից և Պարսկաստանից ընտրված սաներին: Որպեսզի բաշխումը արդար լինի, սահմանվել է հայաբնակ բոլոր վայրերի յուրաքանչյուր 5000 ընտանիքից մեկ չունևորի որդի ընդունել: Այս նորման կրկնակի բարենպաստ պայմաններով կիրառվել է միայն Թուրքիայի և Պարսկաստանի հայության նկատմամբ, մոտ 2700 ընտանիքին՝ մեկ սան: Տեղին է հիշեցնել, որ մեծն Կոմիտասը, դեռևս որպես մի թըրքախոս պատանի, ի թիվս այլ որբերի և կյանքից հալածվածների, Գևորգյան ճեմարան եկավ, գուրգուրանք գտավ, հասունացավ, վանքի միջոցներով Եվրոպայում կրթություն ստացավ և Կոմիտաս դարձավ:

<sup>3</sup> Տե՛ս Միհրան Գամաղեյան, Էջմիածնի Գևորգյան ճեմարան, Երևան, 1965 (դիսերտացիա՝ թեկնածուական աստիճան հայցելու համար ներկայացված):

Լսարանական բաժինը դեռ նոր էր կազմակերպվել, երբ վախճանվեց Գևորգ Դ Հայրապետը: Այնուհետև Գևորգյան ճեմարանի գոյության հետագա տարիներին հաջորդաբար Լուսավորչի զան բարձրացան Մակար Ա Թեղուտցի կաթողիկոսը (1885—1891), Խրիսյան Հայրիկը (1892—1907), Մատթեոս Բ Կոստանդնուպոլսեցին (1908—1910), Գևորգ Ե Սուրենյանց կաթողիկոսը (1911—1930), որոնք ամեն

տություններ, այն մանկավարժություն՝ հարակից բոլոր գիտություններով: Ամուր հիմքերի վրա է դրված եղել ոչ միայն դասական լեզուների դասավանդումը, այլև օտար լեզուների ուսուցումը, մանավանդ գերմաներենը: Գաղափար կազմելու համար նշենք, որ Թ. Ակիլաբեկյանը Կ. Մարքսի «Կապիտալը» թարգմանել է ճեմարանում ուսած գերմաներենի շնորհիվ: Մյուս կողմից՝ պրոֆ. Առաքել Առաքելյանը



Կոմիտաս վարդապետը և Հակոբ Մանանդյանը մի խումբ ճեմարանականների հետ (1904 թ. սեպտեմբեր)

ջանք գործ դրին՝ Գևորգյան ճեմարանը պահպանելու և ուսումնա-դաստիարակչական աշխատանքը ավելի բարձր հիմքերի վրա դնելու համար:

Չափազանց հագեցած է եղել Գևորգյան ճեմարանի ուսումնական ծրագիրը: Այնտեղ դասավանդվել է հայագիտություն ամենալայն առումով՝ գրաբարից մինչև տաղաչափություն, հայ ժողովրդի պատմությունից մինչև հայ գրականության պատմության լրիվ դասընթաց. ուսաց լեզու և ուսագիտությանը վերաբերող մի շարք առարկաներ, նույնպես և կրոնագիտական առարկաներ՝ աստվածաբանությունից մինչև ծիսագիտություն. երաժշտություն՝ եվրոպական, ազգային, հոգևոր: Դասավանդվել են ոչ միայն իրական շատ գի-

ճեմարանում ուսած հին հունարենի շնորհիվ կարողացավ թափանցել հին հունական արվեստի ու գրականության խորությունները: Ուսուցումը տարվել է հայերենով, սկզբում՝ գրաբար լեզվով, իսկ հետագայում՝ արևելահայ գրականով:

Պետք է ասել, որ սկզբում դժվարությունները շատ էին. ուսումնական գործը լավ կազմակերպելու իմաստով ամենից դժվարը հայ իրականության մեջ ճեմարանի դասախոս լինելու արժանի մասնագետների պակասն էր՝ կրթական և կոչման առումով: Գևորգյան ճեմարանը բավական ուշ հասավ երազելի վիճակի՝ այն էլ հիմնականում իր իսկ շրջանավարտներով, որոնք, հավարտ ճեմարանի դասընթացների, Մայր Աթոռի հոգացողությամբ, ժամանակի ել-

րուական և ուսական բարձրագույն հաստատություններն ավարտելուց հետո, վերադարձան ճեմարան և պաշտոնավարեցին որպես դասախոս՝ միաժամանակ ծավալելով գիտա-հետազոտական աշխատանք։

1880-ական թվականների վերջին ճեմարանը մտնում է իր հունի մեջ։ Ուսուցչական կազմի մասին որոշ գաղափար տալու համար նշենք, որ երկար տարիներ հայերենագիտություն էր դասավանդում Ստեփան Պալասանյանը, որն արևելահայ աշխարհաբարի քերականության առաջին հեղինակն է։ Առավել նշանավոր դարձավ նրան աշակերտած Մանուկ Աբեղյանը, որ Գերմանիայում բարձրագույն կրթություն ստանալուց հետո երկար տարիներ ճեմարանի հայերենագիտության պունն էր։

Բարձր հիմքերի վրա էր դրված նաև մանկավարժության դասավանդումը։ Մեր իրականության մեջ առաջին անգամ ճեմարանում է դասավանդվել մանկավարժությունն իր հարակից բոլոր առարկաներով։ Երկար տարիներ ճեմարանում այդ գործը գլխավորել է հայտնի մանկավարժ Սեդրակ Մանդինյանը, որը և հասցրեց իրեն փոխարինող արժանավոր աշակերտներ՝ Գևորգ Էդիլյան, Արշավիր Ծավարչյան և ուրիշներ։ Հայագիտության և մասնավորապես հայերենագիտության ու մանկավարժության դասավանդումը ճեմարանում մյուս առարկաների համեմատ առավել բարձր հիմքերի վրա է եղել։ Ե՛վ մեկը, և՛ մյուսը դասավանդվել են ժամանակի եվրոպական և ուսական բարձրագույն հաստատությունների համապատասխան առարկաների մակարդակով։ Նույնիսկ 1910 թ. Մ. Աբեղյանն ու Գ. Էդիլյանը առաջարկ են ներկայացրել լատինական բաժինը վերակազմավորել համալսարանի մակարդակով հայագիտություն և մանկավարժություն դասավանդելու համար, մի ծրագիր, որը դժբախտաբար ձգձգվեց ու չիրագործվեց՝ ճեմարանի վերահաս անակնկալ լուծարքի ենթարկվելու պատճառով։

Կրոնագիտական առարկաներ դասավանդող պուներն էին Կարապետ Կոստանյանը, Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանը, Գևորգ վարդապետ Չորեքչյանը, Գարեգին վարդապետ Հովսեփյանը, ապա և Գալուստ Տեր-Մկրտչյանը և ուրիշներ։

Տարբեր ժամանակներում ճեմարանում պաշտոնավարել են նաև Ստեփան Մալխասյանը, բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանը, Գարեգին Լեոնյանը, Լեոն, Հրաչյա Աճառյանը, Հակոբ Մանանդյանն ու Աշոտ Հովհաննիսյանը, Կարա-Մուրզան, Կոմիտաս վարդապետը, հայտնի նկարիչներ Վարդգես Սուրենյանը, Եղիշեն Թադե-

վոսյանը, մեծ, անվանի հոգևորականներ, մի խոսքով՝ արևելահայ մտավորականության ընտրանին, որ իրենով լցրեց 19-րդ դարի վերջի հայ կյանքը։ Հետագայում նրանք էին, որ դարձան հայկական առաջին պետական համալսարանի հիմնադիր դասախոսները, իսկ 1943 թ.՝ մեր հայկական գիտությունների կանառի՝ ակադեմիայի հիմնադիր անդամները և շատ իմաստով ցայսօր էլ մնում են գիտական աննվաճելի բարձունքներ իրենց բնագավառում։

Հասկանալի է, որ նման դասախոսական կազմով և ուսումնատեղի աշակերտներով կարելի պիտի լիներ կրթա-դաստիարակական իմաստով մեծ հաջողությունների հասնել։ Եվ իրոք, ճեմարանը տվեց արևելահայ մտավորականության զարդը հանդիսացող և համահայկական ճանաչման արժանացած համբավավոր գիտնականներ, դասախոսներ, հոգևորականներ, որոնք մեր նոր վերածննդի կրթա-դաստիարակչական և գիտական վիթխարի խնդիրները լուծելու հարցում մեծապես օգտակար եղան։ Նրանցից շատերն այսօր էլ մեր շարքերում են...

Պարտք ենք համարում նշել, որ ճեմարանի սաները սննդի, թժկական սպասարկման, տնտեսական այլ հարցերի իմաստով ևս բարվոք վիճակում են եղել։ Alma mater—սնուցող մայր,—այսպես դիպուկ ու սպառնիչ է բնութագրում պրոֆ. Խ. Կանայանը Գևորգյան ճեմարանը։

Գևորգյան ճեմարանն անմասն չէր կարող մնալ ժամանակի հասարակական-քաղաքական դեպքերից և հայությանը պեկոծող խնդիրներից։ Գևորգյան ճեմարանի գոյության ամբողջ ժամանակաընթացքը (1874—1917 թթ.) հայտնի է հայ կյանքի աննախընթաց պեկոծումներով՝ արևմտահայության զանգվածային կոտորածներ, ապա և՛ եղեռն, ցարիզմի ուսականացման քաղաքականություն և հայ ժողովրդի ու եկեղեցու ընդդիմություն, հայ եկեղեցու կալվածքների բռնագրավում և բռնի ուժով հայկական ծխական դպրոցների փակում և այլն, և այլն։ Այս շրջանում է, որ առաջ եկան ոչ միայն հայ կուսակցությունները, այլև հեղափոխական ալիքը Ռուսաստանում, որ և հասավ ծայրամաս, Հայաստան, Երևան, Գևորգյան ճեմարան... Մյուս կողմից՝ Գևորգյան ճեմարան ընդունվելիս ցուցաբերված անխորականության շնորհիվ այնտեղ կային տարբեր կուսակցությունների հարող ընտանիքների որդիներ, որոնք և Գևորգյան ճեմարանից ներս ստեղծում էին իրենց ազդեցության ոլորտները։ Դրանցից շատերն իրենց պատկանած կուսակցություններում հետագայում բարձր դիրքերի հասան։

Տարբեր սկզբունքների և գաղափարների հետևող մարդիկ են եղել նաև ոչ միայն Գեվորգյան ճեմարանի վարչական կազմի, այլև դասախոսների մեջ: Վերատեսուչների մեջ՝ Գաբրիել արքեպ. Ալվազովսկուց մինչև Կ. Կոստանյան և Մ. Բերբերյան, իսկ դասախոսական կազմում՝ Մաղաքիա արքեպ. Օրմանյանից մինչև Աշոտ Հովհաննիսյան և Պողոս Մակինցյան: Այսօր հեռավորությունից մենք կարող ենք ոչ միայն ճիշտ գնահատել աշակերտական ըմբռնությունների հանդեպ տեսչության ձեռք առած միջոցառումները, այլև Գևորգյան ճեմարանը «աշխարհականացնելու» առաջարկների ըմբռնում չգտնելը:


Ուժեղ էր ցարիզմի հսկողությունը նաև Գևորգյան ճեմարանի վրա՝ առավելապես ազգային ոգու ամեն մի արտահայտության հիմաստով: Առավել բնորոշ փաստերից է Մաղաքիա եպս. Օրմանյանի անակնկալ հեռացումը Գևորգյան ճեմարանից ու Ռուսաստանի սահմաններից: Հարկավոր էր գերհկում լինել, Գևորգյան ճեմարանի շահերը վեր դասել ամեն ինչից: Ի դեպ, պետք է խոստովանել, որ ուսանողները ևս գուրգուրել, փայփայել են Գևորգյան ճեմարանը:



Անակնկալ եղավ Գևորգյան ճեմարանի փակումը (1917 թ. դեկտեմբերի 21-ին):

Ծորջ կես դար, 48 ուսումնական տարի, գործեց Գևորգյան ճեմարանը և այդ տարիների ընթացքում այն արևելահայ իրականության տիպար դպրոցի մակարդակի բարձրացավ: Հատկանշական է, որ ժամանակի թեմական և նույնիսկ Ներսիսյան դպրոցն ավարտողներից քչերն են քննու-

թյուն բուն Գևորգյան ճեմարանի լսարանական բաժնում ուսանելու համար: Ուսումնա-դաստիարակչական աշխատանքին զուգընթաց նրա համբավվող դասախոսները գիտա-հետազոտական լայն աշխատանք ծավալեցին, հսկայական քանակի դասագրքեր և գիտական աշխատություններ հրատարակեցին՝ մեծապես հարըստացնելով մեր դպրությունը: Եթե նկատի ունենանք, որ Գևորգյան ճեմարանը 35 տարի կանոնավոր կերպով շրջանավարտներ է տվել, ապա կարելի կլինի պատկերացնել, թե նա ոչ միայն գիտական, մակարդակի, այլև եկեղեցական կարգերի պատրաստման ինչպիսի դարբնոց էր... Գևորգյան ճեմարանում ձեռք բերված ուսումնա-դաստիարակչական փոթիկների փորձը մեծապես օգտակար եղավ մեր նոր դպրոցի կազմակերպման գործում:

1945 թվականին, երջանկահիշատակ Գևորգ Զ կաթողիկոսի ջանքերով, վերաբացվեց այն՝ որպես **ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան**: Նորից լսվեցին հինավուրց ճեմարանի զանգի քաղցրալուր դողանջները... Ահա քսան տարի է, որ հոգևոր ճեմարանը՝ Գևորգյան ճեմարանի կրտսեր եղբայրը, Ամենայն Հայոց Հայրապետ Վազգեն Ա-ի ամենօրյա հոգատարության առարկան է: Նորին Սուրբ Օծությունը, Իր բարձր գահից իջնելով, որպես դասախոս դասավանդում է մեր սաներին՝ իրենց բարոյական նկարագրի կազմավորման համար առավել կարելիորություն ունեցող առարկաներ՝ հոգևոր սնունդ ջամբելով հայորդիներին՝ ի պայծառություն Հայաստանյայց եկեղեցվո և հայ դպրության:





ԽԱՉԱՏՈՒՐ ԿԱՆԱՅԱՆ

**ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ  
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԾԵՄԱՐԱՆԻ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ**

Գևորգյան ճեմարան: Իմ սնուցիչ մա՛յր, կրկին քո գիրկն եմ գալիս հարյուրամյակիդ կապակցությամբ: Քեզ ստեղծող Գևորգ Դ կաթողիկոսին շիրիմին երախտագիտական համբո՛ւյր...

Ճեմարա՛ն... իմ հիշողության մեջ զարթոնում է ճեմարանը իր բովանդակ կյանքով...

1895 թվական: Ցարի հրամանով փակվում են ծխական դպրոցները: Բազմահազար հայ մանուկներ զրկվում են մայրենի լեզվով սովորելու իրավունքից:

1896 թ. սեպտեմբերի սկզբներին ճեմարանի բակն ու միջանցքները լցված են բազում աշակերտներով, որոնք ձգտում են ընդունվել ճեմարան՝ մայրենի լեզվով կրթություն ստանալու համար:

Բացի Հայաստանի շրջաններից, ճեմարան էին եկել նաև արտասահմանի հայկական գաղութներից:

Ճեմարանի վարչությունը հարկադրված էր լայն բացելու ճեմարանի դռները:

Ճեմարանի դպրոցական բաժնում բացվեցին Ա և Բ դասարանները:

Այդ նույն թվականին ես ևս Իգդիրի ծղխական դպրոցից ելա Վաղարշապատ: Իմ եղբայր Ստեփան Կանայանը, որ ճեմարանի դասախոսներից էր, կարճ ժամանակում ինձ նախապատրաստեց քննություններին: Ես ընդունվեցի առաջին դասարան: Դպրոցական բաժինը, որ ուներ չորս տարվա դասընթաց, դարձավ վեց տարվա:

Դպրոցական բաժնն ավարտելուց հետո, ես անցա լսարանական բաժին: Լսարանական բարձրագույն բաժնում ուսման տևողությունը երեք տարի էր: Ճեմարանն ավարտեցի 1905 թվականին:

Հայաշատ քաղաքներում, շրջաններում ե-

կեղեցական կալվածքների գրավման և ծղխական դպրոցների փակման պատճառով տեղի ունեցան ցույցեր: Կառավարությունը ստիպված եղավ փոխել իր հայահաված քաղաքականությունը: Կովկասի փոխարքա նշանակվեց Վորոնցով-Դաշկովը, որի օրոք դպրոցները բացվեցին և կալվածքները վերադարձվեցին եկեղեցուն:

Իմ՝ ճեմարանում եղած ժամանակաշրջանում այնտեղ դասավանդում էին Խ. Աբովյանի որդի Վարդան Աբովյանը, որի դասատըվությունը դժբախտաբար շատ կարճատև եղավ, ընդամենը մի քանի ամիս, բանասեր պատմաբան Ստեփան Կանայանը, որն ավանդում էր նաև գերմաներեն լեզու, Մանուկ Աբեղյանը՝ հայ գրականություն, հայոց լեզու, Սեթ Հարությունյանը՝ հայոց լեզու, հատկապես գրաբար, Գարեգին Լևոնյանը՝ գեղարվեստ, Սիրական Տիգրանյանը՝ եկեղեցական իրավաբանություն, Կարապետ Տերչյանը՝ մաթեմատիկա, Մանանդյանը՝ հին հունարեն, Աճառյանը արևմտահայ պատահիների համար կարդում էր թուրքերեն լեզու, գիտնական մանկավարժ Սեդրակ Մանանդյանը, Եզնիկ վարդապետ Գյանջեցյանը:

Ճեմարանում ավանդում էր նաև հայտնի հայ բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանը: Նա դասավանդում էր ոուսաց լեզու և գրականություն, ընդհանուր գրականություն, այն Հովհաննիսյանը, որի մասին մի գրույցի ժամանակ Ավ. Իսահակյանը ասաց. «Հովհաննիսյանը ո՛չ միայն իմ ճեմարանական ուսուցիչն է եղել, նա եղել է նաև իմ բանաստեղծության ուսուցիչը»:

Ճեմարանի ոգին էր Կոմիտաս վարդապետը: Կոմիտաս վարդապետն իր երգչախմբով

հանդես էր գալիս բոլոր եկեղեցական և ազգային տոներին: Կոմիտասը սիրված էր և՛ աշակերտության, և՛ դասատուների կողմից: Կոմիտասի նկատմամբ որոշակի սեր և գուրգուրանք էր տածում նաև Խրիմյան Հայրիկը, որը Կոմիտասին ուղարկեց Գերմանիա՝ երաժշտության մեջ կատարելագործվելու:



Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանց

Կոմիտասը Գերմանիայում և Եվրոպայի այլ երկրներում հանդես էր գալիս դասախոսություններով, հայրենի երգի ու երաժշտության թեմաներով:

Կոմիտասը վերականգնեց հայկական ազգային երգը՝ մաքրելով այն օտարների ավելորդ ծանրաբեռնություններից:

Հաճախ Թարգմանչաց տոներին ճեմարանի աշակերտությունն իրենց ուսուցիչների առաջնորդությամբ, ոտքով, աշխարհիկ ու հոգևոր երգեր երգելով գնում էին Օշական՝ ուխտագնացության Մեսրոպ Մաշտոցի գերեզմանին:

Արձակուրդների ժամանակ ճեմարանա-

կաններս գնում էինք շրջակա վայրերը. Արտաշատ, Գառնի, Գեղարդ, Իգդիր, Երևան, Սևան, Աշտարակ, ուր հաճախ կազմակերպվում էին ցերեկույթներ, երեկույթներ, կարդացվում դասախոսություններ: Մենք ճեմարանցիներս կապ էին պահպանում Երեվանի գիմնազիոնի և թեմական դպրոցի հետ: Վաղարշապատում կազմակերպված էր օրիորդների գրասիրաց ընկերություն, որոնց նիստերը տեղի էին ունենում Խորեն Խրիմյանի տանը (Խրիմյան Հայրիկի եղբոր որդին), Խորենի դասեր ղեկավարությամբ: Խորենի դուստրը երբեմն դիմում էր ճեմարանցիներին՝ մասնակցելու իրենց նիստերին և դասախոսություններ կարդալու հայոց պատմության և գրականության շուրջ:

Ճեմարանի երիտասարդ ուսուցիչներից շատերն իրենց աշխատանքի ընթացքում դառնում էին գիտնականներ, ինչպես օրինակ Հակոբ Մանանդյանը, որ իրավաբանական կրթություն ուներ և հայերեն վատ գիտեր, ճեմարանի մթնոլորտում դարձավ հայտնի պատմաբան, հայագետ:

Էջմիածնի ճեմարանի սաները հաճախում էին Էջմիածնի շատ հարուստ ձեռագրատուն, օգտվում ձեռագրերից և հաճախ գրում իրենց շարադրություններն ու ռեֆերատները:

Խրիմյան Հայրիկը հատուկ ուշադրություն էր դարձնում ճեմարանին: Երբեմն այցելում էր ճեմարան, աշակերտներին հավաքում հանդիսարան: Խրիմյան Հայրիկը աշակերտության համար կարդում էր իր բանաստեղծություններից:

Ճեմարանի տեսուչներն էին հայագետ գիտնական Կարապետ Կոստանյանը, Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանը, Գարեգին վարդապետ Հովսեփյանը, (հետագայում կայտղիկոս Տանն Կիլիկիո):

Ճեմարանը պաշտոնապես կոչվում էր հոգեվոր ճեմարան, սակայն իրականում ճեմարանում կրոնական առարկաներն ավանդվում էր 5%-ի չափով, գերազանցապես իշխում էին աշխարհիկ առարկաները: Ավանդվում էին ֆիզիկա, քիմիա, մաթեմատիկա, տիեզերագիտություն, հայոց լեզու և գրականություն (աշխարհաբար և գրաբար), ռուսաց լեզու և գրականություն, երգ-երաժշտություն, հունարեն, ֆրանսերեն, գերմաներեն: Օտար լեզուներից գերմաներենը դրված էր բարձր մակարդակի վրա. այդ առարկան ավանդում էին Ստ. Կանայանը և Մ. Արեղյանը: Թադ. Ավդաբեկյանը ճեմարանում ստացած գերմաներենի իմացությամբ թարգմանեց Մարքսի «Կապիտալը» բնագրից:

Հարություն Պետրոսյանը, դեռևս ճեմարանը չավարտած, գերմաներենից թարգմա-

նում էր Թիլերի, Գոթեի բանաստեղծությունները:

Չնայած ճեմարանը հոգևոր էր, սակայն ճեմարանի վարչությունը չէր համոզում կամ հարկադրում ուսանողությանը՝ ստանալու հոգևոր կոչում: Հոգևորական դառնում էին կամավոր:

Օրինակ, 1905 թ. ես և իմ ութ ընկերները ավարտեցինք լսարանական բաժինը, և մեզանից ոչ մեկը հոգևոր կոչում չստացավ:

Ճեմարանի աշակերտությանը սպասավորում էին Մոկաց աշխարհից, Ռշտունյաց երկրից եկած անձինք: Այդ սպասավորներին ճեմարանի լսարանցիներն օգնում էին՝ ուսում ստանալու: Նրանք պարսպում էին սպասավորների հետ հայոց լեզու, հայոց պատմություն այնքան բարձր որակով, որ այդ սպասավորներն իրենց հայրենիքում հաճախ դառնում էին դասատուներ:

Դրանցից կարելի է հիշատակել Նախ քեռուն (Նախ քիճա):

Նախ քեռին մի բանի անգամ գնացել է հայրենի տուն, կրկին վերադարձել ճեմարան:

Նախ քեռին ճեմարանում թելադրել է Մանուկ Աբեղյանին «Սասունցի Դավիթ» էպոսի մի տարբերակ:

Նախ քեռին ղեկավարում և հսկում էր աշակերտության ննջարանների կարգ ու կանոնը, ցուցաբերում էր հայրական հոգատարություն: Հաճախ կարելի էր նրան գիշերները տեսնել աշակերտներին ծածկելիս, հետեվելիս, որ նրանք չմրսեն, և այլն:

Լսարանցիներին իրավունք էր վերապահված նստել մինչև գիշերվա ժամը 12-ը: Այդ ժամանակ մենք խնդրում էինք Նախ քեռուն, որ մեզ համար երգի ու պատմի «Սասունցի Դավիթ» էպոսից:

Ճեմարանն ուներ հատուկ հիվանդանոց ու բժիշկ: Իմ ժամանակվա բժիշկն էր հմուտ և հոգատար Խաչատրյանը:

Ճեմարանի սաների սննդի հարցը կազմակերպված էր շատ լավ. աշակերտներին տրվում էր նախաճաշ, ճաշ, նախընթացիք և ընթրիք՝ բարձր որակով:

Խրիմյան Հայրիկը կարգադրել էր, որ աշակերտները Մեծ պատի ժամանակ պաս պահեն միայն չորեքշաբթի և ուրբաթ օրերին:

Աշակերտներն ըստ ամենայնի շրջապատված էին ծնողական մեծ հոգատարությամբ:

Ճեմարանի աշակերտներից կազմակերպված էր հայրենակցական միություններ, որոնք ճեմարանի պարտեզում ունեին

իրենց մարգերը, որտեղ մշակում էին պեպես ծաղիկներ:

Երբ Հայաստանում հաստատվեցին սովետական կարգեր, ճեմարանավարտները սիրով լծվեցին հայրենակներ աշխատանքի: Նրանցից շատերը դարձան Երևանի բարձրագույն դպրոցների դասախոսներ և Երևանի ու շրջանների միջնակարգ դպրոցների դասատուներ:

Համալսարանում և այլ բարձրագույն դպրոցներում դասախոսում էին Վահան Ռշտունին, Մանուկ Աբեղյանը, Ավետիք Տեր-Պողոսյանը, Հարություն Պետրոսյանը, Միսակ Խոստիկյանը, Գորգեն Էղիշյանը, Սեթ Հարությունյանը, Արշակ Տոնյանը, Թադ. Ավդալբեգյանը, Արսեն Տերտեղյանը, Երվանդ Տեր-Մինասյանը, Առաքել Առաքելյանը, Տիգրան Մելիք-Ստեփանյանը, Մուշեղ Սանթրոսյանը, Վահան Վարդապետյանը, Արշավիր Ծավարչյանը, Գր. Անդրեասյանը, Հակոբ Հարությունյանը, Ավ. Ծողոմրյանը, և նվաստս:

Ճեմարանցիներն աշխատում էին այն վայրերում, որտեղ «Հունձք բազումք էին և մշակք սակաք»:

Ճեմարանցիները գլխավորապես ավանդում էին հայոց լեզու, այն լեզուն, որ մեր հայ ժողովրդի գոյության և հարատևության հենարանն է: Դեռևս Ե դարում Եղիշե մատենագիրը հայոց լեզուն համեմատում է պարսկերենի, ասորերենի, հունարենի և այլ լեզուների հետ: Նրանցից յուրաքանչյուրին տալով դրական գնահատական, հայերենը համարում է «համեղական լեզու», որովհետև հայոց լեզուն հիշյալ լեզուների բոլոր դրական գծերն ամփոփում է իր մեջ:

Ծնորհալի բանաստեղծ Վահան Տերյանը հայոց լեզուն համարում է արքայական լեզու, իսկ հատկապես գրաբարի մասին ասում է. «Ոչ թե գրաբարը լեզու է, այլ երկնային երաժշտություն»:

Թող այդ երկնային երաժշտության դաշլալիկները հավետ հնչեն հայ սերունդների ականջին:


Վերջացնելով խոսքս, իմ խորին շնորհակալություններն եմ հայտնում Վազգեն Ա Վեհափառ Հայրապետին, որ Վեհարանի կամարների ներքո կազմակերպեց ճեմարանի 100-ամյակի տոնակատարությունը:

Լուսավորչի գահի արթուն Պահապանիդ, Վեհափառ Տեր, երկարատև ղեկավարություն և քաջաողջություն:

Թող անպակաս լինի Քո հովանավորությունը նոր ճեմարանի նկատմամբ:

Համբույր սուրբ Աջիդ:





ՄԻՆԵՐԱՆ ԳԱՄԱՂԵԼԻ ԳԱՄԱՂԵԼՅԱՆ

## ԷԶՄԻԱԾՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ ԾԵՄԱՐԱՆ\*

(Ծեմարանի 100-ամյակի առիթով)

Էջմիածինը, սկսած հին դարերից մինչև Հայաստանի խորհրդայնացումը, եղել է մեր մշակույթի և կրթության ամենահարուստ և առաջին օջախներից մեկը: Սկսած 3-րդ, 4-րդ դարերից այնտեղ գործել են դպրոցներ, իսկ 5-րդ դարի սկզբներում բացվել են հայագիր առաջին դպրոցներ, և այնտեղ է սկիզբ առել մեր գրականությունը:

Էջմիածնի թողած կրթական, ուսումնա-դաստիարակչական գործունեությունը մինչև այժմ հանգամանորեն չի ուսումնասիրված և ըստ արժանիույն գնահատված: «Էջմիածինը, որպես հայոց հնագույն հոգևոր կրթության կենտրոն, արժանի է հատուկ ուսումնասիրության»<sup>1</sup>: Իսկ Գևորգյան ճեմարանը այդ կրթական ժառանգության ամենաբարձր գագաթն է, որը պետք է առավել մեծ ուշադրության արժանանա:

Այս իմաստով թեմական դպրոցները երջանիկ են, որ գոնև հոբելյանական տարեթվերի առիթով գտել են իրենց պատմագրողներին:

\* Գևորգյան ճեմարանի հիմնադրության 100-ամյակի առիթով քաղվածաբար հրատարակում ենք որոշ հատվածներ Մ. Գ. Գամաղեյանի «Էջմիածնի Գևորգյան ճեմարան» դիսերտացիոն թեկնածուական աշխատությունից:

<sup>1</sup> Ա. Խ. Մովսիսյան, Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության, Երևան, 1958, էջ 261:

Նման փորձեր երկու անգամ արվել են նաև ճեմարանի նկատմամբ, սակայն չեն իրականացվել:

1899 թվին, երբ լրանում էր ճեմարանի հիմնադրման 25-ամյակը, մանկավարժական խորհուրդը որոշում ընդունեց գրել տալ նրա 25-ամյա պատմությունը: ՀՍՍՌ ԳԿՊ արխիվի ճեմարանի ֆոնդում պահպանվել է այն արձանագրությունը, որի մեջ տրված է նույնիսկ շարադրելու մտապետ ծրագիրը: Բայց թե ինչու չի իրականացվել այդ մտադրությունը, առայժմ մեզ անհայտ է մնում:

Այդպիսի մի ձեռնարկում եղել է նաև 1914 թվին՝ ճեմարանի գոյության 40-ամյակի նախօրեին: Այս անգամ կազմված ծրագիր չի եղել, սակայն առանձնացված է եղել հատուկ հանձնաժողով, որը պիտի գրեր ճեմարանի պատմությունը:

1918 թվի հոկտեմբերի 8-ի և 24-ի մանկավարժական խորհրդի նիստերը նվիրվել են ճեմարանի 40-ամյա հոբելյանն անցկացնելու և նրա պատմությունը գրելու հարցերին:

Ուսուցիչներից ոմանք պահանջել են գրել դպրոցի ներքին և արտաքին կյանքի մասին, ուրիշները խնդիր են դրել անդրադառնալ միայն ներքին կյանքի ամփոփմանը, իսկ Մանուկ Աբեղյանը պահանջել է գրել ընդարձակ պատմություն, նկատի ունենալով դպրոցի ներքին կյանքը, արտաքին հասարակական հարաբերությունները, նրա խաղացած դերը և այլն:

Այս միջոցառումը նույնպես չի իրականացվել: Հոկտեմբերի 24-ի նիստում որոշվել է հետաձգել

փառատունը, նկատի ունենալով, որ 1914 թվին պիտի տոնվեր Երևանի թեմական դպրոցի 75-ամյա հոբելյանը:

Սույն աշխատանքը ձևափոխելով նպատակ ենք ունեցել մեր համեստ ուժերի սահմաններում, նախատվետական շրջանի հայկական դպրոցների ընդհանուր տեսադաշտում, ուսումնասիրել և հրատարակ համել էջմիածնի Գևորգյան ճեմարանի համառոտ պատմությունը:

Ճեմարանի պատմությունը գրելու համար, հիմնականում օգտվել ենք արխիվային փաստաթղթերից, դիմել ժամանակի մամուլին, հրատարակություններին և նախկին ուսանողներին ու դասախոսներին, որոնք մինչև այսօր էլ աշխատում են:

րոնական արխիվին, Մատենադարանին և Գրականության բանգարանին, որ գտանք անպատ ճյուրեր:

Էջմիածինը այն վայրն է, որ հիմնադրվել է մեր սուաշին դպրոցը, որտեղ հայ ժողովրդի զավակներին այրուբեն են սովորեցրել մեր սուաշին ուսուցիչներ ս. Սահակն ու ս. Մեսրոպը:

Էջմիածնում էր, որ սուաշին անգամ հայ մատաղ սերնդի կրթությունն ու դաստիարակությունը ատրական ու հունական լեզվից վերածվեց մայրենի լեզվի, գրության օտար տառերին փոխարինեց հայոց տառը, օտար դպրոցին՝ մայրենին, և օտար դպրոցական սիստեմին՝ հայրենին, սեփականը:

Եթե փոքր ընդմիջումները նկատի չառնենք, ապա



Կոմիտաս վարդապետը և Հակոբ Մանանդյանը ս. Էջմիածնում (1902 թ.)

Հարկ է նշել, որ թեև ճեմարանի պատմությունը ժամանակակիցներն ու հետագա սերնդի ներկայացուցիչները չեն գրել, բայց Մատենադարանում պահպանվել և երկու տարի սուաջ պետական կենտրոնական պատմական արխիվին է հանձնվել մի այնպիսի հարուստ ժառանգություն, որը կարող է գիտության շատ քննազատների աշխատողների հետազոտության առարկա հանդիսանալ:

Միայն արխիվում եղած ճեմարանի ֆոնդի (ֆոնդ 312) հարստությունը պատկերացնելու համար պիտի իմանալ, որ կա շուրջ 75 թղթապանակ, ամեն մի թղթապանակն ունի 30-ից մինչև 200 վավերագիր, ամենափոքր վավերագիրը պարունակում է 50-ից 100, իսկ մեծերը՝ 300-ից 500 թերթ:

1959 թ., երբ մտադրվեցինք ճեմարանի պատմությանը գրադրել, սկզբում գրադրվեցինք տպագիր աղբյուրների ուսումնասիրությամբ: Նախատվետական շրջանի ամսագրերը և այլ հրատարակություններ ու պարբերականներ («Արարատ», «Փորձ», «Մեղու», «Նոր դար», «Դպրոց», «Մշակ» և այլն) ուսումնասիրելուց հետո դիմեցինք պետական կենտ-

կարող ենք ասել, որ այստեղ կաթողիկոսարանին առընթեր, պատմական տարրեր ժամանակաշրջանում, միշտ գործել են տարրական, միջին և բարձր տիպի հայ դպրոցներ:

Էջմիածնի դպրոցները դիտվել են որպես ամենակարևոր, մայր դպրոցներ:

Այդ պատճառով էլ «Էջմիածնի դպրոցը, որպես հայ դպրության սուաջին օջախներից մեկը, մեծ ազդեցություն է ունեցել հայոց ուրիշ շատ դպրոցների վրա»<sup>2</sup>:

Հասկանալի է, որ նրա ազդեցությունն սուաջին հերթին տարածվել է Արարատյան նահանգում գրտնըվող դպրոցների վրա և ապա գնացել ծայրագավառները:

Նրա հետ սերտ հարաբերության մեջ են եղել Օհանավանքի, Սաղմոսավանքի և Եղվարդի դպրոցները:

Ս. Մեսրոպի հիմնադրած դպրոցն էր, որը ճյու-

<sup>2</sup> Նույն տեղ:

դավորվեց, գնաց-հասավ Սյունիք, Տայք, Մոսիք, Ռոտիք, Փայտակարան, Վասպուրական և այլուր:

Նա անեց, գորացավ, ճոխացավ և մեզ տվեց միջնադարում հռչակ վաղեղած Սյունաց և Նարեկա դպրոցները, Սանահին, Հաղբասի, Գլաձորի, Օհանավանքի ճամաչարանները՝ իրենց փիլիսոփաներով, ճարտարապետներով, մաթեմատիկոսներով, տիեզերագետներով, պատմագիրներով, գրողներով, քանաստեղծներով ու այլ բնագավառի գիտնականներով:



Լեո

(Առաքել Բարսիսյանյան)

Էջմիածնի դպրոցը ընդլայնվելով ու նվազելով, մեծանալով ու փոքրանալով, բոլոր տեսակի հաղածանքները կրելով և կամ համակրանքները վայելելով, եկավ-հասավ մինչև 19-րդ դարը, ամենայն իրավամբ կրելով Ժառանգավորաց անունը, որը հետո ձուլվեց Գևորգյան ճեմարանի կրթության փաստափեղ տաճարի և գիտության կաճառի մեջ:

ՀԱՍՌ պետական պատմական արխիվի 57 ֆոնդի № 71 գործի մեջ կա մի փաստաթուղթ, որից երևում է, որ դեռևս 1847 թ. Էջմիածնում բարձրագույն դպրոց բանալու մասին կատարվել են վճռական քայլեր: Հատուկ հանձնաժողովն զբաղվել է դպրոց հիմնադրելու նախապատրաստական աշխատանքներով և ներկայացրել նախահաշիվ: Ըստ այդ նախահաշվի կառուցվելու էր 24 դասատեղյակներով մի ամբողջական շենք: Դասատեղյակներից բացի

շենքն ունենալու էր 29 տարբեր բաժանմունքներ՝ հիվանդանոց՝ 15 սենյակով, խոհանոց՝ 8 սենյակով, բաղնիք և լվացքատուն՝ 8 սենյակով, ու օժանդակ այլ հարմարություններ: Դպրոցն ունենալու էր նաև ստանձինն պետատուն:

Հիշյալ ճեմարանը մնացել է թղթի վրա:

Ճեմարան կառուցելու բախտը, ըստ երևույթին, վիճակվել էր հետագա սերնդին և, իրոք, վաղուցվա փափկացած երազանքն իրականացավ Գևորգ Դ կաթողիկոսի օրոք:

1869 թ. մայիսի 28-ին Մայր տաճարից դեպի հյուսիս-արևելք, մոտավորապես 700 քալ հեռավորության վրա, դրվեց ճեմարանի առաջին հիմնաքարը:

Ճեմարանի շենքի հիմնադրման արարողությանը ներկա է եղել Ղազարոս Աղայանը և իր տպավորությունները գրել «Արարատ» ամսագրի 1869 թ. Բ համարում.

«Նախընթաց մայիսի 25-ին բախտավոր հանդիսակատարությունից, որոնց միմե էր Նորին Վեհափառության օժանդակ երկրորդ տարեպաճը և երկրորդ տեղվոյս կառուցանելիք ուսմամարանի հիմնօրհնությունը»:

«Վեհափառ Հայրապետը ինքն իր ձեռքը առաջին քարը դրավ»:

Էջմիածնի Ժառանգավորաց դպրոցի անգլերեն լեզվի ուսուցիչ Պ. Կ. Ֆոյսաճյանը ճառ է արտասանել: Հավաքված են եղել հոգևոր ու պետական աստիճանավորներ, բազմաճազար մարդիկ: Ցնճությունն ու տոնախմբությունը կատարյալ դարձնելու համար տրվել են հրացանային համազարկեր, ամենուրեք «կեցցե» հռչակել կաթողիկոսին, «ոռա»-նկր քացականչել: Ճեմարանի հիմնադրումը ստացել է համազգային նշանակություն և դարձել տոնախմբության առիթ: Իր հրճվանքն արտահայտելով դպրոցի հիմնադրության մասին, ափսոսանքով պիտի հիշատակել, որ Ղ. Աղայանի նման ժողովրդական մանկավարժը հասարակական հիմունքներով կառուցվելիք այս լավագույն ձեռնարկումը համարել է սուկ հոգևորականության ազգանկեր գործունեության արդյունքը:

«Վասնզի ժողովրդի հոգին՝ կյանքը հոգևորականների ձեռքին է, նոքա են նրա պաշտպանողը և մատնողը Աստծու և թագավորի առջև, նոցա հետ կապողը և արձակողը»:

1869 թ. սեպտեմբերի 28-ին սկսվում է ճեմարանի շենքի կառուցումը: Գևորգ Դ կաթողիկոսը Կ. Պոլսից հրավիրեց ճարտարապետ Հարություն Արզարյանին: Շենքի պատերը նոր էին սկսել բարձրանալ, երբ սպանվում է Արզարյանը: Հրավիրվում է մեկ ուրիշ ճարտարապետ, որը դեպի Էջմիածին ճանապարհին մեռնում է:

Վերջապես ստիպված հրավիրում են Կ. Պոլսի նշանավոր Պալյան ճարտարապետների ընտանիքից սերված Սարգիս Պալյանին:

Ճարտարապետ Սարգիս Պալյանը փոխում է ծածկի ձևը և մտցնում մասնակի բարեփոխություններ: Թափով առաջ է գնում շինարարական աշխատանք-

քը, և 1874 թ. ուսումնական տարվա սկզբին շենքն արդեն պատրաստ էր:

1874 թ. ապրիլի 20-ին Գևորգ Դ կաթողիկոսը ճեմարանի բացմանը նախապատրաստվելու նպատակով հատուկ կոնդակով մարդիկ է գործուղում թեմերն ու վիճակները՝ աշակերտներ արձանագրելու համար:

Վահան վարդապետ Բաստամյանին ուղարկում են Աստրախան, Բեսարաբիա, Նոր Նախիջևան, Մուկվա և Պետերբուրգ:

Գևորգ վարդապետ Սուրենյանին Հանձնարարում են Բեսարաբիայի մի մասը, իսկ Արիստակես եպիսկոպոս Սեդրակյանին՝ Երևանի, Թիֆլիսի, Ղարաբաղի և Շամախու թեմերը:

Նույն նպատակի համար Արևմտյան Հայաստանի և Պարսկաստանի թեմերին ու վիճակներին և մասնավաճ Կ. Պոլսի պատրիարքարանին աուսքում են գրություններ:

Նախատեսել էին ճեմարանում առաջին տարում ընդունել 75 հոգի, որից 48 հոգի Արևելյան Հայաստանից և Ռուսաստանից, 21 հոգի՝ Արևմտյան Հայաստանից, 5 հոգի՝ Պարսկաստանից:

Գործուղված անձանց հանձնարարված էր որոնել, գտնել լավագույն աշակերտներ: Պատվիրակներին հանձնարարված էր նաև կատարել նյութական հսկազանակություն ճեմարանի պահպանության համար. «Բարձրագույն կրթություն ունենալու համար բավական չէր միայն նյութականի մասին հոգալ, քանի որ պատրաստի աշակերտներ հավաքելը նույնպես մեծ ջանք էր պահանջում»<sup>3</sup>:

Այսպիսի դժվար պայմաններում պիտի բացվեր ճեմարանը: Գևորգ Դ կաթողիկոսին մնում էր իր նորարաց դպրոցի համար Էջմիածնի Ժառանգավորաց դպրոցում աշխատող ուսուցիչներից ընտրություն կատարել և օգտագործել միաբանության մեջ գտնվող կարող ուժերին: Կաթողիկոսն այդպես էլ վարվեց:

Առաջին տարվա ուսուցիչներն էին՝ Սուքիաս վրդ. Պարզյանը (միաժամանակ ժամանակավոր վերատեսուչ), որն ավանդում էր հայոց լեզու, Հովհաննես վրդ. Երեմյանը՝ կրոն, Արիստակես վրդ. Սեդրակյանը՝ Հայաստանի պատմություն և աշխարհագրություն, Գևորգ վրդ. Սուրենյանը՝ Ռուսաստանի պատմություն և Ռուսաստանի՝ աշխարհագրություն, Վահան վրդ. Բաստամյանը սկզբում դասավանդել է ռուսաց լեզու, իսկ հետո՝ եկեղեցու իրավագիտություն, Պողոս Ծերպեճյանը ճշանակվել է վերակազմու:

Ճեմարանի ուսուցչական խմբի մեջ հաջորդ տարիներին նոր մարդիկ էին մուտք գործում, նրանց շարքերը համալրվում էին նորավարտ կարող ուժերով:

1881—82 ուս. տարում արդեն հանդիպում ենք հետևյալ անուններին. Արշակ Նահապետյան, Կա-

րապետ Կոստանյան, Սերովբե եպիսկոպոս Արարատյան, Հուսիկ վարդապետ Մովսիսյան, Ղևոնդ վրդ. Հովակիմյան, Փիլիպոս Վարդանյան, Սեդրակ Մանդիկյան:

Ուսուցչական կազմի մեջ փոփոխությունները ստեպ-ստեպ էին տեղի ունենում: 1884—85 ուս. տարում, ճեմարանում դասավանդել են.

Գրիգոր եպ. Աղստիկյան՝ աստվածաբանություն, կրոն և եկեղեցու պատմություն:

Կյուրեղ վրդ. Սրապյան՝ կարգ աստվածաբանություն, եկեղեցական տոմարագիտություն և ռուսաց լեզու:

Ղևոնդ վրդ. Հովակիմյան՝ ձայնագրություն:

Սեդրակ Մանդիկյան՝ տրամաբանություն, քարոզական փիլիսոփայություն և մանկավարժություն:

Ստեփանոս Պալատանյան՝ հայոց պատմություն, ֆրանսերեն:

Փիլիպոս Վարդանյան՝ ընդհանուր և ռուսաց գրականություն, պատմություն և գերմաներեն:

Կարապետ Կոստանյան՝ պատմություն, հայոց մատենագրություն, տեսություն մատենագրության, մեթոդություն Հայաստանի, եկեղեցական մատենագիտություն, Հայաստանի աշխարհագրություն:

Սեդրակ Արարատյան՝ մաթեմատիկա և տիեզերագիտություն:

Գրիգոր Տեր-Գրիգորյան՝ բնագիտություն, բնական պատմություն-բնախոսություն, առողջապահություն և բժշկական գիտություն:

Մարտիրոս Քերեստեանյան՝ գեղագրություն:

Առաքել Սագիյան՝ գծագրություն և նկարչություն: Ռուբեն Ռուբենյան՝ տաճկերեն (տաճկահայատակների համար):

Ուսումնապետ Վահան վարդապետ Բաստամյանի 1878 թ. սեպտեմբերի 30-ի գրավոր զեկուցագրից երևում է, որ աշակերտների թիվը հասել էր 105 հոգու, որից 1-ին դասարանում՝ 15, 2-րդում՝ 28, 3-րդում՝ 25, 4-րդում՝ 25, և 5-րդում՝ 17 հոգի:

1879 թ. աշակերտների թիվը հասավ 135 հոգու: 1881—82 ուս. տարում արդեն գործում էին Ա և Բ լսարանները, աշակերտների թիվը (ուսանողների հետ) կազմում էր 179, որից 21-ը՝ ուսանող: 82—83 թթ. գիշերօթիկ սաների հետ սովորել են նաև երթնեկ աշակերտներ (վերջինները նախկին Ժառանգավորաց դպրոցի աշակերտներն էին): Աշակերտների և ուսանողների ընդհանուր թիվը կազմել է 336, որից 219-ը՝ գիշերօթիկ, և 117-ը՝ երթնեկ:

1890-ական և 1900-ական թվականներից հետո ճեմարանում աշակերտության և ուսանողության քանակական աճը կախված էր հասարակական պայմաններից և ճեմարանի նյութական հնարավորություններից:

1908 թ., 1909 թ. և հետագա տարիների ընթացքում աշակերտների թիվը քարձրացել ու տատանվել է 300, 350—370-ի միջև: 1915—1916—17 ուս. տարիներում նյութական վատ պայմանների հետևանքով սովորողների քանակը նորից նվազել է, իսկ նրա գոյության վերջին ուս. տարում իջել մինչև 150-ի:

<sup>3</sup> ՀՍՄԻ Միմխտրների սովետին առընթեր Մատենադարան, ձեռ. 6717, Վ. Բաստամյան տարեգիր, էջ 212:

Գևորգյան ճեմարանի նյութական լավ և վատ վիճակը կապված էր հայ ազգի նյութական դրության, ժողովրդի հոգատար վերաբերմունքի և ճեմարանի ի նպաստ կատարված նվիրատվությունների հետ: Ծեմարանի շենքի կառուցումից սկսած մինչև աշակերտության սնելու, հագցնելու, դասախոսական կազմին վարձատրելու բոլոր ծախսերը գոյացել են ժողովրդի կողմից տրված հաճախակություններից, նվիրատվություններից, կտակներից:

1887 թ. Գևորգ Դ կաթողիկոսն իր պաշտոնին անցնելուց մի քանի ամիս հետո, ապագա ճեմարանի համար շենք կառուցելու նպատակով, դիմում է թեմերի առաջնորդներին՝ խնդրելով դրամական օգնություն:



Մանուկ Արեղյան

«Ճեմարանի շինությունն սկսելուց առաջ ամենայն պայծառ հայ մարդ յուր նյութական հնարավորությունը կղներ»<sup>4</sup>, գրել է Մարոտայ եպս. Սմբատյանը:

Մոտավոր հաշվումներով միայն 1870—78 թվականներին բոլոր թեմերը հայ ժողովրդից հավաքել և ճեմարանի կառուցման ու հիմնադրման համար ուղարկել են մոտավորապես 224, 500 ու: Եթե սրան ավելացնենք էջմիածնապատկան գյուղերի հարկերը, բոլոր թեմերից ստացված այլ կարգի նվերները (ոսկյա և արծաթյա զարդեր, սպաքներ, իրեր) և

սննդամթերքի բոլոր տեսակները (ցորեն, գարի, մրգեր), հասկանալի կլինի, որ ճեմարանի կառուցումը և պահպանությունը համաժողովրդական գործ է և այն իրավամբ պատկանել է հայ ժողովրդին:

1874 թ. հոկտեմբերի 16-ին, ճեմարանի շենքի հրդեհումից հետո, ամեն կողմից ցույց տրվեց սրտագին օգնություն:

Հրդեհման լուրը «Արարատ» ամսագրի 1874 թ. նոյեմբերի համարում կարդացող յուրաքանչյուր հայ ձգտել է իր նյութական օգնությամբ արագացնել շենքի վերանորոգումը:

1875 թ. Մայր Աթոռի կողմից շնորհակալագրեր են ուղարկված հազարավոր հայերի՝ նրանց ցույց տված օգնության համար: Հետաքրքրականն այն է, որ ունեորների կողքին եղել են նաև չունեորներ, որոնք նույնպես ցանկացել են իրենց չնչին հնարավորություններից բաժին հանել: Միայն արմավիրաբնակ 115 հայ քաղաքացիներից յուրաքանչյուրը տվել է 2 ու, կամ 1,50 ոտրլի, նույնիսկ եղել են անձինք, որ ուղարկել են մեկ ոտրլի կամ 50 կոպեկ:

Նման ձևով կոպեկներ, ոտրլիներ և մեծ գումարներ են նվիրել գրեթե բոլոր վայրերի հայերը, որոնցից համեմատաբար ավելի շատ են օգնել բուն Հայաստանի բնակիչները:

Հնդհանուր կարգի նվիրատվություններից բացի լիայն Երևանի, Ալեքսանդրապոլի թեմերի ասիմաններում գտնվող գյուղացիները շենքի կառուցման ու վերանորոգման ժամանակ սպլերով փոխադրել են որչ շինանյութը, ըստ որում, անտառանյութը տեղափոխվել է 100 կիլոմետր հեռավորությունից:

Մինչև 1899 թ. սեպտեմբեր ամիսը, այսինքն անցած 25 տարիների ընթացքում, տեսուչներին տրվել է 28885 ու. աշխատավարձ, ուսուցիչներին՝ 250478 ու., վերակացուներին՝ 28685 ու., թժշկին՝ 28387 ու., և ծառաներին՝ 31498 ոտրլի: Բոլորը միասին կազմում է 402404 ոտրլի:

Յուրաքանչյուր սովորողի հագուստի և այլ կարգի կարիքների համար կատարված ծախսերը 25 ոտրլուց այն կողմ չեն անցնում: Արդեն հայտնի է, որ ճեմարանի սաների թիվը ամենաշատը չի գերազանցել 360—370-ից, կնշանակի այս նպատակով տարեկան պետք է ծախսված լինեի 8000 ու: Եթե 402404 ոտր. բաժանենք 25 տարիների վրա, յուրաքանչյուր տարվան կհասնի 16016—8000: Ուրեմն ճեմարանի մեկ տարվա բոլոր տեսակի ծախսերը մոտավորապես կազմել են 24016 ու., այն դեպքում, երբ միայն Տիգրանյանի կտակից ստացվել է 10—12 հազար ոտրլի:

Այս կարգի նվիրատվություններ և կտակներ եղել են գրեթե ամեն տարի, իսկ ուրիշ մանր ու մեծ եկամուտներ ստացվել են այնքան, որ հնարավոր չէ բոլորի մասին խոսել:

Գևորգյան ճեմարանին նյութապես օգնելու և պահպանելու գործում մասնակցություն են ունեցել նաև բարեգործական ընկերություններն ու մեծահարուստները՝ վաճառականները, հոգևորականները, կալվածատերերը և ուրիշները:

<sup>4</sup> ՀՄՍԻ ԴԿՊԱ ֆոնդ 57, գործ 259, էջ 8:

վերջիններիս օգնությունը հիմնականում եղել է ճեմարանում սաներ պահելու, ճեմարանավարտ լավագույն սովորողներին արտասահման (կատարելագործվելու համար) գործուղելու, գիտական գրականություն հրատարակելու, գրականություն ձեռք բերելու և նման նպատակների համար:

Մեղիք Հայկազյանը առաջիններից մեկն էր, որ դիմելով ճեմարանի վարչությանը խնդրել էր իր հաշվին մեկ ուսանող ուղարկել արտասահման սովորելու (1888 թ. մայիսի 23-ին մանկավարժական խորհուրդը որոշում է նրա հաշվին Սարգիս Տեր-Գաբրիելյանին ուղարկել Գերմանիա սովորելու): Ավարտելուց հետո նման ուսանողներին պարտավորեցնում էին վերադառնալ և աշխատել ճեմարանում կամ որևէ հայկական այլ դպրոցում:

Ազգային բարերար Մանթաշյանի տրամադրած միջոցների հաշվին Գերմանիա են ուղարկել սովորելու Մանուկ Աբեղյանին և ուրիշներին:

Նման պայմաններով բարերարներ Տիգրանյանի, Ղուկասյանի և ուրիշների ֆոնդերի հաշվին Գերմանիայում են սովորել Գարեգին սարկավագ Հովսեփյանը, Կարապետ սարկավագ Տեր-Մկրտչյանը, Կոմիտաս վարդապետը, Սպիրիդոն Մելիքյանը, Գեվորգ սարկավագ Չորեքչյանը, Երվանդ վարդապետ Տեր-Մինասյանը, Արշավիր Ծավարչյանը, Գևորգ Լդիկյանը և ուրիշներ:

1898 թ. Ռուսաստանի համալսարաններն են գործուղվել երկու ուսանող, այնուհետև հաշվի բարեգործական ընկերության հաշվին Խարկովի, Կիևի, Պետերբուրգի և Մոսկվայի համալսարաններում են սովորել ճեմարանի այլ շրջանավարտներ:

Ճեմարանի բարերարների ֆոնդի հաշվին Մայր Աթոռի տպարանից հրատարակվել են նաև գիտական որոշ գրականություն և դասագրքեր:

Ղուկասյան ֆոնդի հաշվին 1907 թ. հրատարակել են Մանուկ Աբեղյանի «Գրաբարի քերականություն», Արամ Օյթեցյանի «Մանկավարժություն», Ղազարոս Աղայանի «Մայրենի լեզու», Սեդրակ Մանդինյանի «Ռուսաց լեզու» դասագրքերը: Տիգրանյանի ֆոնդի հաշվին քանի անգամ հայտարարված է եղել լավագույն աշխատությունների մրցանակաբաշխություն: Այդպիսի մրցանակաբաշխություններից մեկի ժամանակ, 1899 թ., շահում է Հրաչյա Աճառյանի «Արմատական բառարանը»:

1912 թ. ապրիլի 10-ին մանկավարժական խորհուրդը որոշում է Իզմիրլյանի ֆոնդի հաշվին ստեղծել գիտական հրատարակություն և ամեն տարի հատկապես հայագիտական և գիտական լավագույն աշխատությունները ուսումնասիրել ու հրատարակել: Իսկ 1917 թ. հունվարին, ճեմարանի փակման նախօրյակին, անգամ հայտարարում են լավագույն դասագրքերի մրցանակաբաշխություն: Իհարկե այս ձեռնարկումը գլուխ չի գալիս, որովհետև մի քանի ամիս հետո ճեմարանը փակվում է:

Ճեմարանում աշխատող ուսուցչական կազմը կայունացավ այն ժամանակ, երբ ճեմարանի շրջանավարտներից լավագույններին հրավիրեցին նույն տեղում աշխատելու:

Ճեմարանի լսարանական բաժինն արդեն տալիս էր շրջանավարտներ, նրանց մեջ կային ընդունակ, բանիմաց երիտասարդներ, որոնք խոստումնալից էին թե՛ գիտական պատրաստակամությանը և թե՛ աշխատասիրությանը: Ճեմարանի համար այլևս հարց չէր ուրիշ տեղերից անկատման ուսուցիչներ հրավիրելը:



Հրաչյա Աճառյան

Եթե սկզբում նախկին շրջանավարտներից ճեմարանում հանդիպում ենք Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանին, Սարգիս Տեր-Գաբրիելյանին, Փանոս Վարդանյանին, Լևոն Խոջոյանին, ապա 1894 թվից ավելանում են Սեթ Հարությունյանը, Գևորգ վարդապետ Չորեքչյանը, Հուսիկ վարդապետ Ջոնրաբյանը, Տիգրան Տեր-Հովհաննիսյանը, մի քիչ ուշ՝ Եզնիկ արեղան, Ստեփան Կանայանը, Մանուկ Աբեղյանը, Գարեգին վարդապետ Հովսեփյանը, Փարսադան Տեր-Մովսիսյանը (Մեսրոպ վարդապետ Մագիստրոսը) և ուրիշ շատերը:

Ուսուցչական կազմի կայունացմանը նպաստեց նաև այն, որ շատ գիտնականներ ցանկություն հայտնեցին ճեմարանում աշխատել: Այս շրջանում ճեմարանը, որպես գիտական օջախ, արդեն ճանաչվում էր ոչ միայն Ռուսաստանում բնակվող հայ մտավորականության, այլև արտասահմանի թե՛ հայ և թե՛ օտար գիտնականների կողմից: Կարելի է ասել, որ Գևորգյան ճեմարանը մեծ հռչակ էր վայելում գիտական աշխարհում:

Այժմ առանց ջանքերի գործադրման, ցանկացած լավ մասնագետներին կարելի էր հրավիրել Էջմիածին: Ծառ անգամ իրենք՝ գիտնականները, արձագանքում էին «Արարատ»-ում լույս տեսնող հայտարարություններին և դիմում ուղարկում ճեմարանում ուսուցչական աշխատանք ստանալու համար: Հասկանալի է, որ ճեմարանում նոր ստեղծված պայմանների շնորհիվ հնարավորություն ստեղծվեց գիտությունների զարգացման և ուսուցման համար: Այս շրջանում ճեմարանի համար բոլոր անհրաժեշտ գիտություններն արժանացան պատշաճ ուշադրության:

Ճեմարանում հոգևոր առարկաների դասավանդման որակը լավացնելու համար Մայր Աթոռը և վարչությունը մտահոգված էին մի քանիմասց աստվածաբանության դասախոս ունենալու մասին:

Որպես ադախիսն հրավիրեցին Մաղաքիա եպիսկոպոս Օրմանյանին: 1887 թ. Օրմանյանը ճեմարանում արդեն դասախոս էր: Նա կրոնական առարկաները ամբողջացնելու համար լսարաններում դասավանդում էր աստվածաբանություն (քնական, տեսական և բարոյական), բեմբասացություն, մեկնություն սուրբ Գրոց: Օրմանյան սրբազանը հանդես է բերում մանկավարժական հետադարձում, դրան միացնելով քարոզչական վարդապետությունը, գրավում ուսանողներին և դառնում նրանց սիրելին: Օրմանյանի ազդեցությունն այնքան մեծ էր ոմանց վրա, որ նրա աշակերտներից շատերը հոգևորական դարձան և ճեմարանում նվիրվեցին դասախոսություններ կարդալու աշխատանքներին: Օրինակ՝ Օրմանյանի նախկին աշակերտը՝ Կարապետ Տեր-Մկրտչյանը, գերմանական համալսարաններում կատարելագործվելուց հետո, երբ վերադարձել էր վարդապետ ձեռնադրվելու, որպես կրոնի դասախոս, Օրմանյանի ազդեցությամբ Գևորգ Դ-ի գերեզմանի վրա արտասանում է երախտագիտական մի ճառ, որի մեջ ուխտում է հավատարիմ մնալ իր դասախոսի սկզբունքներին<sup>5</sup>:

Իրոք, սկզբում ուսանող, ապա դասախոս Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանը, Գարեգին վարդապետ Հովսեփյանը, Կոմիտաս վարդապետը և ուրիշները հավատարիմ մնացին հայ ժողովրդին, նրա պատմությանն ու մշակույթին:

Ճեմարանում 90-ական թվերին արտակարգ ծաղկում ապրեց հայագիտությունը: Մանկավարժությունն ու հայագիտությունը կազմեցին ճեմարանի երկու հիմնական ուղղությունները: Իսկ աստվածաբանու-

թյան ուսուցման որակը մեկ բարձրանում էր, մեկ իջնում՝ դասավանդող դասախոսների կարողություններին, պատրաստակամությանը համապատասխան:

Ճեմարանը հասել էր իր լիակատար ծաղկմանը: Բոլոր առարկաներն ունեին անվանի մասնագետ և հմուտ դասախոսներ:

1899—1900 ու. տարում ճեմարանում ուսուցիչներ և դասախոսներ էին այնպիսի մարդիկ, որոնք հիմնականում ճանաչված էին որպես մեր մշակույթի ջահակիրներ: Ահա նրանք՝ Կարապետ վրդ. Տեր-Մկրտչյանը, Գարեգին վրդ. Հովսեփյանը, Կոմիտաս վարդապետը, Եսայի սարկավազը, Գրիգոր սարկավազը, Ստեփան Կանայանը, Մանուկ Աբեղյանը, Մեթ Հարությունյանը, Հովհաննես Բախչյանը, Պետրոս Տիգրանյանը, Գալուստ Թումանյանը, Մարտիրոս Հախնազարյանը, Սիրելյան Տիգրանյանը, Քերովբե Միրաքյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Գևորգ Ղազարյանը, Հակոբ Մանանդյանը:

Հրաշյա Աճառյանն ասելատում էր որպես գրադարանապետ: Այսպիսի մանկավարժական ուժերով հնարավոր էր ցանկացած համալսարանի ուսումնական պահանջները բավարարել:

1914—15 ու. տարում վերստեսույ է հրավիրվում Ստեփան Մաղխապանը, իսկ որպես ուսուցիչներ՝ Տեր-Հակոբյանը, Ստեփանյանը, Աշոտ Հովհաննիսյանը, Կարոյանը, Հովյանը, Հովսեփյանը, Ծավարչյանը, Պետրոսյանը, Կանայանը, Մակիցյանը, Մարգարյանը, Գանչեցյանը, Ավետիք Տեր-Պողոսյանը, Բահաթրյանը, Հազարապետյանը, Ղափանցյանը և մի քանի վերակացուներ:


Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ճեմարանում ստեղծվեցին նյութական ծանր պայմաններ: Դա ազդեց թե՛ ուսուցչական կազմի և թե՛ սովորողների վրա: Առաջ եկան խորը դժգոհություններ:


Գևորգյան ճեմարանը հիմնադրվեց որպես հոգևոր տիպի բարձրագույն դպրոց, և թեև նույն անունով շարունակեց մնալ մինչև վախճանը, սակայն նա միաժամանակ հանդիսացավ 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի առաջին քառորդի հայ մշակույթի ու կրթական գործի կարևոր հաստատություններից մեկը:

1917 թվականի դեկտեմբերի 21-ին փակվում է Գևորգյան ճեմարանը:

Ճեմարանն այն միակ վայրն էր, ուր ստեղծվեցին հիմքեր՝ հետագայում, Հայաստանի սովետականացումից հետո, դպրոցական ցանցն ընդարձակելու և բարձրագույն ուսումնական հաստատություններ հիմնադրելու համար:

<sup>5</sup> Երվանդ Տեր-Մինասյան, Կարապետ եպս. Տեր-Մկրտչյան:





# Ափյուռք

## Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԾՆՈՐՀՔ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԹԻ 1974 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Վերջերս Մայր Աթոռում ստացվեց Կ. Պոլսի ամենապատիվ տ. Ծնորիք սրբազան պատրիարքի 1974 թվականի տարեկան տեղեկագիրը՝ անցյալ տարի, Հայոց Հայրապետի գիտությամբ, արտասահմանի մի շարք թեմեր իր կատարած հովվական այցելության և Կ. Պոլսում ու գավառներում պատրիարքարանի ծավալած կրոնական-եկեղեցական գործունեության մասին:

Տ. Ծնորիք սրբազան պատրիարքի տարեկան այդ տեղեկագրից քաղվածաբար «Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում հետևյալ տեղեկությունները:

1974 թ. սեպտեմբերի 9-ին տ. Ծնորիք սրբազան պատրիարքը ուխտավորաբար ժամանում է Մայր Աթոռ, ուր մնում է մինչև հոկտեմբերի 3-ը, որպես Հայոց Հայրապետի և Մայր Աթոռի թանկագին հյուրը:

«Մայր Աթոռ մնացինք երեք շաբաթներ, — գրում է սրբազան պատրիարքը, — ներկա լինելու համար նաև մեր Վեհափառ Հայրապետի գահակալության 19-րդ տարեդարձի հանդիսությանը և անգամ մը ևս արտահայտելու մեր որդիական սերը և

հարգանքները առ Նորին Ա. Օծություն Տ. Տ. Վազգեն կաթողիկոսն Ամենայն Հայոց Այս կապակցությամբ ևս սրտի պարտք կրահամարենք մեր խոր երախտիքը հայտնել Նորին Սրբություն Վեհափառ Հայրապետին հյուրամեծարության և հոգածու վերաբերմունքի համար»:

Այնուհետև սրբազան պատրիարքը սկսում է արտասահմանյան իր ուղևորությունը՝ անձամբ տանելով Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ողջուններն ու օրհնությունները իր այցելած հայկական համայնքների եկեղեցական-ազգային իշխանություններին և բովանդակ հավատացյալ հայ ժողովրդին:

Հոկտեմբերի 5-ին նորին սրբազանությունն այցելում է նախ Գերմանիայի Ֆրանկֆուրտ քաղաքի հայ համայնք, ուր ապրում են վերջերս հաստատված «մեծ թվով հայեր: Ջանացինք հորդորել ու արտապնդել զանոնք, որ ամուր մնան իրենց հայրենի հավատքին վրա» («Տեղեկագիր»):

Այնուհետև սրբազան պատրիարքը Գերմանիայից անցնում է Բելգիա, «ուրկե ուղղակի գացինք Կալիֆոռնիա, և սկսելով

Լոս-Անճելոսեն այցելեցինք Ֆրեզնո և Սան-Ֆրանսիսքո քաղաքները և շրջակաները, ինչ որ տեղեց լման երկու շաբաթներ: Ամերիկայի արևմտյան թեմի առաջնորդ գերտ. Վաչե եպս. Հովսեփյան մեծապես օգտակար եղավ մեզի՝ ամենուրեք միասին լինելով մեզի հետ, մեր այցելությանը ընթացքին:

Հոկտեմբերի 25-ին արդեն իսկ Դիտրոյթ էինք, որ Ամերիկայի մեր հալաշատ կարևոր կեդրոններեն մեկն է: Այստեղ մենք առիթը ունեցանք հատկապես տեսակցելու Հ. Բ. Ը. միության ցկյանն նախագահ տիար Ալեքս Մանուկյանի հետ, որ առաջին օրեն իսկ մեր այս կրթասիրական և բարեգործական նպատակները բանիվ և գործով քաջալեռող գլխավոր անձնավորություններեն եղավ: Ապա այցելեցինք Գանատայի երկու գլխավոր հայկական համայնքները ի Տոնոնտո և Մոնթեալ, ուր կան Թուրքիայեն նոր գաղթած բազմաթիվ հայրենակիցներ, կանադայեն անցանք ուղղակի՝ Նյու-Յորք, ուր մնացինք գրեթե շաբաթ մը, որու ընթացքին կարճ այցելություն մը տվինք նաև Ֆիլատելֆիա: Նյու-Յորքի մեջ վայելեցինք Ամերիկայի առաջնորդ վեր. տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանի աջակցությունը և հյուրասիրությունը:

Նոյեմբերի 15-ին իջանք Լոնտոն, ուր մնացինք հազիվ երեք օրեր և վայելելե հետև ու. Աարգիս եկեղեցվո հոգևոր տեսչին և Անգլիո հայրապետական պատվիրակ տ. Ներսես եպս. Պոզապայանի և նույն եկեղեցվո խնամակալության հյուրասիրությունը և օժանդակությունը, անցանք Ֆրանսա: Սկսելով Փարիզեն այցելեցինք Լիոն, Վալանս, Մարսիլիա և Նիս: Այստեղ ևս վայելեցինք աջակցությունը Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ գերտ. տ. Սերովբե արքեպ. Մանուկյանի: Նիսի մեջ տեղվույն հովիվը՝ տ. Տարոն վարդապետ և համայնքային վարչության նախագահը՝ տիար Մուշեղ Ծիերճյան մեծապես օգտակար եղան մեզի: Ապա անցանք Միլան, ուր տեսակցեցանք տեղվույն ազգային վարչության պատվո նախագահ տիար Ե. Հյուսիսյանի հետ, որ ուրիշ մեծ հավատավորներեն և օժանդակողներեն մեկն է մեր նպատակին: Օգտվելով առիթեն, կարճ այցելություն մը տվինք նաև Վենետիկի ս. Լազարո վանքը, ուր միօրյա հյուրը եղանք Միսիթարի տան և անգամ մը ևս մտնեն ականատես եղանք Միսիթարյան հայրերու լրիկ, տքնաջան և օգտաշատ մշակութային աշխատանքներուն:

Ամեն տեղ հաղորդեցինք նաև Թուրքիո հայության եղբայրական ողջույնները, ծանոթություններ տալով միաժամանակ մեր

կրոնական և մշակութային կյանքի մասին, շեշտելով անհրաժեշտությունը մեզի գորավիզ կանգնելու, հատկապես զավաններեն հոսող մեր չքավոր հայրենակիցներու տեղավորման ծախսալից, բայց միաժամանակ անհետաձգելի մարդասիրական գործին մեջ:

Մեր վերջին այցելությունը տվինք Հունաստան: Այնտեղ ունինք երկու եկեղեցիներ, մեկը Աթենքի և մյուսը Կրետեի մեջ, որոնք հավատարիմ մնացին Ամենայն Հայոց Հայրապետության, երբ տեղվույն առաջնորդարանը 1958-ին հարեցավ Անթիլիասին: Մենք աշխատեցանք միթոքարել և սրտապնդել տեղվույն օրինապահ հայ համայնքը, և պատկան իշխանությանց այ դիմելով ուզեցինք որ ճանչնան նաև ատենց օրինական հանգամանքը, իբրև նախապես գոյություն ունեցող կրոնական գոյալիճակը հավատարմորեն շարունակող հայ հավաքականություն: Տալը օր ալ Աթենք և Կրետե մնալե հետո դեկտեմբեր 23-ին վերադարձանք մեր Աթոռը, գոհունակ տրամադրությամբ» («Տեղեկագիր»):

Առ այսօր, ըստ պատրիարք հոր տեղեկագրի, Կ. Պոլսում «մեր 34 եկեղեցիները շարունակեցին իրենց հոգևոր մատակարարությունը քաղաքիս շուրջ 50.000 հայության, իսկ զավտի 6 եկեղեցիները՝ շուրջ 20.000 հայության: Տարվույն սկիզբը մեր իրավասության տակ ունեինք 38 հոգևորականներ», որոնցից միայն մեկը եպիսկոպոս՝ հանձին տ. Ծահան եպս. Սվաճյանի: «25 քահանաներ կմատակարարեն իսթանպուլահայ մեր ժողովուրդի հոգևոր կարիքները: Գործի վրա են 15 սարկավագներ մեր զանազան եկեղեցիներու մեջ: Այս տարի ունեցանք մեր 24 եկեղեցիներուն մեջ 702 մկրտություններ, 505 պսակներ և 804 հուղարկավորություններ» («Տեղեկագիր»):

«Մայր եկեղեցին օծովեցավ ընդարձակ և փառավոր սրահով մը, իրեն կից՝ հիմեն ի վեր անգործածելի մնացած գրեթե փլված վիճակի մատնված եկեղեցիի շենքը ներքնապես նորոգելով Կյուպենկյան հիմնարկի օժանդակությամբ: Պեյքոզի եկեղեցին, որուն տանիքը կքած և փլչելու ստույգ վրտանգին մեջ էր, նոր տանիքով մը օծովեցավ, հար և նման նախկինին: Գուրուչեշե մեի ս. Նշան եկեղեցիին տանիքն ալ նորոգություն կրեց. երկուքն ալ՝ տիկ. Աշխեն Խանկյանի նվիրատվությամբ:

Մեր համայնքին հինգ հաստատություններեն հնագույնը և մեծագույնը, ս. Փրկիչ հիվանդանոցը, կշարունակե իր գոյության գործը: Անոր տարվե տարի աճող պլուտոն օրերս հասած է հսկայական և երկյուղալի գումարի մը, այսինքն ավելի քան 14 միլիոն

թրթական լիրայի (ավելի քան մեկ միլիոն տոլարի):

Գալֆայան աղջկանց կացության մեջ ոչ մեկ փոփոխություն մտավ անցյալ տարվան մեջ:

Մեր չքավոր աղջնակները այս երկրորդ տարին է, որ կշարունակեն իրենց դպրոցական և առօրյա կյանքը նախնական և անբավական պայմաններու ներքև՝ առժամյա հյուղակներու մեջ: Աշակերտուհիներու թիվն ալ նախկինին մեկ երկրորդին իջած է՝ տեղի և հարմարության չգոյության պատճառով:

Կեդրոնական վարժարանը 127 աշակերտներով և Գարակյոզյան որբանոցը 189 մանչուկներով կշարունակեն իրենց համայնքային ծառայությունը: Երկուքն ալ այս տարի ունեցան իրենց նոր տնօրենները:


Դպրեվանքը շարունակեց լոկ իր կրթական գործը 136 աշակերտներով: Դժբախտաբար 1974—1975 տարեշրջանի համար նոր արձանագրված 11 աշակերտներ հանված են վարժարանեն՝ կրթական տնօրենության հրահանգով. անոնցմե 7 հատը «Հալերեն չեն գիտեր» պատճառաբանությամբ, իսկ չորսը՝ «Աշակերտ մը պետական վարժարանեն ուրիշ վարժարան չի կրնար փոխադրվիլ» պատճառաբանությամբ:


Հարթայ նահանգեն (Իսկենտերուն) եկող մեր հայ աշակերտներեն ոմանք այս տարի ալ արտոնություն չեն կրցած ձեռք ձգել

կրթական տնօրենությունեն հայ վարժարան հաճախելու՝ պարզապես իրենց անձնագրերուն՝ կամ պետական արձանագրության մեջ «Էրմենի օրթոտոքս» գրված ըլլալուն պատճառաբանությամբ: Մենք այս մասին 14 ապրիլ 1974 թվականին հատուկ բացատրական գիր դրկած էինք կրթական նախարարության, թե լուսավորչական հայեր առհասարակ այդ անունով կճանչցվին արաբական երկիրներու մեջ:

Ըստ պատրիարքական «Տեղեկագիր»-ի, 1974 թվականին Կ. Պոլսի հայոց պատրիարքական Աթոռի «կրոնական գործերը, որոնք կապ չունին Վազրֆներու տնօրենության հետ, ընթացան բնականոն պայմաններու ներքո ըստ նախընթացի»:

Ամեն տ. Շնորհք սրբազանը արտասահմանյան իր այցելությունից վերադարձել է գոհ և լավատես. «Կհաստատենք, — եզրակացնում է Նորին սրբազնությունը, — թե առհասարակ ամեն տեղ դիմավորվեցանք ժողովրդային հասկացողության սքանչելի ոգով մը: Անգամ մը ևս հրապարակավ և գրավորապես կհայտնենք մեր շնորհակալիքը և գնահատանքը առաջնորդներուն, հոգևոր հովիվներուն, եկեղեցական ու համայնքային վարչությանց և ժողովրդային զանգվածներուն, յուրաքանչյուր վայրի մեջ բանիվ բերանո արդեն իսկ կատարել է հետո այդ պարտականությունները»:





# Խաղաղության Դասար

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՔՐԻՍՏՈՆԵՍԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ  
ՄԱՅՐ ԱԹՈՒ Ա. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Սույն թվականի փետրվարի 24—28-ը, Ամենայն Հայոց կաթողիկոս Ս. Տ. Վազգեն Ա-ի հրավերով, Մայր Աթոռ ու Էջմիածնում գումարվեց Խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսի միջազգային քարտուղարության 1975 թվականի առաջին նստաշրջանը:

## ԺԱՄԱՆՈՒՄ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ

Փետրվարի 24-ին, երկուշաբթի օրը, ժամը 20-ին, Երևան ժամանեց Խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսի միջազգային քարտուղարությունը, որի կազմում էին քարտուղարության անդամ հանդիսացող Սովետական Միության, Բուլղարիայի, Ռումինիայի, Չեխոսլովակիայի, Հունգարիայի, Գերմանական Դեմոկրատական Հանրապետության, Կուբայի, Լեհաստանի, Հոլանդիայի, ԱՄՆ-ի, Ծրի-Լանկայի և Սիեռա-Լեոնեի եկեղեցիների, կրոնական, հասարակական կազմակերպությունների թվով 26 ներկայացուցիչներ՝ հոգևորական և աշխարհական:

Երևանի օդանավակայանում հարգարժան հյուրերին դիմավորեցին և բարի գալուստ մաղթեցին Ծիրակի յեմի առաջնորդ տ. Նարեկ եպիսկոպոս Շաքարյանը, Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար Պարգեվ Շահբազյանը, տ. Թորգոմ արեղա Մու-

շեղյանը և Սարգիս սարկավագ Սարգսյանը:

Հյուրերը առաջնորդվեցին Երևանի «Արմենիա» հյուրանոց:

## ԱՂՈԹՔ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Փետրվարի 25-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 9-ին, մեծարգո հյուրերը ժամանեցին Մայր Աթոռ: Մայր տաճարի մուտքի առջև, հանուն Հայոց Հայրապետի, նըրանց ողջունեց և բարի գալուստ մաղթեց լուսարարապետ տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթրոյանը: Մայր տաճարի Իջման ս. սեղանի առաջ իրենց աղոթքն անելուց հետո Միջազգային քարտուղարության բոլոր անդամները ներկա եղան Արևազայի հանդիսավոր ժամերգությանը:

## ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ

### Առաջին նիստ

Առավոտյան ժամերգությունից հետո հարգարժան հյուրերը առաջնորդվեցին Վեհարանի այն կահավորված հատուկ դահլիճը, ուր տեղի էին ունենալու ժողովի նիստերը:

Ժամը 10-ին Վեհափառ Հայրապետը մուտք գործեց դահլիճ՝ ուղեկցությամբ տ. Հուսիկ, տ. Հմայակ, տ. Նարեկ, տ. Գևորգ,

տ. Արիս եպիսկոպոսների, և հյուրերի կողմից ընդունվեց ծափողջույններով:

Խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսի միջազգային քարտուղարության 1975 թվականի առաջին նստաշրջանը բացվեց Հայոց Հայրապետի օրհնությանը և խմբովին արտասանված Տերունական աղոթքով:

**ՈՂՋՈՒՅՆԻ, ԲԱՐԻԳԱՍՏՅԱՆ ԵՎ ՇՆՈՐՀԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ**

Նստաշրջանի բացման աղոթքից հետո բարիգալստյան և ողջույնի ուղերձով հանդես եկավ Հայոց Հայրապետը: Նորին Սրբությունն իր խոսքի մեջ նախ շեշտեց, որ Միջազգային քարտուղարության սույն նրստաշրջանը, առաջին անգամ լինելով, գումարվում է հայ եկեղեցու պատմական կենտրոն Մայր Աթոռ ս. Էջմիածնում, որը անցյալում միշտ աղոթել է վասն խաղաղության ամենայն աշխարհի և դարերի ընթացքում առատորեն թափել իր արյունը՝ Ավետարանի պատգամների ճշմարտության վկայության համար, երբեմն նույնիսկ հավաքական նահատակությանը, ինչպես այդ տեղի ունեցավ Ավարայրի ճակատամարտում 451 թվականին զրադաշտական Պարսկաստանի դեմ Վարդանանց հեղոսամարտով և ապա հետագա դարերի ընթացքում, մինչև 1915 թվականի Ապրիլյան ցեղասպանությունը, ցեղասպանություն, որի 60-ամյակը լրանում է այս տարի, ապրիլին, միշտ ի պաշտպանություն քրիստոնեական հավատի և քաղաքակրթության արժեքների:

Այնուհետև Հայոց Հայրապետը ողջույնի իր խոսքի մեջ բարձր գնահատական տվեց Խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսի կատարած խաղաղասիրական, մարդասիրական գործունեությանը, որը, այս օրերին մանավանդ, մեծ նշանակություն է ստանում նրանով, որ Սովետական Միության բոլոր ժողովուրդները, աշխարհի առաջադեմ և խաղաղասեր ժողովուրդների հետ միասին, պատրաստվում են նշելու ֆաշիզմի դեմ տարված հաղթանակի 30-ամյակը: Այս առթիվ Հայոց Հայրապետը նշեց, որ չափազանց նշանակալից է այն հանգամանքը, որ Միջազգային քարտուղարությունը 1975 թվականի իր առաջին նրստաշրջանը գումարում է Սովետական Միությունում, Սովետական Հայաստանում, սուրբ Էջմիածնի կամարների ներքո:

Իր ուղերձի ավարտին Հայոց Հայրապետը բարի գալուստ մաղթեց Միջազգային քարտուղարության անդամների՝ Մայր Աթոռ ժամանման առիթով և հաջողություն ցանկացալ նրանց՝ համայն աշխարհի խաղաղության, մարդկության քարօրության և

ազգերի եղբայրության վսեմ նպատակին ուղղված քարտուղարության գործունեության ճանապարհին:

Հայոց Հայրապետի ողջույնի և բարիգալստյան այս սրտագին խոսքերն ու ջերմ մաղթանքները երախտագիտական զգացումներով և ծափողջույններով ընդունվեցին ներկաների կողմից:

Այնուհետև, ի պատասխան Ամենայն Հայոց Հայրապետի ողջույնի խոսքի, քարտուղարության անունից երախտագիտության և շնորհակալության խոսքով հանդես եկավ Խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսի գլխավոր քարտուղար դոկտոր Կարոյի Տոթը:

Գլխավոր քարտուղարն իր խոսքի մեջ մասնավոր կարևորությամբ անդրադարձավ, որ Հայոց Հայրապետի ջերմ հրավերով Միջազգային քարտուղարությունը 1975 թվականի իր առաջին նստաշրջանը գումարում է հայ եկեղեցու պատմական ու հնադարյան կենտրոն ս. Էջմիածնում: Այնուհետև դոկտ. Կարոյի Տոթը ջերմ շնորհակալություն հայտնեց Հայոց Հայրապետի կողմից եղած այս հրավերի և սրտաբաց ընդունելության, ինչպես նաև այն բացառիկ պատեհության համար, որով քարտուղարության անդամները առիթը պիտի ունենան ծանոթանալու Մայր Աթոռի և Հայոց Հայրապետի գործունեությանը և մտիկից ճանաչելու բիբլիական Արարատի այս հողի վրա ապրող ու ստեղծագործող հայ ժողովրդի հերոսական պատմությունը և նրա ժամանակակից քարգավաճ կյանքը:

Իր խոսքի ավարտին դոկտ. Կարոյի Տոթը ջերմ երախտագիտություն և շնորհակալություն հայտնեց Հայոց Հայրապետի՝ և Մայր Աթոռ ս. Էջմիածնի՝ խաղաղության ի նպաստ բերած բարոյական և նյութական աջակցության համար, խաղաղության շարժման ստեղծման առաջին իսկ օրերից:

Վերջում դոկտ. Կարոյի Տոթը Ամենայն Հայոց Հայրապետին ներկայացրեց Միջազգային քարտուղարության ներկա եղող անդամներին՝ իրենց անուններով և հանգամանքներով:

Բարիգալստյան և ողջույնի փոխադարձ խոսքերից հետո Միջազգային քարտուղարությունը, ըստ նախապես պատրաստած իր օրակարգի, անցավ իր աշխատանքներին:

**ՋԵԿՈՒՑՈՒՄ «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌՈՒՔԵԼԱԿԱՆ ԵՎԵՂԵՑԻՆ ԵՎ ՆՐԱ ԱՌՈՒՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՍՆ ԱՇԽԱՐՀԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ» ԹԵՄԱՑՈՎ**

Համաձայն Միջազգային քարտուղարության կազմած օրակարգի, առաջին նիստում հատուկ զեկուցում էր նախատեսված

«Հայաստանյայց առաքելական եկեղեցին և նրա առաքելությունը վասն աշխարհի խաղաղության» թեմայի շուրջ: Գրավոր զեկուցումով հանդես եկավ Օիրակի թեմի առաջնորդ տ. Նարեկ եպիսկոպոս Շաքարյանը: Սույն ճառի տեքստը, որը նախապես թարգմանված էր ռուսերեն և անգլերեն լեզուներով, բաժանվեց ժողովականներին:

Հայրապետի խաղաղասիրական գործունեության վրա՝ շեշտելով, որ Նորին Սրբությունը գործն մասնակցություն է բերել, ի գլուխ հայ եկեղեցու պատվիրակությունների, միջազգային համաժողովների խաղաղասիրական աշխատանքներին:

Տ. Նարեկ սրբազանի զեկուցումը եզրափակվեց խաղաղության նշանակության մա-



Հայոց Հայրապետի ողջույնի խոսքը Վեհաբանում Միջազգային քարտուղարության նստաշրջանի բացման առթիվ

իր զեկուցման սկզբին տ. Նարեկ սրբազանը համատոտակի խոսեց Հայաստանյայց եկեղեցու առաքելական ծագման, դավանության, ժողովրդավարական վարչաձևի, նրա նվիրապետական կառույցի, արդի վիճակի, ինչպես նաև հայ ժողովրդի կյանքում նրա կատարած հոգևոր, մշակութային ու հայրենասիրական մեծ դերի և նշանակության մասին:

Այնուհետև զեկուցման մեջ հանգամանորեն խոսվեց 1949 թվականին, խաղաղության շարժման ստեղծման առաջին իսկ օրերից, Մայր Աթոռ ս. Էջմիածնի գլխավորությամբ երջանկահիշատակ Տ. Գևորգ ՉԱմենայն Հայոց Հայրապետի խաղաղասիրական գործունեության մասին: Զեկուցողը մանրամասնորեն կանգ առավ նաև 1955 թվականից սկսած Տ. Տ. Վազգեն Ա Հայոց

սին խորհրդածություններով և Միջազգային քարտուղարության անդամներին ուղղված քարիզալստյան հետևյալ խոսքերով:

«Ինչպես բովանդակ մարդկությունը, այնպես էլ հայ հավատացյալ ժողովուրդը հասկանում են խաղաղության պաշտպանության կենսական անհրաժեշտությունը: Պայքարը, հանուն խաղաղության և մարդկային իրավունքների ճանաչման, սրբազան պարտքն է Աստուծո պատկերով ստեղծված ամեն անհատի: Մենք հավատում ենք, որ հայ եկեղեցին կմնա կենդանի, կենսունակ ու կգործի տևականորեն իր առաքելության և կրչման քարձրության վրա, եթե նաև համարձակ կերպով իր խոսքը և իր գործը միացնի այս ոգեկան, բարոյական, ընկերային հրամայականների հաղթանակի համար: Պայքարը, հանուն խաղաղության և

արդարության, պայքար է ավելի կատարյալ, ավելի ներդաշնակ, «ստավել կյանքի» ձևերի համար: Հայ եկեղեցին համոզված է, որ ոչ թե բիրտ ուժը, այլ բանականությունն է, որ պետք է որոշի արդի աշխարհի և ժողովուրդների ճակատագիրը: Քրիստոսի քարոզած մարդկային փոխհարաբերությունների հիմքը բռնությունը չէ, այլ սերն ու եղբայրությունը, որից բխում են համերաշխությունն ու համագործակցությունը ազգերի, ժողովուրդների և անհատների միջև:

Քրիստոնեական եկեղեցիների, այդ թվում նաև հայ եկեղեցու հիմնական առաքելությունն է ու կոչումը՝ լինել աշխարհի մեջ և աշխարհի հետ: Քրիստոսի եկեղեցին չի կանենում կղզիացած և անհաղորդ մնալ արդի աշխարհը հուզող շարժումներին, աշխարհն ու մարդկությունը հուզող հարցերին: Այսօր եկեղեցու հիմնական առաքելություններից մեկը պետք է լինի նաև աշխատել հասարակության բոլոր խավերի, բոլոր մարդկանց հետ, գործակցել բոլոր կրոնների հետ, շփվել բոլոր գաղափարախոսությունների հետ՝ մարդկության հասարակաց շահը և երջանկությունը ապահովելու համար: Նրանով եկեղեցին կստանձնի գործուն դեր այսօրվա աշխարհի գործերի մեջ և կհանդիսանա կարևոր մի գործոն խաղաղության և համագործակցության համար, բայց կպահի կյանքի և աշխարհի հետ, կրգա ժամանակի բազկերակը, կդառնա հաղորդ կյանքի տրոփյուններին՝ այդու իսկ ծառայելով իր բուն կոչմանն ու առաքելությանը:

Արդի աշխարհը հուզող հարցեր են ընկերային արդարության և հավասարության բացակայությունը մի շարք երկրներում, իրավագուրկ ազգությունների ազատագրումը, ցեղային խտրականությունը, ֆաշիստական նոր ձգտումների դրսևորումը, որոնք բոլորը ախտանշաններ են հնարավոր նոր ողբերգությունների, նոր պատերազմների, և որոնց դեմ միասնական և վճռական պայքարը խաղաղասեր բոլոր ուժերի առաջնահերթ պարտականությունը պետք է լինի: Եվ այս հարցերի արդար լուծման ճանապարհին եկեղեցիները ևս, կարծում ենք, նվիրական պարտականությունը ունեն իրենց կարելին ի գործ դնելու, բանիվ և գործով, մանավանդ որ այդ է թելադրում մեզ Քրիստոսի Ավետարանը:

Մենք երջանիկ ենք, որ հետադիմության, հակահոմանիստական պատերազմ նյութող ուժերը հետզհետե տկարանում են առաջադիմական ու խաղաղասեր ուժերի ծավալումով և ամրապնդումով, ինչ որ պատմական օրինաչափ մի պրոցես է, որի զարգացմանը մեծ չափով սատարում է նաև Սովետական

Միությունն իր գաղափարական, քարոզական ու քաղաքական հզորությամբ:

Ապրում ենք էկումենիզմի ժամանակաշրջանում: Եկեղեցին այսօր բացվել է դեպի աշխարհը: Նա զգայուն և հաղորդ է դարձել դեպի մարդկային կարիքները: Դա միաժամանակ քրիստոնեական հավատի վերակենդանության պայծառ վկայությունն է: Այս պայմաններում ահա եկեղեցու առաջնահերթ պարտականությունն է՝ մեր օրերում նպաստել մի նոր և արդար աշխարհի կառուցմանը, որի մեջ տղամարդիկ, կանայք և երիտասարդությունը, առանց խտրության ցեղի, գույնի, համոզումների, արդարության և խաղաղության պայմաններում, կարողանան ունենալ ապրելու՝ և զարգանալու իրավունք՝ արժանավայել մի կյանքով, ազատագրված ճնշումից, շահագործումից, մեղքից և տգիտությունից:

Այս ճշմարտությունների թելադրությամբ ու մղումով Հայաստանյայց առաքելական եկեղեցին աշխատում և գործում է իր սեփական ժողովրդի ծոցում, միաժամանակ բերելով իր մասնակցությունը քրիստոնեական եկեղեցիների և կրոնական այլ կազմակերպությունների աշխատանքներին և շահաբերին, որոնք նպատակամղված են աշխարհում կայուն խաղաղության հաստատմանն ու ամրապնդմանը, բոլոր ժողովուրդների ազատության, իրավահավասարության, եղբայրության ու համագործակցության վսեմ և աստվածահաճ սկզբունքների կենսագործման ի խնդիր:

Այս մտածումներով և եղբայրական սրբտազին զգացումներով, հանուն Ամենայն Հայոց Վազգեն Ա Հայրապետի, ողջունում ենք ներկայությունը այստեղ, հայ եկեղեցու պատմական կենտրոն ս. Էջմիածնում, Պրագայի խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսի մեր եղբայրների, կոնֆերանս, որը տարիներից ի վեր իր արի ձեռքերում է պահում խաղաղության պաշտպանության սրբազան դրոշակը՝ Քրիստոսի եկեղեցու փառքի և ժողովուրդների եղբայրության ու հանության համար:

Բարի գալուստ ձեզ, սիրելի եղբայրներ ի Քրիստոս: Ի սրտե մաղթում ենք ձեզ՝ Խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսի միջազգային քարտուղարությանը, ամենայն հաջողություն ձեր ապագա գործունեության ճանապարհին: Թող Տերը օրհնի և պողաքեր դարձնի մեր այս հանդիպումը բիբլիական Արարատի այս պատմական հողի վրա»:

Տ. Նարեկ եպիսկոպոսի գեկուցման առթիվ, խոսելով Խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսի անունից, դոկտ. Կարոյի Տոթը բարձր գնահատական տվեց

վերոհիշյալ զեկուցմանը՝ նշելով, որ այն կը-  
 հրատարակվի կոնֆերանսի փաստաթղթե-  
 ռի ժողովածուում:  
 Տ. Նարեկ եպիսկոպոսի սույն զեկուցու-  
 մից հետո Հայոց Հայրապետը կրկին ան-

գամ օրինեց բոլոր ներկաներին և, հաջո-  
 դություն մաղթելով նրանց մարդասիրական  
 աշխատանքներին իրենց սրբազան առաքե-  
 լության ճանապարհի վրա, մեկնեց ժողո-  
 վասրանից:



Հյուրերը և Մեսրոպ Մաշտոցի անվան ձևագրաց Մատենադարանի առաջ

Հանուն Մայր Աթոռ և Էջմիածնի, Միջազգային քարտուղարության հրավերով, սույն նստաշրջանի աշխատանքներին մասնակցեցին տ. Նարեկ եպիսկոպոս Ծաբարյանը, տ. Արիս եպիսկոպոս Ծիրվանյանը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամ, պատմաբան Հովհաննես Թովուլյանը և Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար Պարզև Ծահրազյանը:

**Երկրորդ նիստ**

Նույն օրը, փոքր ընդմիջումից հետո, ժամը 12-ին, գումարվեց նստաշրջանի Բ նիստը, որ լավեց Խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսի գլխավոր քարտուղար դոկտ. Կարոյի Տոթի գեկուցագիրը, որի սկզբում նա մասնավոր կարևորությամբ շեշտեց այն հանգամանքը, որ Միջազգային քարտուղարության 1975 թվականի առաջին նստաշրջանը գումարվում է հայ եկեղեցու կենտրոն և Էջմիածնում Ամենայն Հայոց Հայրապետի ջերմ հրավերով: «Մենք մասնավորապես ուրախ ենք,—ասաց դոկտ. Կարոյի Տոթը,—որ մեր շարժումը, իր պատմության մեջ առաջին անգամ լինելով, հնարավորություն է ունենում իր նստաշրջանը գումարելու այստեղ, Հայաստանում: Ինչպիսի՜ պատիվ է մեզ համար, որ մենք պիտի կարողանանք վայելել առաքելական ու հնադարյան այս եկեղեցու հյուրընկալությունը, պիտի կարողանանք ավելի մոտիկից ճանաչել այս երկրի ժողովրդի հարուստ պատմությունն ու ժամանակակից կյանքը: Մենք քաջատեղյակ ենք այն գործուն մասնակցությանը, որ սկըզբից ևեթ հանդես բերեց հայ եկեղեցին Խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսի աշխատանքներին՝ աջակցելով նրա բոլոր նախաձեռնություններին: Մենք երախտագիտությամբ ենք հիշում այն հետաքրքրությունն ու ջերմ պաշտպանությունը, որ ցուցաբերեց հայ եկեղեցին մեր շարժման նկատմամբ բազմաթիվ այլ առիթներով, ինչպես որ ցուցաբերում է նաև այժմ մեր Միջազգային քարտուղարությանը վերապահված իր սույն սիրալիք հրավերով: Այս առթիվ ես կցանկանայի մեր մասնավոր երախտագիտությունն ու խորին հարգանքն արտահայտել այստեղ Նորին Սրբություն Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսին: Իմ այցելությունը և Էջմիածին 1971 թվականի աշնանը անմոռանալի է մնալու իմ հիշողության մեջ, ինչպես նաև այն եղբայրական ջերմ սերը, որով Նորին Սրբությունը և Նրա գործակիցները ընդունեցին ինձ: Անկասկած այդ հանգամանքը նպաստեց, որ մենք համարձակությունը ունենանք

խնդրելու մի նոր հրավեր՝ այս անգամ ամբողջ Միջազգային քարտուղարության համար: Ես համոզված եմ, որ մեր սույն խորհրդակցությունը, որը տեղի է ունենալու այստեղ, ներշնչումի մի նոր աղբյուր պիտի հանդիսանա մեզ, առաջնիչ մի նոր խթան՝ խաղաղության գործին Է՛լ ավելի արդյունավետ կերպով ծառայելու համար»:

Այնուհետև դոկտ. Կարոյի Տոթը լայնորեն անդրադարձավ Խաղաղության շարժման գործունեությանը միջազգային իրադարձությունների զարգացման ոլորտում:

Դոկտ. Կարոյի Տոթի սույն հաշվետու զեկուցման շուրջ տեղի ունեցած մտքերի աշխույժ փոխանակություն: Այն արժանացավ բոլոր ժողովականների հավանությանը:

Երկրորդ նիստի ավարտին հարգելի հյուրերը, Մայր Աթոռի ներկայացուցիչների առաջնորդությամբ, այցելեցին Մայր տաճար, նրան կից եկեղեցական արվեստի թանգարան, ապա կաթողիկոսաց թանգարան Հին Վեհարանում, որ նրանց տրվեցին անհրաժեշտ բացատրություններ:

Ժամը 14-ին բոլոր հյուրերը ճաշեցին Մայր Աթոռում, Ղազարապատի պատմական միաբանական սեղանատանը:

**Երրորդ նիստ**

Նույն օրը, ժամը 15-ին, գումարվեց Միջազգային քարտուղարության երրորդ նիստը: Սույն նիստում լավեցին Խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսի անցյալի գործունեության վերաբերյալ մի շարք հաղորդումներ, այդ թվում՝ Քոթայամում (Հնդկաստան) Խաղաղության ասիական քրիստոնեական կոնֆերանսի և Հնդկաչինի եկեղեցիների միջադրույթի գումարած ժողովի զեկուցագրերի մասին:

ՀՈԳԵՎՈՐ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՐԳ ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ

Երեկոյան ժամը 20-ին միաբանական սեղանատանը, ընթրիքից հետո, ի պատիվ Միջազգային քարտուղարության անդամների, Մայր տաճարում տրվեց հոգևոր երաժշտության համերգ Մայր տաճարի երգչախմբի կատարմամբ՝ գեղարվեստական ղեկավարությամբ վաստակավոր արտիստ, խմբավար Խորեն Մելխանեջյանի:

Համերգին ներկա էր Վեհափառ Հայրապետը՝ շրջապատված Մայր Աթոռի եպիսկոպոսներով և միաբանության անդամներով: Համերգին ներկա էին նաև Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը, մայրավանքի պաշտոնեությունը

և այլ հրավիրյալներ: Համերգի ծրագրում տեղ էին գտել հայկական, ռուսական և արեվմտաեվրոպական հոգևոր երաժշտության դասական ընտիր նմուշներ, որոնք կատարվեցին երգչախմբի և նրա առանձին մենակատարների կողմից արվեստի բարձր մակարդակով և խոր ապրումով:

**Փետրվարի 26-ի և 27-ի նիստերը**

Այս օրերին նույնպես շարունակվեցին Միջազգային քարտուղարության հերթական նիստերը՝ ըստ նախատեսված ծրագրի: Նիստերի ընթացքում հաստատվեց խաղաղության ընդհանրատնտեսական կոնֆերանսի ապագա գործունեությանը մաս կազմող ծրագիրն այն միջոցառումների, որոնք տեղի են ունենալու կանանց միջազգային տարվա առթիվ: Այս կապակցությամբ Հելսինկիում հրավիրվելու է կանանց կոնֆերանս:

Նիստերի ընթացքում նախապատրաստվեցին խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսի ղեկավար օրգանների ժողովներն ու նրանց ծրագրերը (Աշխատանքային կոմիտեի ժողովը՝ ապրիլին, Սոֆիայում, Կենտրոնական կոմիտեի ժողովը՝ սեպտեմբերին, Հունգարիայում):

Միջազգային քարտուղարությունը քննարկեց նաև այս տարի Նայրոբիում (Քենիա) գումարվելիք Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հինգերորդ համաժողովին խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսի մասնակցության և համաժողովին նրա բերելիք օգնության հարցը: Ինչպես հայտնի է, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հինգերորդ համաժողովի (որին մասնակցելու է նաև հայ եկեղեցին Մայր Աթոռի գլխավորությամբ) գլխավոր թեման է՝ «Հիսուս Քրիստոսն ազատագրում է և միացնում»:

Միջազգային քարտուղարությունն առանձին ուշադրություն նվիրեց ֆաշիզմի դեմ տարված հաղթանակի և Միավորված ազգերի կազմակերպության հիմնադրման 30-ամյա տարեդարձների տոնակատարության նախապատրաստման հարցերին: Ժողովն այս երկու իրադրություններին անդրադարձավ քրիստոնեական մտածողության և սկզբունքների լույսի տակ:

Փետրվարի 26 և 27 օրերին, նիստերի ընդմիջումների ժամանակ, հարգարժան հյուրերը այցելեցին ս. Էջմիածնի շրջափակի պատմական վանքերը՝ ս. Հռիփսիմե, ս. Գայանե և Զվարթնոցի ավերակները:

Փետրվարի 27-ին Միջազգային քարտուղարության անդամները այցելեցին նաև հոգեվոր Անարան, ուր հանդիպում ունեցան տեսչության և դասախոսական կազմի հետ:

**ՈՂՋԵՐԹԻ ԸՆԿՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ**

Փետրվարի 27-ին, հինգշաբթի օրը, Ղազարապատի միաբանական սեղանատանը, ի պատիվ խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսի միջազգային քարտուղարության, տրվեց ողջերթի ընդունելություն՝ նախագահությամբ Վեհափառ Հայրապետի: Ընդունելության ժամանակ Հայոց Հայրապետը մի անգամ ևս ողջունեց ներկայությունը Մայր Աթոռի հարգարժան հյուրերի, օրհնեց նրանց աստվածաբան խաղաղասիրական գործունեությունը և բարի մանապարհ մաղթեց նրանց:

Հանուն Միջազգային քարտուղարության, շնորհակալության և երախտագիտության սրտագին խոսք ասաց դոկտ. Կարողի Տոթը՝ շեշտելով, որ երբեք չպիտի մոռացվի ինչպես խաղաղության պաշտպանության ի նպաստ Հայոց Հայրապետի, Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի և հայ եկեղեցու բերած մեծ նպաստը, այնպես էլ սույն կոնֆերանսի գերագանց կազմակերպումը և երթայրական, բացառիկ ընդունելությունն ու հյուրասիրությունը, որին արժանացավ Միջազգային քարտուղարությունը հայոց այս պատմական երկրում, բիրելիական Արարատի հողի վրա:

Պաշտոնական սույն ճաշկերույթից հետո Վեհափառ Հայրապետը Վեհարանում ընդունեց Միջազգային քարտուղարության ղեկավար անդամներին և հուշանվերներ բաժանեց:

**ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Փետրվարի 28-ին, ուրբաթ օրը, առավոտյան, Միջազգային քարտուղարության անդամները, ավարտած լինելով իրենց աշխատանքները Մայր Աթոռում, այցելեցին Երեվանում սուրբ Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարան, ապա Ծիծեռնակաբերդ՝ Հայ նահատակաց հուշարձան, ուր ծաղիկներ դրեցին և աղոթեցին Ապրիլյան եղեռնի բյուրավոր զոհերի հոգիների խաղաղության համար:

Ավելի ուշ հարգելի հյուրերն այցելեցին Գառնիի վերակառուցված հեթանոսական տաճար և ապա ս. Գեղարդի պատմական վանք, ուր շարականներով ու երգերով Գեղարդի վանքի միաբանների կողմից առաջնորդվեցին եկեղեցի:

Ինչպես ամեն տեղ իրենց այցելությունների ընթացքում, այստեղ ևս Քարտուղարության անդամներին տրվեցին անհրաժեշտ պատմական տեղեկություններ և լուսաբանություններ:

Հարգարժան հյուրերն իրենց կեսօրվա

նաշը կատարեցին Գեղարդի վանական սեղանատանը:

Նույն օրը, մայրաքաղաք վերադառնալուց հետո, հյուրերը ծանոթացան Երևանի տեսարժան վայրերին և պատմական հուշարձաններին:

Ապա երեկոյան քարտուղարության անդամները Հայֆիլիհարմոնիայի համերգային Մեծ դահլիճում ներկա եղան համերգի:

Մ Ե Կ Ն Ո Ւ Մ

Մարտի 1-ին, շաբաթ օրը, առավոտյան, Միջազգային քարտուղարության անդամները, խորապես երախտապարտ Մայր Աթոռի և Հայոց Հայրապետի կողմից իրենց նկատմամբ ցուցաբերված քրիստոնեական ջերմ

սիրո և սրտագին հյուրընկալության համար, հրաժեշտ տվին Մայր Աթոռին լավագույն և անմոռանալի տպավորություններով:

Երևանի օդանավակայանում հյուրերին աննապարհեցին, հանուն Հայոց Հայրապետի, Գերագույն հոգևոր խորհրդի անդամ պրն. Հովհաննես Թոփուզյանը, Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար Պարզև Շահբազյանը, տ. Թորգոմ արեղա Մուշեղյանը և Սարգիս կարկավազ Սարգսյանը:

Փետրվարի 27-ին, հինգշաբթի օրը, վերջին նիստի ժամանակ, Միջազգային քարտուղարությունը Մայր Աթոռ ս. Էջմիածնում 1975 թվականի իր առաջին նստաշրջանի գումարման առիթով հաստատեց հետևյալ հաղորդագրությունը.

Հ Ա Ղ Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանյայց առաքելական եկեղեցու և Նորին Սուրբ Օծություն Ծայրագույն Պատրիարք, Ամենայն Հայոց կաթողիկոս Ս. Տ. Վազգեն Ա-ի հրավերով Խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսի միջազգային քարտուղարությունը 1975 թվականի փետրվարի 24—28-ը ժողով գումարեց Մայր Աթոռ ս. Էջմիածնում:

Նստաշրջանի հանդիսավոր բացմանը ներկա էր Նորին Սուրբ Օծություն Ս. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը, որը հանդես եկավ ողջունի մի ուղերձով: Ծիրակի թեմի առաջնորդ տ. Նարեկ եպիսկոպոս Ծաքարյանի կողմից կարդացվեց մի զեկուցում՝ «Հայաստանյայց առաքելական եկեղեցին և նրա առաքելությունը վասն աշխարհի խաղաղության» թեմայով: Իր զեկուցման մեջ նա ուրվագծեց Հայաստանյայց առաքելական եկեղեցու պատմությունը և այն բացառիկ տեղը, որ նա գրավել է Էկումենիկ շարժման մեջ քրիստոնեական հավատի համար իր կատարած զոհողությունների միջոցով: «Հայ ժողովուրդը հասկանում է խաղաղության պաշտպանության կենսական անհրաժեշտությունը... Մենք հավատում ենք, որ հայ եկեղեցին կմնա կենդանի, կենսունակ ու կգործի տևականորեն իր առաքելության և կոչման բարձրության վրա, եթե նաև համարձակ կերպով իր խոսքը և գործը միացնի այս ոգեկան, բարոյական, ընկերային հրամայականների հաղթանակի համար»:

Խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսի չլիսավոր քարտուղար դոկտ. Կարոլի Տոթի նախագահության ներքո ժողովը լսեց նրա ներկայացրած զեկուցագիրը: Նա լայնորեն անդրադարձավ շարժման գործունեությանը միջազգային իրադարձությունների զարգացման ոլորտում: «Ապացուցված է, որ միջազգային լարվածության թուլացումը կախում չունի սուբյեկտիվ գործոններից և ժամանակավոր մի մտավիճակի արդյունք չէ բնավ, այլ պատմական անխուսափելի մի անհրաժեշտություն... Այս հույժ առարկայական պատճառները ստիպում են մարդկությանը գործադրել խաղաղ գոյակցության քաղաքականությունը երկկողմանի և բազմակողմանի միջազգային բանակցություններում»:

Ժողովը լսեց Խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսի անցյալի գործունեությանը վերաբերող մի շարք հաղորդումներ: Այդ հաղորդում-

ներում առանձին հետաքրքրությունն ցույց տրվեց Քոթայանում (Հնդկաստան) տեղի ունեցած Խաղաղության ասիական քրիստոնեական կոնֆերանսի զեկուցագրի և Հնդկաչինի ենթահանձնաժողովի գումարած ժողովի զեկուցագրի նկատմամբ:

Միջազգային քարտուղարության անդամների կողմից հաստատվեց Խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսի ապագա գործունեությանը մաս կազմող ծրագիրն այն միջոցառումների, որոնք տեղի են ունենալու Կանանց միջազգային տարվա առթիվ: Այս կապակցությամբ Խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսը մասնավորապես ծրագրել է գումարել Կանանց կոնֆերանս Հելսինկիում (Ֆինլանդիա):

Միջազգային քարտուղարությունը նախապատրաստեց Խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսի ղեկավար օրգանների ժողովներն ու դրանց ծրագրերը (Աշխատանքային կոմիտեի ժողովը տեղի է ունենալու ս. թ. ապրիլին Սոֆիայում, իսկ Կենտրոնական կոմիտեի ժողովը՝ ս. թ. սեպտեմբերին Հունգարիայում): Կենտրոնական կոմիտեի ժողովի թեման է լինելու՝ «Քրիստոնյաների պատրաստակամությունը գործակցելու Խաղաղության և արդարության համար»:

Միջազգային քարտուղարությունը քննարկեց նախագիծն այն նպատի, որ Խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսը բերելու է Եկեղեցիների համաշխարհային խորհրդի առաջիկա 5-րդ համաժողովին, որը գումարվելու է Նայրոբիում, և որի թեման է լինելու «Հիսուս Քրիստոսն ազատագրում է և միացնում»: Այդ նպատակը վերաբերում է գլխավորապես համաժողովի Ա, Գ և Ե սեկցիաներում քննարկվելիք հարցերին:

Առանձին ուշադրություն նվիրվեց ֆաշիզմի դեմ տարված հաղթանակի և Միավորված ազգերի կազմակերպության հիմնադրման 30-ամյա տարեդարձների տոնակատարության նախապատրաստման հարցին: Ժողովն այս երկու իրադարձություններին անդրադարձավ քրիստոնեական մտածողության և սկզբունքների տեսանկյունից:

Միջազգային քարտուղարության անդամները պատեհություն ունեցան հաճելի մի երեկո անցկացնելու՝ ներկա գտնվելով Մայր տաճարի երգչախմբի կողմից իրենց պատվին տրված հոգևոր երաժշտության համերգին: Նրանք մեծ հետաքրքրությամբ այցելեցին Էջմիածնում և նրա շրջակայքում գտնվող պատմական հուշարձաններն ու եկեղեցիները:

Միջազգային քարտուղարությունը հանդիպում ունեցավ Էջմիածնի հոգևոր ճեմարանի դասախոսական կազմի, ինչպես նաև Արմենպրեսի թղթակցի հետ:

Նստաշրջանի փակման առթիվ Նորին Սուրբ Օծություն Վազգեն Ա-ը Միջազգային քարտուղարության անդամների պատվին տվեց ընդունելություն:

Միջազգային քարտուղարության անդամները խորապես երախտապարտ են Հայաստանյայց առաքելական եկեղեցու կողմից իրենց նկատմամբ ցուցաբերված ազնվության, քրիստոնեական սիրո, ջերմ հյուրընկալության և կոնֆերանսի գերազանց կազմակերպման համար:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռ ս. Էջմիածին,  
28-ը փետրվարի 1975 թ.



## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

**Մարտի 2-ին, կիրակի.**—Դ կիրակի քառասներորդական պահոց (Տնտեսին).

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քին. Բեյլերյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է տ. Եզնիկ արդ. Պետրոսյանը՝ «Եւ գովեաց Տէրն գտնտեսն անիրաւութեան, զի իմաստութեամբ արար» (Ղուկ. ԺԶ 8) բնաբանով:

\*  
\*  
\*

**Մարտի 9-ին, կիրակի.**—Ե կիրակի քառասներորդական պահոց (Դատարոսին).

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննէս ավ. քին. Մարությանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է տ. Թորգոմ արդ. Մուշեղյանը՝ «Դատարաց» կիրակիի խորհրդի մասին:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

\*  
\*  
\*

**Մարտի 11-ին, երեքշաբթի.**—Այսօր Մայր Աթոռ է այցելում Մոսկվայում Մեծ Բրիտանիայի դեսպանատան գործերի կառավարիչ Իոն Աադրըլընդը՝ իր տիկնոջ հետ:

Հարգարժան հյուրին դիմավորում և բարի գալուստ է մաղթում Մայր տաճարի փոխլուսարարապետ տ. Վազգեն վրդ. Թադոյանը:

Վեհափառ Հայրապետը Վեհարանում բարեհաճում է ընդունել հարգարժան հյուրին և հետաքրքիր զրոյց ունենում նրա հետ:

\*  
\*  
\*

**Մարտի 12-ին, չորեքշաբթի.**—Այսօր, երեկոյան, Վեհարանում տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում քննարկվում են Մայր Աթոռի երիտասարդ միաբանների Մեծ պահոց աթիվ խոսած քարոզները:

Քննարկմանը ներկա էր Վեհափառ Հայրապետը:

\*  
\*  
\*

**Մարտի 15-ին, շաբաթ.**—Տօն է սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ սուկալի չարչարանացն և մտին ի վիրապն.

Այսօր Մայր տաճարում, Իջման ս. սեղանի առաջ, ս. պատարագ է մատուցում տ. Վազգեն վրդ. Թադոյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Յորժամ տկարանամ,

յայնժամ գորանամ» (Բ Կորնթ. ԺԲ 10) բնաբանով:

\*\*\*

**Մարտի 16-ին, կիրակի.—Ձ կիրակի քառասներորդական պահոց (Գալատեան).**

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում ս. Գայանե վանքի վանահայր տ. Գուրգեն քեն. Աշուրյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է տ. Հովհաննես ավ. քեն. Մարտիյանը՝ «Եկեացեն ամուսն յորս ոչ թողցի այդր քար ի քարի վերայ որ ոչ քակտեցի» (Ղուկ. ԻԱ 6) բնաբանով:

\*\*\*

**Մարտի 17-ին, երկուշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհաբանում տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում քննարկվում է Դոստոևսկու «Ապուշը» գործի թատերական ներկայացումը Երևանի Գ. Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնում:**

Քննարկմանը ներկա էր Վեհափառ Հայրապետը:

\*\*\*

**Մարտի 20-ին, հինգշաբթի.—Այսօր, ժամը 15-ին, միաբանական սեղանատանը տրքվում է ճաշկերույթ՝ ի պատիվ վրահայոց թեմի թեմական խորհրդի ատենապետ, գրող և թարգմանիչ Սուրեն Ավչյանի ծննդյան 70-ամյակի:**

Ճաշկերույթին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Ճաշկերույթին մասնակցում են տ. Կոմիտաս, տ. Հուսիկ, տ. Վահան, տ. Գևորգ սրբազանները, Մայր Աթոռի միաբանությունն ու պաշտոնեությունը, վրահայոց թեմական խորհրդի անդամներ Սամվել Իսախանյանը, Խաչիկ Հեքեքյանը, Սուրեն Եսայանը, Գևորգ Դուրաքարյանը և Արարատյան թեմի թեմական խորհրդի անդամները:

Ճաշկերույթին ներկա էր նաև Հայկական ՍՍՀ Միմիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը:

Հոբելյար Սուրեն Ավչյանին ուղղված ողջույնի և շնորհավորական խոսք են ասում Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը, վրահայոց թեմի առաջնորդ տ. Գեվորգ եպ. Սերայդարյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը և Հ. Առաքելյանը:

Ողջույնի և օրհնության խոսք է ասում նաև Վեհափառ Հայրապետը:

Վերջում Վեհափառ Հայրապետին և բոլոր ներկաներին ուղղված շնորհակալության և երախտագիտության ջերմ խոսք է ասում Ս. Ավչյանը:

\*\*\*

**Մարտի 22-ին, շաբաթ.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանեց Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմերի առաջնորդ տ. Տիրայր եպ. Մարտիկյանը:**

Սրբազանին Երևանի օրանավակայանում դիմավորում են Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպ. Սանթրուրյանը և տ. Թորգոմ արք. Մուշեղյանը:

\*\*\*

Նույն օրը վրահայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ եպ. Սերայդարյանը Վեհափառ Հայրապետին է հանձնում իր «Տոմարագիտության դասընթաց» աշխատությունը՝ իբրև դասագիրք Հայաստանյայց եկեղեցու հոգևոր ճեմարանների համար:

Տոմարագիտության սույն դասագիրքը, ավելի քան 100 էջ, բաղկացած է երկու մասից: Առաջին մասում ներկայացված են տոմարագիտության տեսությունը և գործնական հաշվումները՝ իրենց կանոններով, իսկ երկրորդ մասում շարադրված է մի քանի կարևոր տոմարների առաջացման ու զարգացման պատմությունը՝ ծանրանալով հայ տոմարի պատմության վրա:

\*\*\*

**Մարտի 28-ին, կիրակի.—Ծաղկազարդ.**

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում և «Հայր մեր»-ից առաջ օրվա խորհրդի մասին քարոզում տ. Գևորգ եպ. Սերայդարյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Ս. պատարագից հետո Վեհափառ Հայրապետին են այցելում Երևանում սովորող սիրիահայ ուսանողական միության ներկայացուցչական մի կազմ՝ շուրջ 60 հոգի:

Ծաղկազարդի տոնի առիթով Վեհափառ Հայրապետին ուղղված որդիական ջերմ խոսք է ասում Վահե Ժամագործյանը՝ բոլոր ուսանողների անունից:

«Ծաղկազարդի օրվան հատուկ տոնական տրամադրություններով, Երևանում սովորող սիրիահայ ուսանողական միության ներկայացուցչական այս կազմը այսօր եկել է Ձեզ մոտ յուրահատուկ խանդավառությամբ:

Պատանեկան տարիներին, կիսելով սփյուռքի արեկոծ առօրյան, այս երիտասարդությունը շարունակեց 17 տարիներից ի վեր ծնունդ առած ազգանվեր մի ավանդույթ և կարոտի ու հույզերու անքակտելի կամուրջով եկավ մայր հայրենիք բարձրագույն և մասնագիտական ուսում ստանալու:

Իհնելով սփյուռքահայ ուսանող և կիսելով հայրենի երկրի ստեղծագործ առօրյան, մեր մեջ օրեցօր գույն և տարազ է ստանում հայրենասեր հայ մարդու ազնիվ կերպարը:

Այս բոլորի հետ մեզ մոտ հաճախակի է բռնկվում հայրենասիրական ճշմարիտ հրպարտանքի զգացումը, մի հույզ, մի ապրում, որի ոգեղեն արձագանքը հաճախ զգում ենք աթոռակիստ Մայր տաճարի դողանջներում և փորձում հասկանալ նաև Մայր Աթոռի հայրենանվեր, եկեղեցաշեն առաքելությունը, միաժամանակ բարձր գնահատել միջազգային խաղաղասիրական մակարդակի վրա Ձերդ Վեհափառության կատարած ազնիվ և բարի գործը:

Թույլ տվեք, Վեհափառ Տեր, հայրենակարոտ սփյուռքի հոգեկան լավագույն ավանդույթներով դաստիարակված սիրիահայ այս խանդավառ երիտասարդության մեջ տեսնել, օրվա դեպքերին ակնհաստես ուսանողին, ժամանակի բազկերակին ակահջալուր հայ մարդուն, երբ մանավանդ հոբելյանական ա՛յս օրերին ոգեկոչելու ենք ազգովին Ապրիլյան եղեռնի 60-ամյակը և մայիսին՝ ֆաշիզմի դեմ տարված հաղթանակի 30-ամյա-

կի առիթով՝ Մեծ հայրենականում զոհված Հաջարի մարտիկների հիշատակը:


Այսօրվա հայ երիտասարդությունն ունի իր առաքելությունն ու իր ինքնուրույն, որոշակի արգասիքները: Դա ինքնըստիներյան խրախուսում է մեզ: Հայարտ ենք ու երախտապարտ նաև նրա համար, որ դաստիարակվում ենք հայրենի հողի վրա՝ վաղը լավագույնս ծառայելու համար հայ ժողովրդին, հայ մշակույթին և մեր վերածնված հայրենիքին:

Այս տոնական օրը եկել ենք Ձեզ մոտ, Վեհափառ Տեր, աջահամբույրի՝ մաղթելով քաջատողջություն և անամպ կյանք Ձեզ, Ձեր եկեղեցաշեն ու հայրենանվեր առաքելության սուրբ ճանապարհի վրա:

Իսկ երբ այս բոլորին նայում ենք սփյուռքին յուրահատուկ հոգեվիճակով և լսում աշխարհի տարածքով մեր հայրենակարոտ հայ զանգվածների անավարտ երգը, մեր մտածման մեջ վեհանում է այն փառավոր և ազնիվ գործը, որը ի կատար է ածվում Ձեր հովանու տակ, Մայր Աթոռում, Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու ծոցում՝ ի փառս մեր ժողովրդի, որն ապրում է իր հայրենի հողի վրա և սփյուռքի ողջ տարածքի վրա»:

Վեհափառ Հայրապետը բարեհաճում է տալ նրանց Իր հայրական օրհնությունը և մաղթել հաջողություն՝ նրանց ապագա ազգօգուտ ծառայության գործում:





ՄՈՎՍԷՍԻ ՀԱՅՈՑ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԳՐԵԱԼ ՊԱՏԱՍԽԱՆԻՔ  
ԹՂԹՈՅՆ ՏՐԱՊԻԶՈՆԻ ԱՌ ՀԱՏՈՒԱԾԵԱԼՆ  
ԳՐԻԳՈՐ ԵՐԷՑ\*

Այլ ճշմարիտ վարդապետություն է ոչ միակողմանի դաստելն:

Ասացուք և զագգիս մերոյ թիրությունն: Նախ՝ արտաքոյ եկեղեց-  
ւոյ զպաշտօնն կատարել, ապա զեկեղեցի և զառաջնորդութիւն ժառան-  
գութեամբ ունել, զեկեղեցի վաճառել, զեկեղեցի Քրիստոսի դստեր բա-  
ժին տալ, ձեռնադրութիւն արծաթով առնել, նորակնքի և հիւանդի և  
մտելի ձէթ ոչ օրհնել, ի տօնախմբութիւն հեղձ գտանել օրինաց և  
առաջնորդաց անհնազանդ լինել, յագգապղծութիւն խոտորել, յերդումն  
և յիշոց յաճախել և այլս զոր դիցուք աստ:

ԲԱՆՔ ԵՐԱՆԵԼԻՈՅՆ ԽՈՍՐՈՎՈՒ ԱՌ ՆՈՅՆ.

Տեղի աղօթից գիրք սուրբ զեկեղեցի մեզ ուսուցանէ, որ առանել  
լսելի լինիցին աղօթք, զի եթէ ի հնումն Սողոմոնի տաճարին Աստու-  
ծոյ զհրաքանչիւրոցն զհայցուածսն լնուլ և առնուլ յուսայ: Եւ Դաւիթ  
ինքն գլխովին ի տաճարին զլսել խնդրուածոցն իւրոց հայցէր. «Լոր  
Տէր ձայնի խնդրուածաց իմոց, յաղաչելիսն առ Քեզ, ի համբառնայ  
ձեռաց իմոց ի տաճար սուրբ քո»<sup>15</sup>: Եւ Եսայի ասէ. «Տես ի տաճարէ  
սրբոյ քումմէ և ի փառաց քոց»<sup>16</sup>: Եւ այն զի անդ սեղանն զանասնոց  
արիւնն մատուցանէր պատարագ, ապա ո՞րչափ գերակայ է օգտութիւնն  
որ ի նորումս ի տան Աստուծոյ զաղօթս մատուցանել առաջի  
նորս, յորոյ վերայ արիւնն անարատ Գառնն Աստուծոյ դնի պատա-  
րագ: Վասն այնորիկ և սուրբ կոչէ, զի սրբոյն Աստուծոյ է բնակարան  
և հրեշտակաց սրբոց բանակետոյ, և արդարոց կատարելոց տեղի

\* Ծարումակված «Էջմիածին» ամսագրի 1975 թվականի № Ա-ից:

<sup>15</sup> Մաղվ. ԻԷ 2:

<sup>16</sup> Եսայի ԿԳ. 15:

իջեանի՝ յերկնուստ յերկիր երթնելութեան: Քանզի ի սմա ամենայն ի բաց բարձեալ՝ լինի կրճիմն: Եւ երկիրս ընդունի գերկնայինսն, և երկնայինքն միանան ընդ երկրայինքս, և ննջեցեալ սուրբքն ընդ հաւատացեալ կենդանիս, զի եթէ հաւատամք եթէ տուն Աստուծոյ և բնակարան է եկեղեցի, որպէս և ինքն իսկ ասաց: Եւ զի՞նչ է կաթողիկէն տիեզերական, զի ամենայն եկեղեցիք ուղղափառաց որ ընդ տիեզերս են, Մի են, Մի Քրիստոս յամենայն եկեղեցիս է, որ ըստ առաքելոցն հաւատոյ շինի, զոր և առաքելական կոչեմք: Որ զի թէ բաժանին ըստ տեղեաց, այլ ոչ թէ ըստ ժողովրդոց: Զի ի ծագաց մինչև ի ծագս երկրի ուր և հասանիցէ ճշմարիտ հաւատացեալն յեկեղեցիս ուղղափառաց իւր եկեղեցի է, և ոչ որոշէ զնա ոչ աշխարհն և ոչ լեզուոյն օտարութիւն: Այլ ընդունի որպէս մայր ի գիրկս սաստիկ սիրով: Եւ այսպէս ամենայն ուրեք տիեզերական կոչի, վասն տիեզերաց հաւատացելոց զորունս բանալոյ և զգիրկս սփռելով: Եւ արդ տես քանիսն զբարեացն ունի լինել առիթ: Երկնայնոցն\* դարձեալ ասեմ, սա է տեղի հանդերձ երկնատր թագաւորան ազգակցաց մերոց սրբոց ի սմա: Ընդ մեզ է խառնումն ամենայն հաւատացելոց որ յամենայն երկրի սա է մայր: Մեղացն մերոց և մերոց ննջեցելոցն աստուստ է քաւութիւն, նուիրաց և պատարագաց մերոց առաջի Աստուծոյ աստ լինի դրութիւն: Ի սմա զԱստուծոյ որդիանալն վերստին ծննդեամբն ստանամք: Ի սմա կերպարանիմք զանմահարար և զանսպականագործ կերակուրն և որով ընդ Քրիստոսի միանամք: Սա է սանդուխք յերկրէ յերկինս վերելութեան: Եւ եթէ զխաչելութիւնն Քրիստոսի և զգերեզմանն բաղձամք տեսանել, աստ զփափաքն լնումք: Քանզի ուր պատարագի Քրիստոս, անդ է խաչելութիւնն, և ուր մարմինն սուրբ առանց մարդկային նորազոցն ցուցանի, անդ է գերեզման նորին և ուր մեռելութիւնս մեր կենդանանայ, անդ հաւատամք կենդանութեան Որդոյն Աստուծոյ: Զի թէ և մահու նշանակէ հացն և բաժակն, այլ կենդանի և կենդանարար է, զի ինքն ասաց. «Այս է հացն կենդանի, որ յերկնից իջեալ է»<sup>17</sup>: Բայց վայ ինձ և վայ այժմու ժամանակիս, որ ըստ մարգարէին կանխասացութեանն՝ օտարացաք ի մօրէս և յայս չափ պարզեւ զմեզ օտարացուցաք: Զի թէ և

113ա այլ ինչ չունէաք յանցումն, այս միայն բաւ//կան էր մեղաւորս առնել զմեզ: Քանզի և աստանօր մարգարէս ոչ վասն այլ իրիք, այլ վասն ի հոգևոր մօրէս օտարանալոյ կոչեաց մեղաւորս. «Օտար եղեն, ասէ, մեղաւորք ի մօրէ խաբեցան յարգանդէ»<sup>18</sup>, այսինքն յաւազանէն: Քանզի վրիպին ի շնորհէ օտարացեալքն յեկեղեցոյ և ստեցեալ լինին իբրև զխորթս, վասն զնովս արհամարհանացն: Եւ զի՞նչ է խօսեցան սուտ, զի ասեն. «Իբրև սիրելի են յարկք քո տէր զօրութեանց, ցանկայ և փափագէ անձն իմ ի գահիթս քո»<sup>19</sup>: Եւ դարձեալ ասեն. «Զմի խնդրեցի ի Տեառնէ, և զտոյն աղաչեմ բնակել ինձ ի տան Տեառն զամենայն ատուրս կենաց իմոց»<sup>20</sup>: Եւ դարձեալ՝ «Ուրախացայ ես որք ասէին ցիս ի տուն

\* Ձեռագրում՝ երկնայնոցն:

\*\* Ձեռագրում՝ ք:

<sup>17</sup> Յովհ. Զ 50:

<sup>18</sup> Սաղմ. ԾԷ 4:

<sup>19</sup> Սաղմ. ԶԳ 1:

<sup>20</sup> Սաղմ. ԻԶ 4:

Տեսան երթիցուք»<sup>21</sup>: Զայս, և որ սոցին նման ասեն և մեծապես ստեն: Զի ախորժելի համարին յառաջիկայ ժողովել զժողովուրդ Աստուծոյ, քան բնակել ի տուն նորա: Ո՞ր գործոյն և ողբումն գործելեացն եկեղեցիք Աստուծոյ խրթնացեալ և ժողովուրդք ի նոցանէ քեցեալ: Ըստ կամաց որ և լա ինքեանց հաշուեսցին անդ, զեկեղեցոյ զփասուն տան և որ ևս դժնդակն, զի ոչ Աստուծոյ, այլ մարդկան զնորս նմանին պաշտօն: Զի առ աագս գեղիցն ի պաշտօն ժողովին, ոչ Աստուծոյ, այլ նոցա պաշտօն տանել, որպէս թէ գերագոյն նորս քան զԱստուած իցեն: ԶԱստուծոյ տամբք զանց արարեալ, զնոցա տունսն նախամեծար ստանեն: Որոց ի դէպ էր ասել զտերունական բանն. «Երթալք տուք զկայսերն կայսեր և զԱստուածոյն Աստուծոյ»<sup>22</sup>: Թէ որ ինչ աագացն անդ էր պատուոյ, զայն յառաջագոյն տարայք տունս, և դուք զպաշտօնն Աստուծոյ յԱստուծոյն պաշտեցէք տան մարգարէին հաւանեալ թէ՛ «Աստ օրհնեցէք ամենայն ծառայք Տեսան զՏէր»<sup>23</sup>: Թէպէտ և թագաւոր էր, գիշերին երթեալ ի տուն Տեսան և այլոց ձայն տունալ հրամայէ, թէ ծառայ էք, ասէ, Տեսան, առ տերն ձեր եկայք և ի տուն Տեսան ձերոյ: Եւ «մի պատճառէք գիշերս, այլ ի գիշերի համբարձէք զձեռս ձեր ի սրբութիւն և օրհնեցէք զՏէր»<sup>24</sup>: Եթէ ծառայ էք Տեսան, մի ընդդիմանայք կոչման Տեսան ձերոյ, ապա թէ կոչէ և ոչ գայք, չէք նորս ծառայք: Մարգարէին կոչէ Աստուած և դու չանաս, ապա ուրեմն և պաշտօն կոչողին առ ի քէն չէ հաճելի: Թէ ունկնդրութիւն լա է քան զպատարագ ի վերայ ամենայն պատճառացս զոր ասացաք, վասն քարոզի բանի իմանալի է և այս: Զի բանս հայցեալս որ ասես զգալն ի սուրբ եկեղեցի, իմաստոք թէ չէր հնար առաջնորդացն յայլ տեղիս համարձակել ի պաշտօն միաբանութեան, բայց միայն ի սուրբ եկեղեցիս: Այստքիկ բանք սրբոյն Խոսրովու:

Դիոնէսիոս Արիսպագացին գրէ. «Երախայիցն ձեթ օրհնել և օծանել և ապա մկրտել: Եւ ով իշխէ ասել, զի զմեզ ձաղակոծեն յառնել, և հոռոմ անուն կարդան ի վերայ մեր, և անիմաստք յոլով եպերեն զմեզ»: Սուրբ Գրիգոր Լուսաւորիչն մեր հրամայէր. «Յերեսն սատանայի թքանել հրաժարելոցն: Զնոյն և Բագարատ արար, աշակերտն Պետրոսի առաքելոյն, և այժմ թէ յիշեմք՝ նորաձևութիւն կոչեն: Թողում ասել և զերիս փշումն ի նորակնքիսն», զոր Գրիգոր Աստուածաբան ասէ ունել ի բանս իւր: Եւ առաքեալն Յակովբոս գրէ. «Հիւանդանայցէ՛՞ ոք ի ձէնչ, կոչեսցէ զերիցունս եկեղեցոյն և արասցեն աղօթս վասն նորս, օճցեն իւրով յանուն Տեսան և աղօթքն հաւատով ապրեցուցանէ զաշխատեալն և թէ մեղս ինչ իցէ գործեալ՝ թողցի նմա»<sup>25</sup>: Յայտ արար թէ իցէ հիւանդութիւն որ ի մեղաց լինիցի և մեղաւորացն օծութիւնն ոչինչ օգուտ է, այլ մարմնական ցարոցն: Իսկ մեղացն խոստովանութիւնն և ապաշխարութիւնն է բժշկութիւն:

Հայք զհիւանդն ոչ օծանեն և յոյնք զառողջ օծանեն:

<sup>21</sup> Մաղմ. ԺԻԱ. 1:

<sup>22</sup> Մաղմ. ԺԲ. 17:

<sup>23</sup> Մաղմ. ԺԳ. 1:

<sup>24</sup> Մաղմ. ԺԳ. 2:

<sup>\*</sup> Զեռագրում՝ նորակնքսն:

<sup>25</sup> Յակ. Ե 14—15:

Երկրորդն զարտուղի են ճշմարտությանն, զի թե մարմնով առողջ է, ոչ ասէր թե կոչեացէ զերիցունս եկեղեցւոյն, այլ ինքն անձամբ գնայր յեկեղեցին և խոստովանէր զհոգւոյն հիւանդութիւնն, այլ յայտ է թե զմարմնոյ ասէ հիւանդութիւն և ոչ հոգւոյ: Վասն որոյ պարտ էր հայոց և լուսնաց զմարմնով հիւանդն օծանել ըստ Առաքելոյ, և հոգւով հիւանդացն խոստովանութեամբ և ապաշխարութեամբ տալ դէղ բժշկութեան: Զի ճշմարտութիւնն հաստատէր և զստութիւնն խափանէր, որպէս ի գալ լուսոյ հալածի խաար և անյայտ լինի որ է իրաւացի: Եւ վասն մեռելոցն օծութեան դարձեալ գրէ Դիոնիսիոս աշակերտ սուրբ առաքելոյն Պողոսի, զի պարտ է օծանել// խորհրդաբար: Զի որպէս ըմբիշ ոք նախ օծանեն և ապա ի մարտ պատերազմի դէմ ախոյանին հանեն, զի անըմբռնելի լիցի ի թշնամոյն և տևել կարասցէ հարուածոցն: Ըստ այսմ օրինակի է առաջին օծութիւն քրիստոնէին առ աւագանան, զի ընդ սատանայի ի մարտ ելանէ քրիստոնէայն, զի պատրաստ լիցի և կազմ և յաղթել կարասցէ և զի մկրտութիւն աւագանին խաչակցութիւն է ընդ Քրիստոսի: Վասն որոյ զսուրբ միոռնն նախ խաչանիշ արկանէ քահանայն յաւագանն և ապա զմանուկն մկրտէ: Եւ երիս ընկղմումն մանկան ի ջուր աւագանին զմեռելութիւն Քրիստոսի և զերեքօրեայ թաղումն նշանակէ, ըստ երանելի առաքելոյն Պողոսի որ ասէ. «Հին մարդն մեր խաչակից եղև նմա»<sup>26</sup> և «թե թաղեցաք ընդ նմին մկրտութեամբն ի մահ»<sup>27</sup>: Դարձեալ զի յետ մարտին զմբիշն ի քաղանիս տանին և օծանեն ի հանգիստ և յուրախութիւն: Ընդ որս և զյաղթանակ մարտին ընկալեալ, զուարճացի պայծառապէս և անուն քաջութեանն կայ մնայ առ յապա: Սոյնպէս և ի ժամ վախճանին՝ լուսնան և օծանեն զգինուորն Քրիստոսի և դնեն ի քնարանի ի հանգիստ ակն ունելով բրաբրոնին վերնոյ ի միս անգամ զալստեանն Քրիստոսի, յորժամ իւրաքանչիւր ոք սունուցու վարձ ըստ վաստակոց ի բարի ի Տեառնէն:

Իսկ վասն Զատիկն ճրագալուցին՝ յերեկոյն շաքաթուն ասէ անտարանագիրն, որով յայտ է, թե խոր երեկոյ էր և չէ պարտ յարևի արձակել զպատարագն, այլ աստեղովք և ճրագով, որպէս անունն ճրագալուց է: Եւ յայսմիկ ո՞րպէս սուտ են յոյնք, զի պահք քարոզեն թեպէտ մինչ յերեկոյ պահեն: Սուտ են և հայք, զի յարևի լուծանեն, զի անցա լուծանել պարտ էր և սոցա պահել մինչև ցերեկոյ ըստ պատշաճի որպէս օրէն է: Եւ գիրք սուրբք վկայեն, որ են քանոն հաւատոյ և ոչ ըստ մարմնաշէտոյ կուտել վարդապետս և իւրաքանչիւր ախորժակաւ վարին անհնազանդութեամբ և անձնահանութեամբ:

Այլն եկեղեցի Քրիստոսի արեանն է գին, որպէս երանելին Պողոս գրէ. «Ոչ ապականացու արծաթեղինօք և ոսկեղինօք փրկեցայք, այլ պատուական արեամբն Քրիստոսի»<sup>28</sup>: Եւ գիտել պարտ է, զի հոմանուն է կոչումն եկեղեցւոյ: Քանզի ասի՝ հաւատացեալ ժողովուրդ եկեղեցի յորջորջի հոմանունաբար, և ի քարանց և ի փայտից շինեալն՝ եկեղեցի: Եւ է սա ընդհանուր և բացարձակ անուն, և չէ պարտ փակել ընդ ումեք իշխանութեամբ և ոչ վաճառել և ոչ բաժին տալ դատեր և ոչ վարձուր դրան քահանայ պահել անսրժան քահանայի և ուտել զեկեղեցի: Այլ

<sup>26</sup> Հոմ. Զ 6:

<sup>27</sup> Հոմ. Բ 12, հմմտ. Կողոս. Բ 12:

<sup>28</sup> Ա. Պետրոս Ա. 18—19:

յորժամ ընկեացի ի քահանայութենէն, արտաքս ելցէ և եկեղեցոյն թէ և ինքն անձամբ է շինեալ զեկեղեցին և կամ նախնիք իր: Զի սրբութիւն սրբոց վայել է: Նոյնպէս և թէ ի հերձուածութիւն ոք անկանի, չէ արժան ունել զեկեղեցի, զի թէ որ գործով ապականի անարժան է սրբութեանցն, ո՞րչափ ևս առաել որ ի հաւատն թերի գտանի: Եւ զի գրեալ իսկ է՝ զմեղս ժողովրդեանն կերիցէ քահանայն, և հանցաւոր քահանայ զմեղաւոր ի մեղս ոչ կարէ ուտել: Զի երբ ինքն բարեխօսի կարօտ է, այլոց զիս՞րո՞ կարէ միջնորդ լինել, զոր օրինակ ջուր զխտո ոչ այրէ, այլ անեցուցանէ և սնուցանէ, այսպէս և յանցաւոր քահանայ, ոչ միայն թէ ոչ քաւ զմեղս ժողովրդեանն, այլ և առիթ լինի մեղաց և յորդորէ ի մեղս զժողովուրդն: Կոյր կուրի [ոչ կարէ] առաջնորդել. երկոքին անկանին ի խորխորատ ստուգապէս, ըստ գրոց բանի: Վասն որոյ պարտ է քահանային հրով հոգոյն նախ զինքն մաքրել և ապա զայլոցն ուտել զմեղս և ծախել հրով Աստուածայնով\*: Զի քահանայն մաքրող թարգմանի, զի մաքրեացէ զմեղս ժողովրդեանն սրբաւեր վարուք և մաքրափայլ աղօթիք: Եւ ըստ այլ տեսութեան հայր սսի քահանայն զի հայրաբար խնամարկեացէ որդիացելոցն զնոցին պակասութիւնն ինքեան համարելով, և իբրև անձին հոգ տանելով, որպէս զի համարս տալոց է ընդ ամենեցուն առաջի Աստուծոյ: Յաղագս այսորիկ եկեղեցի Աստուծոյ ոչ է ումեք սեպհական ժառանգութիւն, այլ ճմարիտ քահանայից, որք բարութեամբ պաշտիցեն: Եւ զիտել պարտ է, զի զժողովուրդն քահանային պարտ է անուանել ով ճմարիտ իցէ և ոչ եկեղեցոյ: Քրիստոնէի ոչ է օրէն զքրիստոնէ//ճառայ պահել կամ վաճառել, այլ իբրև զեղբայր սիրել և ընդունել, զի՞նչ տայցեն պատասխանի որք զանդամւրն Քրիստոսի դստեր բաժին տան կամ արծաթոյ վաճառեն, զի որպէս ասէ երանելի առաքեալն Պօղոս, Քրիստոս հարսնացոյց իւր զեկեղեցի և որպէս այրն և կինն մի մարմին է, այսպէս Քրիստոս և եկեղեցի մի է և յորժամ եկեղեցի վաճառի, Քրիստոս ընդ եկեղեցոյն վաճառի: Եւ զո՞ր ներել թողութեան ունիցի որ զՔրիստոս վաճառէ, կամ դստերաց պոռո՞ գտայ: Կամ կարէ՞ ասել այնպիսին, թէ քրիստոնէայ իցէ կամ քահանայ՝ եկեղեցավաճառ և աստուածավաճառ լինելով:

Ո՞ր դիցուք և զայնոսիկ, որք զսիմոնեան ախտն ախտանան, կուրութեամբ մտաց և ափշութեամբ սրտի, և որք զին առնուն զմեղս թողլով և կամ որք զհաւատս վաճառեն: Որպիսի՞ գեհեն զնոսա ոչ այրէ: Քրիստոս ձրի եթող զմեզ աշխարհի և դու զին առնուս և վաճառես զպարզակն Աստուծոյ: ԶՀոգին բաշխեաց Տէրն առաքելոցն առանց կաշառոց ի վերնատանն: Եւ դու արծաթոյ վաճառես զճնորհս Հոգոյն սրբոյ, «Որք ի Քրիստոս մկրտեցայք, զՔրիստոս զգեցայք»<sup>29</sup>, ասէ անայթն ընտրութեան Պօղոս, և Հոգին Սուրբ աներևութաբար ստուգապէս իջանէ ի ջուրս առազանին և դու անզգամիս արծաթոյ վաճառել զՈրդի զՀոգին Սուրբ Աստուծոյ: «Առէք կերայք, ասաց Տէրն, այս է մարմին իմ»<sup>30</sup>, և առաքեալ մաքրութեամբ ասէ մերձենալ և դու զի՞ն մարմնոյ և արեան Տեառն պահանջես: Եւ կարծես թէ չե՞ս Յուդա մատնի Քրիստոսի, կամ ի խաչահանուաց Տեառն: «Խոտեացին ընտրեալքն

\* Ձեռագրում՝ Աստուածայնով:

\*\* Ձեռագիրը անընթեռնելի, ցեցակիր է:

<sup>29</sup> Գաղատ. Գ. 27:

<sup>30</sup> Մատթ. ԻԶ. 12:

արծաթով»<sup>31</sup> ասէ մարգարէն, և գիրք սուրբք նգովեն զտուօղն և զառաղն արծաթոյն: Եւ դուք կոկեալ և փերկեառեալ պարեգոտիք կամիք արդարանալ: Մի՞թէ դու ունիս իշխանութիւն զՀոգին տալոյ զի վաճառես զՀոգին: Կամ դու, որ առնուս զպարգևն Աստուծոյ և չես արծանի, յարծաթն ապաւինիս իբրև զՍիմոն մոգ և կախարդ: Թէպէտ և արծաթաւերն ոչ ասէ՝ արծաթ քո ընդ քեզ լիցի ի կորուստ վասն իւրոյ ախտին, այլ երկոքին ի միասին պատժիք: Նա զի վաճառեաց զՀոգին և դու զի զպարգևն Աստուծոյ համարիս ընչիւք ստանալ՝ երկոքին պատժապարտ գտանիցիք: Ոչ լուայք ի գրոց սրբոց, զի ասէ. «Ոչ որ զանձն ընծայեցուցանէ\*, այլ զոր տէր ընծայեցուցանէ»<sup>32</sup>: Մովսէս զԱհարոն եղբայր իւր ոչ իշխեաց համարձակեցուցանել ի քահանայութիւն, առանց Աստուծոյ հրամանին, և ոչ ինքն Ահարոն համարձակեցաւ մատչել մինչև ի Տեառնէ կոչեցաւ: «Վաղվաղակի յորուք վերայ ձեռն մի դներ, Տիմոթեայ Պողոս պատուիրէ, և մի լինիր, ասէ, կցորդ մեղաց օտարաց»<sup>33</sup>: Եւ դու առանց քննելոյ արծաթսիրութեան կալեալ ախտի մատնես զՀոգին Տեառն Աստուծոյ տալով յանարծանս: «Վասն որոյ գա, ասէ, բարկութիւնն Աստուծոյ ի վերայ որոյցն անհնազանդից»<sup>34</sup>, պատուիրանին Տեառն, որ է ահագին յոժ:

Այսոքիկ հաչոց թերութիւնք և որ սոցին գոն մնանք: Եւ երանի թէ գոյր հնար բժշկել զհիւանդութիւնս զայս: Ջի շղուականք տիրեցին շնորհաց և որք թէատրոնից գոնէ արծան ոչ են այթոոց, օրինադիրք և կանոնօղք կարգեցան կրօնից: Չմժղուկս քամել և զողոսս կլանել<sup>35</sup> և զգերան առ շիղ ոչ փոխանակել, գործովք ապականեալք և հաւատովք ոչ յաւէտ փոյթ առ ճմարտութիւնն ունել: Վասն որոյ Յուդայ և Սամարիայ միասէս մոլորեալ ոռկանի ախտի ծառայել, միայն առ միմեանս մեծաբանելով՝ Ես պաղոսեան, Ես ապաղոսեան և ոչ մի ով իւրք ի ճշմարտութեան ծառայեալք, ոչ ոք սիրով զօրացեալ, ոչ խոնարհութեամբ բարձրացեալ, ոչ հեզութեամբ պայծառացեալք, ոչ զմիմեանս լա բան զանձինս համարեալ, այլ անձնահաճ, ինքնահաճ, ինքնօրէն ամենեքեան, ինքնասահման, ինքնականոն, սիրեցաք զփառս մարդկան առաւել քան զփառս Աստուծոյ: Եւ փոխեցաք զհաւիտեանականն ընդ առարէիս և զհանդերձեալ կենացն վայելսն ընդ աստեացս երազականի: Վասն որոյ գիրք սուրբ զմեզ յանդիմանեն և ի մարդկանէ եպերանս կրեմք և վայի եմք արծանի զի վասն մեր հայհոյի անունն Աստուծոյ:

Երանելի առաքեալն ըստ քաղաքաց քաղաքաց կարգեալ եպիսկոպոս և մի հրամայէ լինել եպիսկոպոս և ոչ երկու: Եւ այժմ տեսանեմք վաղվաղակի գլորովս, զի վասն սիմոնեան ախտին և յողայեայն արծաթոյն զազգայինս իւրաքանչիւր կենդանութեամբ միոյն զմիւսն առընթեր կա-  
 114բ ցուցանել և զգինս արեանն Քրիստոսի ինքեանց ժա//ռանգութիւն սեպհականել: Չայս յորո՞ց ազգէ ուսան ազգ քրիստոնէից, կամ յորո՞ց կանոնաց արիւնադրեցան կամ զո՞ր պատասխանատրութիւն ունին տալ Աստուծոյ: Հովիւք կարգեցան ի վերայ հօտին Քրիստոսի, և զանուն

<sup>31</sup> Սաղմ. ԿԷ 31:

\* Չեռագրում՝ ընծայեցուցանէ:

<sup>32</sup> Բ Կորնթ. Ժ 18:

<sup>33</sup> Ա. Տիմ. Ե 22:

<sup>34</sup> Ա. Տիմ. Ե 22:

<sup>35</sup> Մատթ. ԻԳ 24:

քաջ հովուին ժառանգեցին, որ զանձն իր եղ ի վերայ հօտին, զորոյ պարտին զնմանութիւն յինքեանս բերել որք հովիւք կարգեցան բանատր հօտին Քրիստոսի: Իսկ նոքա զայսպիսի թողեալ պողոտայ և զշառափղ ճշմարիտ հետևման հետոց քաջ հովուին, զարտուղին զնան նաւապարհ ըստ ձախողակի ընդացից: Փառամոլք և արծաթասէրք եղեալք, կաշտակերք\* և թիրաղատք, ձիաբոյծք և անասնապարսք, գինեւէրք և արբեցողք, հարեալ սիրտ զագահութեան, կրկնամեռք ըստ ներքին և արտաքին մարդոյն, առաջնորդելով ժողովրդեանն ոչ յարդարութիւն, այլ ի կորուստ և յապակեանութիւն, ի գայթակղութիւն և ի դատապարտութիւն: Ընդ որս առաւել հեշտացեալ ուսմիկ ժողովորդ, իբրև զվէմ զառիվայր հողովեալ, զանցուցանեն ի շարութիւն և ի ճշմարիտն կոչեցեալ դժուարին և հրաժարեն: Թէ զայլոց քրիստոնէից գողութիւն ոք ի մէնջ բերէ և նախանձատր այնմ յորդորէ լինել զինքեանս սուրբ Գրիգորոյ հապատովն ասեն և շատագով նմին քարոզեն: Ապա թէ զմերն ոք ստիպէ պինդ ունել զբարի, և մի յայլոցն խոտորել հեշտութիւն և յանկարգութիւն, այնմ ընդդէմ բերել հակառակին ասելով՝ Ոքա չեն միթէ քրիստոնէայք և աստուածապաշտք: Որ ևոցայն, ասեն, երթիցէ հոգի, եղիցի և մերս ընդ նոսին: Եւ զայն ոչ կարեն իմանալ թէ ոչ եղիցի այնպէս, այլ ի մէնջ հեռանան և ընդ նոսին ոչ դասին, զի հա որ յերամէ ելանէ, մոլորական շրջի, և քար որ ի կարգէն ուսնու, յայլում վայրի գտեղի ոչ սունու, այնպիսի պարտ է իմանալ որք սակս մարմնոյ հեշտութեան ի փոփոխումն յօժարին, թէ ի մէնջ հեռանան և ընդ այլ քրիստոնէայս ոչ դասին: Զի Աստուած պահանջէ ի մարդոյ զհաւատ, զոր յաւազանէն առեալ, թէպէտ մի Քրիստոս և մի Տէր և մի մկրտութիւն, այլ ըստ սահմանի լեզուին և գրոյն զպահպանութիւն կարգին պահանջէ, զի թէ յառաքինութենէ յառաքինութիւն և զօրութենէ ի զօրութիւն փոփոխէր ոք գոյր պատճառին չխօսից և տեղի բանի յառաջ բերելոյ հայթայթանս և կարծիս տալ մարդկան երկեղածութեան:

Իսկ եթէ վասն մարմնապաշտութեան և զմարմինս պարարելոյ և զորովայն խճողելոյ և աստուածուցանելոյ, զո՞ր պատասխանի ունին տալ առաջի մարդկան կամ Աստուծոյ: «Զի որ սերմանէ ի մարմին, ասէ առաքեալ, ի մարմնոյ անտի հնձէ զապակեանութիւն»<sup>39</sup>: Եւ վասն այսորիկ պարտ է զարհուրել և դողալ, զի թէ խորհրդոց և բանից քննութիւն է, որպէս և է ճշմարիտ, ապա ո՞րչափ ևս առաւել գործով մեղուցելոց, որոյ սատիկ է պատիժ պատուհասին և մարդիկ թէ միմեանց մեղանջեն, վրէժխնդրութիւն է յԱստուծոյ: Ապա ո՞ր ներել թողութեան կայցէ յորժամ զօրէնս Աստուծոյ ոք արհամարհէ և ընդդէմ Տառն ընդվզեալ հակառակիցի: Ազգս հայոց առին ի յունաց զվիսութիւն և զլանդգնութիւն, ի Ֆռանկաց՝ զձկնակերութիւն յատրս պահոց և զգինըմպութիւն, յասորոց՝ զանփոյթ առնել զխոստովանութենէ և զմկնանկ և զշանչազածի օրհնութիւն, զոմանց թողլով զպահոց պնդութիւն և զչերմ ի հաւատս լինել զկիսոց անփոյթ արարեալ զհնազանդութիւն եկեղեցոյ և եկեղեցականաց, զոմանց ոչ զմտաւ ածել զտօնասիրութիւն և զյորդումն աղօթից, զոր յամենայնէ ի բարոյ հեռացաք ասելով զօգուտն և զչարն սիրեցաք: Նա և զի՞նչ է պարտ ասել և զատելութիւն և զնախանձ և

\* Ձեռագրում կաշտակոյրք:

<sup>39</sup> Գաղատ. Զ 8:

զկայենի եղբայրսպանութիւն: Ոչ միայն զմարմին, այլ և զհոգի չարապէս նենգութիւն: Եւ թէ Նոյեան դարուն ջրհեղեղն ոչ ողողէ զմարմինս մեր, կամ սողոմական հոտ կիզէ, բնաւ ոչ ածեմք զմտաւ, թէ հեղեղ մեղաց զհոգիս մեր խորասուզէ և հոտ ցասման տոչորէ: «Որ հայի ի կին մարդ, ասաց տէրն, ցանկութեամբ, նոյն ժամայն սրտի շնացաւ»<sup>37</sup>, և «որ բարկանայցէ տարապարտոց ի վերայ եղբօր, պարտաւոր լիցի զեհեն հրոյն»<sup>38</sup>: Եւ տեսցուք\* թէ ո՞վ գտանի ազատ յայցսանէ և կամ ո՞վ պարծեսցի ունել սիրտ սուրբ առաջի Աստուծոյ, ըստ հրամանի գրոց սրբոց:

Նաև զայցսանէ ոչ է պարտ զանց առնել, քանզի յեթն ատուրց գորարար Աստուած, զատուց ար մի յատուկ և սեպհական ինքեան, զի  
 115ա պարապեսցեն մարդիկ//յամենայն հոգոց մարմնականաց և խոստովանութեամբ և ասպաշխարութեամբ արժանի լինին թողութեան մեղաց, և հաղորդութեան վարմնոյ և արեան Տեառն: Իսկ յայնմանէ բազմապատիկ ևս զրկէ բանասրկուն, և մեծամեծ չարեաց սրար զնոյնն պատճառ, քանզի յայնմ ատուր հնարեցաւ կարգեալ զվաճառաշահութիւն, յորում առաւել զայթագրին մարդիկ ի մեղս բազմապատիկս, ի սուտ ասել, ի զրկել, ի նենգել, յիշոցել, ի սուտ և յիրաւ երդնուլ, յարբեցութիւն, ի պողոնկութիւն, ի սպանութիւն, ի թատերս, ի խաղս, յաղանդաորութիւն ի ծաղրածութիւն, ի լրբութիւն և յայլ ամենայն չարիս: Քանզի քահանայն որ է զլուխ ժողովրդեանն և հովիւ քահաւոր հօտին Քրիստոսի, փոխանակ այնմ որ առաւել քան զայլ ատուրսն պարտ էր յեկեղեցի դիմել, պատարագ մատուցանել, զհաղորդն փոխել, զոր չէ պարտ ըստ կանոնաց սուրբ հարցն՝ քան զութօրն յառաջ անցանել առանց փոխելոյ փրկական\*\* հաղորդութեանն, այլ յամենայն կիրակէի նորոգել զժողովուրդն, խոստովանեցուցանել, և հաղորդել և պատուէր տալ յատուր կիրակէի առաւել զաղքատս կերակրել և զբանդեալս տեսանել և զօտարս ժողովել, զհիրս սիրով ընդունել և զամենայն բարեգործութիւնս փութանակի կատարել, որով հաճի Աստուած և զխնդրուածսն կատարէ: Իսկ փոխանակ այսորիկ զի՞նչ գործէ քահանայն յատուր կիրակէի: Առաջի ժողովրդեանն անցեալ, առաջնորդէ ի կրպակատուրսն և ի վաճառափողոցսն ի ստախօսութիւն, ի զրկանս, յարբեցութիւն և յամենայն մեղաց տեսակս, որովք առաւելապէս բարկացուցանեն զԱստուած և ի ցասումն շարժեն ի վերայ արարածոց: Եւ այս ամենայն և սոցին նմանս ի ծուլութենէ առաջնորդաց և յանփոյթ առնելոյ զկորուստ բազմացն: Զի յորժամ հովիւն զահալիժի, հօտքն անտերունչք շրջին: Եւ երբ զօրաւարն ի կապանս ըմբռնի ի թշնամեաց, զօրքն ո՞րպիսի վշտօք ոչ տանջեացին և յանդունդս խորոց ընկղմիցին: Վասն այսորիկ եղև քահանայն, իբրև զմի ի ժողովրդեանն և ուսուցիչն իբրև զուսանողն և կամ ևս վատթարագոյն:

Նաև այլ քրիստոնեայ ոչ թէ ամենայնի ազատ են յայնմ պարսաւանաց, այլ ոմն այսպէս և ոմն այսպէս և նոքա գրեցեն ի ճշմարտէն: Եւ յոյնք անելի ևս յայն սխալեն, զի գիտութեամբ մեղանչեն և ամբար-

<sup>37</sup> Մատթ. Ե. 28:

\* Ձեռագրում՝ տոսցուք:

<sup>38</sup> Մատթ. Ե. 22:


\*\* Ձեռագրում՝ փրկանակ:

տառանդեամբ ընդդէմ հակառակին ճշմարտութեանն և գառաքելականն ջրել ջանասն զքանսն և զոր գիտեն որ սուտ են, հնարին իրասնայ:

Այլ դու զգոյշ լեր Գրիգորիէ, որ յայս աշխատանս զմեզ հարկեցեր, գոցէ գթեցես, զի ամենայն բան երկին է ըստ մեծի աստուածաբանի և երկու շաղօք ընթանայ: Եւ այլ է վերին երեսնին, և այլ խորին միտք խորհրդոցն, յոր թէ ոչ որ ստուգիս հասցէ ի վերայ գայթազդի: Դարձեալ ասես զգոյշ լեր:

Բազում ինչ կամէի գրել, այլ վասն անպարսպութեան ոչ զարեցի սակայն եռակի գրես՝ զգոյշ լեր, զի մի գայթակղեցիս:





## ՄԵԾ ՊԱՀՈՑ ԽՈՂԵՐ

«Հոգի Տեանն ի վերայ իմ, վասն որոյ և օծ իսկ զիս, անտարանել աղքատաց առաքեաց զիս, բժշկել զբեկեալս սրտի, քարոզել զերեաց զթողութիւն և կուրաց տեսանել, արձակել զվիրաւորս ի թողութիւն» (Ղուկ. Դ 18—19):

Մեր Տերը Հիսուս, անապատում փորձությունից և չարի դեմ տարած իր քարոզչական մեծ հաղթանակից հետո, Գալիլիա վերադարձաւ՝ ձեռնարկելու իր առաքելական և քարոզչական գործունեությանը՝ որպէս ուսուցիչ և վարդապետ: Երբ «ուսուցիչ» բառն էմ օգտագործում, նկատի չունեմ, որ Հիսուսը փիլիսոփայության կամ աստվածաբանության դասախոս էր: Նրա հետաքրքրության գլխավոր առարկան մարդն էր իր առօրյա հոգսերով, ապրումներով և փորձություններով: Հիսուսի ուսուցման նպատակն էր՝ նոր ժամանակների Աստուծո թագավորությունը ավետելը և այդ վեհ գործին հասնելու համար ուսուցումը՝ մարդկանց տալով Աստուծոյն աննաչելու մի նոր տեսիլք ու հավատք:

Հիսուսը խորապէս հավատում էր, որ իր քարոզությանը մի նոր օր, մի նոր կյանք էր սկսվելու, և մարդկանց սպասում էր մի նոր աշխարհ, որտեղ նրանք ապրելու են խաղաղ ու համերաշխ Աստուծո և իրենց եղբայրների հետ: Հիսուսի առաքելության նպատակն էր՝ ավետել այս բարի լուրը և կոչ անել ժողովրդին պատրաստվելու դրան:

Ահա թե ինչու իր հանրային գործունեու-

թյան սկզբին մեր Տիրոջ համար հատկանշական էր ընտրել Եսայի մարգարեի վերոհիշյալ խոսքերը (Եսայ. ԿԱ 1), որոնցում ընդգծվում էր այն ծառայությունը, որ նա պետք է մատուցեր ժողովրդին, և որի համար ինքը ընտրվել էր Աստուծո կամքով:

Հիսուսը կոչ էր անում ժողովրդին՝ հավատալ իր առաքելության և քարոզության վեհությանը. «Ամէն ամէն ասեմ ձեզ, զի որ զբանն իմ լսէ և հաւատայ, այն որ առաքեացն զիս, ընդունի զկեանսն յաիտեանականս և ի դատաստան ոչ մտանէ, այլ փոխեցաւ ի մահուանէ ի կեանս» (Հովհ. Ե 24):

Հիսուս իր կյանքով և քարոզությանը միացած էր իր երկնավոր Հոր հետ: Երկրավոր կյանքում Աստված նրան տվել էր գիտակցությունը աննաչելու իր Հորը և այդ պատճառով նա կարող էր ասել ամենայն խոնարհությամբ. «Եկայք առ իս ամենայն վաստակեայք և բեռնաւորք և ես հանգուցից զձեզ, անէք զլուծ իմ ի ձեզ և ուսարուք յինէն, զի հեզ եմ և խոնարհ սրտի և գտցիք հանգիստ անձանց ձերոց, զի լուծ իմ քաղցր է և բեռն իմ փոքրոգի» (Մատթ. ԺԱ 28—29):

Հիսուսի այս խոսքերը արտահայտությունն էին այն գիտակցության, որը զալիս էր Աստուծո հետ միշտ կապի մեջ լինելու նրա կյանքի փորձից: Նա այդ մասին խոսում էր խորունկ ներհայեցողությամբ, լուռ, քայց ինքնավստահ զգացումով և հեղինակավոր շեշտով:

Չորրոյունը, որ Աստված Հիսուսի միջո-

ցով աշխարհի ուղարկեց, սիրո ուժն էր: Սիրո այդ գործությունը միակ զենքն էր, որ Հիսուսն օգտագործեց մարդկանց սրտերը գրավելու: Հիսուսն այդ գիտակցությամբ ապրեց ու գործեց: Եվ իր կյանքի վերջավորության սիրո նույն այդ ոգին որպես կտակ ավանդեց իր աշակերտներին՝ նրանց ապագա առաքելության և քարոզչության ճանապարհի վրա, կյանքում իրենց անձը բարձրացնելու կատարելության այն բարձունքները, որ նրանք կարող կլինեն նաև հավելու Աստուծուն և զգալու նրա կենսանորոգ, վերանորոգիչ գործությունը:

Բայց Հիսուսը, ուսուցանելուց և քարոզելուց բացի, մի ուրիշ առաքելություն էլ ուներ մարդկության համար: Նա պետք է իր արյունը թափեր խաչի վրա՝ մարդկանց մեղքերի համար: Հիսուսի խաչելությունն ու մահը նրա փրկագործ առաքելության գլխավոր նպատակն էր կազմում. «Զի այնպես սիրեաց Աստուած զաշխարհ մինչև զՈրդին իր Միածին ետ, զի ամենայն որ հաւատայ ի նա, մի կորիցէ այլ ընկալցի զկեանսն յսփտեանական» (Հովհ. Գ 16):

Քրիստոսը եկավ-կատարեց ինչ որ բարի էր, քարոզեց ճշմարիտ և աստվածահան կյանքը, ավետեց, որ Աստուծո թագավորությունն է հաստատելու աշխարհում, և որի իրականացման համար նա քաջեց մարդկային տառապանքների ճանապարհի միջով, մինչև Գողգոթա, ուր հեղեց իր արյունը խաչի վրա: Նա իր օրհնանքը չդադարեցրեց նույնիսկ այն պահին, երբ իր մարմինը չարչարվում էր ստացած հարվածների խոցերից, ներեց նրանց, ովքեր ձաղկում էին իրեն, և երանական կյանք խոստացավ խաչի վրա ապաշխարող ավազակին:

Հիսուսն իր կյանքի օրհնակով ապացուցեց քարոզած իր գաղափարների վեհությունն ու ճշմարտությունը. «Սիրեցէք զՅուշնամիս ձեր, օրհնեցէք զանիծիչս ձեր, բարի արարէք ատելեաց ձերոց և աղօթս արարէք ի վերայ այնոցիկ որ լլկեն զձեզ և հալածեն» (Մատթ. Ե 44):

Քրիստոսի սերը հայտնվեց խաչի վրա: Մարդկության համար տառապող սիրո այդ աստվածատուր ուժն է, որ գրավում է մարդկանց սրտերը:

Քրիստոսը չարչարվեց ու խաչվեց մեզ համար, մեր փրկության համար, որպեսզի մենք էլ գիտակցությունն ու քաջությունը ունենանք մեր խաչերը կրելու այս երկրավոր կյանքի ճանապարհի վրա, հետևենք իր ճշմարիտ օրհնակին և վայելենք կյանքի հոգեվոր գեղեցկությունն ու բերկրանքը և հասնենք առավել կյանքի:

Հետևաբար մենք էլ, որպես քրիստոնյա, ոչ միայն պետք է հաշտվենք հոգեբանական

և ֆիզիկական այն կացությունների հետ, որոնց մեջ ենք գտնվում, այլ նաև պետք է մեզ հանձնենք Աստուծո նախախնամությանը և մեզ դնենք Քրիստոսի քաղցր սիրո շքշանակի մեջ: Միայն ու միայն այդ դեպքում է, որ պիտի զգանք մեր հոգու ներքին խաղաղությունն ու երջանկությունը, որոնք կյանքը դարձնում են ավելի իմաստալից և արժանի ապրելու:

«Ես եմ լոյս աշխարհի, որ զայ զկնի իմ ընդ խաւար մի զնասցէ, այլ ընկալցի զլոյսն կենաց» (Հովհ. Ը 12):

Քրիստոսի խոսքերը գալիս են դարերի խորքից, բայց դրանք թարմանում են միշտ, ինչպես առավոտյան ցողով պայծառացած արևի լույսը: Քրիստոսի խոսքերը պատմում են մեր փրկության ճանապարհի մասին, հավատքի լեզվով, հույսի գիտակցությամբ և ապրված ճշմարիտ և առաքինի կյանքի օրհնակով: Այդ խոսքերի միջոցով Քրիստոսի մահն ու հարությունը դառնում են աղբյուր «առատել կեանքի» և հավիտենականության:

Մարդկության հանդեպ Քրիստոսի տաժաժ գոհողությունն ու սերը իր գազաթնակետին է հասնում նրա մահվամբ և հրաշափառ հարությանը: Այն քրիստոնեական հույսը, որ մենք չենք կորչելու այս կյանքում ապրած կարճ ժամանակից հետո, հայտնվում է այնտեղ՝ Քրիստոսի թափուր գերեզմանում: Եթե Ադամի մեղքով մահվան ենք դատապարտված, Քրիստոսով արդարացվում ենք և արժանանում հավիտենական պսակին, եթե հավատում ենք Քրիստոսի փրկարար առաքելությանը և ուժին:

Այն ստույգ իրողությունը, որ Քրիստոսը եկավ, քարոզեց, հրաշքներ գործեց, բժշկումներ կատարեց, չարչարվեց, խաչվեց և հարություն առավ, առավելագույն չափով մեզ ցույց է տալիս այն մեծ ու փրկարար սերը, որ Աստված տաժում է մեզանից ամեն մեկի հանդեպ: Նշանակում է, որ Աստված մեզ արժանի է համարել այն գոհողությանը, որ արել է մեզ համար: Երբ մի սովորական հայր այնքան գուրգուրում է իր զավակներին, տիեզերքի հայրը, որ մեր Արարիչն է և գոյության խարխուլը, ինչպե՞ս չսիրի մեզ և չգուրգուրի:

Քրիստոսի մահն ու հարությունը մեզ պետք է համոզի, որ Աստված գերազանցապես սիրում է մեզ և միշտ էլ պատրաստ է ետ ընդունելու որևէ մեկին, որևէ ժամանակ, ինչքան էլ մեղավոր լինի այդ անձը, եթե նա ճշմարտապես զոջում է ու ապաշխարում և խոստովանում, որ Քրիստոսը մեռավ նաև իր համար: Մեզանից ամենից մեղավորը կարող է ամենից սուրբը դառնալ Քրիստոսով: Այս է Ավետարանի ճշմարիտ պատգամը:


Մեծ պահոց զղջումի և ապաշխարության այս օրերին մեր հավատքն ու հույսը դնենք հարուցյալ Քրիստոսի վրա: Կյանքի վերածենք բոլոր այն շնորհները, որ ստացել ենք և տևապես ստանում ենք սուրբ Հոգուց: Այդ շնորհները պետք է զորացնեն մեր կամքի ուժը:

Հետևաբար ամենից առաջ դադարեցնենք մեր ներքին աշխարհում տեղի ունեցող հոգեկան պատերազմը, մեր հոգու խոռվքն ու փոթորկումները, որոնք ծագում են հպարտությունից, նախանձից, ատելությունից և առհասարակ չար մտածումներից և անազնիվ ձգտումներից:

Հսկումի այս խորհրդավոր պահին ջերմեռանդ աղոթենք, որ Հիսուսի խոսքերը նորից արձագանքեն բոլոր լեզուներով աշ-

խարհի բոլոր անկյուններում և մարդկանց բոլոր սրտերում: Թող դրանք հույսի շունչ և կյանքի առաջնորդ լինեն մեզ բոլորիս, մըխիթարություն և հանգստություն պատճառեն վշտաբեկներին, խաղաղություն ներշնչեն նրանց, ովքեր վախի և շփոթության մեջ են, և թող դրանք ուրախացնեն, վերանորոգեն մեզ և առաջնորդեն մեզ հավատքի ճանապարհով՝ գտնելու և ճանաչելու նրան, որ է «ճանապարհ, ճշմարտություն և կեանք» (Հովհ. ԺԹ 6): Թող խաչյալ և հարուցյալ Քրիստոսի Ավետարանի լույսը և անհատնում սերը լուսավորեն ու ջերմացնեն մեր հոգիներն ու սրտերը այժմ և միշտ: Ամեն:

ՍԱՐԳԻՄ ՍԱՐԿԱՎԱԳ ՍԱՐԳՍՅԱՆ





**Յ Ո Ւ Ց Ա Կ**  
**ՄԱՅՐ ԱԹՈՒ Ա. ԷԶՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ**  
**ԶԵՌԱԳՐԵՐԻ\***

№ 333  
 ԱԻԵՏԱՐԱՆ

**Թերթերը՝ 299:**—**Պրակները՝ 24,** յուրաքանչյուրը 12-ական թերթից, բացի ԺԲ՝ 10, ԺԳ՝ 11 և ԻԴ՝ 16: **Զեռագրի սկզբում կա հավելվածական մի պրակ՝ 10 թերթից բաղկացած:**—**Մեծությունը՝ 17,2×12,7×4,2 սմ.:**— **Նյութը՝** դեղնած բարակ դիմացկուն թուղթ:— **Կազմը՝** կարմիր թավապատ տախտակ, ունի երկու բռնիչներ: **Զեռագրի կոնակում կան մեծ գլխով չորս գամեր,** իսկ մատյանի երեսին էլ մեխված է դեղին մետաղյա մի խաչ, որի կենտրոնում կա խաչված Հիսուսը, իսկ խաչի վրա փորագրված է. «Յշուկ. է Զաթալին և Նետսպեքե են. գոյն»: **Կազմի չորս անկյուններում էլ մեկական եռանկյուն մետաղ է ամրացված:**—**Պահպանակները՝** սկզբում մեկ, իսկ վերջում երկու սպիտակ հաստ թուղթ: **Զեռագրի վերջում գտնվող երկրորդ թղթյա պահպանակի վրա հասակ կերպով երևում է, որ անխապես դրա կողքին եղել է շատ հավանաբար մագաղաթյա մի թերթ,** որի վրա գոյություն է ունեցել մանր երկաթագրով գրություն: Այս գրության թանաքի տիպը դուրս է եկել պահպանակի վրա: Դժբախտաբար այժմ մագաղաթը չկա, ընկել և կորել է, սակայն գրության հետքը մնացել է թղթի վրա:—**Վիճակը՝ լավ:**—**Գրությունը՝** երկպուն:—**Դատարկ թղթերը՝ 2բ, 3ա, 4բ, 5ա, 6բ, 7ա, 8բ, 9ա, 10բ, 20թա և 20թբ:**—**Տողերը՝ 21:**—**Գծումները՝** ճընշումով:—**Գիրը՝** բոլորգիր:—**Զարդագրություն՝** ձեռագիրը Կաֆայի մանրանկարչական դպրոցի հիանալի մի անուշ է: Ունի ավետարանիչների երեք գեղեցիկ նկարներ (թթ. 12բ, 97բ և 234բ: Չորրորդը կտրված ու հանված է չարագործ մի ձեռքի կողմից), ինչպես նաև շատ սիրուն չորս խորաններ (թթ. 13ա, 98ա, 153ա և 235ա): Օգտագործված գույներն են՝ որդան կարմիրը, ոսկեգույնը, կապույտը, նարնջագույնը և

այլն: Բացի այդ, ձեռագրի սկզբում, հավելվածական պրակում կան տասը կիսախորաններ (թթ. 1բ, 2ա, 3բ, 4ա, 5բ, 6ա, 7բ, 8ա, 9բ և 10ա), որոնք նկարված են ավելի հասարակ ոճով: Օգտագործված են կապույտ ու կարմիր գույները: Տեքստը Ավետարանի համաբարբառն է: **Զեռագրում կա գեղեցիկ մեկական մարդագիր (13ա), կենդանագիր (98ա) և զազանագիր (153ա) և երկու թռչնագիր-նկանագիր (70բ և 78ա):** Կան նաև բազմաթիվ թռչնագրեր, զարդագրեր, լուսանցագարդեր, թռչուններ, խաչեր, ծաղիկներ և զարդեր:—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատուն՝** անհայտ:—**Ծաղկողը՝** անհայտ:—**Ժամանակը՝** 1466 թ.:—**Վայրը՝** Կաֆա (Ղրիմ):—**Ծանոթություն՝** սույն արժեքավոր ձեռագիրը Մայր Աթոռը նվեր է ստացել արծ. Տեր Գրիգոր քահանա Տերտերյանից:

**ՀԻՇՏԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ**

- Թ. 150բ.—Արհմությունն որ կարդա, գովությունն որ լսե, փառք փրկչին, և յիշատակ գրչիս ամեն:
- Թ. 233ա.—Արհմությունն որ կարդա, գովությունն որ լսե, փառք տուողին, և Աստուծոյ մարդասիրին: Յիշատակ է սա՛ գրչին. ես այլ գրեցի:  
 Տարտամս յիմաստըս սուրբ գրոց.  
 Որովք սնայ յարբունս տիոց,  
 Ահա՛ կարօտ սոցին համոց.  
 Գտա՛ գրեալ յաւարտ հոգոց:  
 Ուստի հարեալ սրտիս ի խոց.  
 Եւ տոչորմանս որ կա յիս բոց,  
 Զայս արսկեմ կաթս անձրևոց.  
 Ըզձեռահիսս սուրբ գրոց:  
 Միթէ գնացիք այսոց գետոց.  
 Իմ գովացի ծարասս ոգոց,  
 Եւ սփոփեսցի յիւրոց ցաւոց.  
 Արբեալ տաճար տեսո՞ն անթօց:  
 Այսու յուսով յերկս վաստակոց.  
 Կամ ի յոքունց մէջ ի հոգոց,  
 Զի արծարծեալ ճրագիս իմ բոց.  
 Մի խրթնացի յօտար հողմոց:
- Թ. 297բ.—Փառք Աստուծոյ ամեն: Փառք ամենասուրբ Երրորդութեանն հար և որդոյն և հոգւոյն սըրոյ. ամեն:  
 Որ շնորհօքն աւարտեսցաւ ետանրաք և հոգիագարոյ սուրբ անտարանս:

\* Ծարումակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի №№ Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի №№ Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի №№ Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի №№ Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի №№ Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի №№ Ա—Գ-ից, Ը-ից, 1974 թվականի №№ Գ-ից, Է—Ը-ից և 1975 թվականի № Ա-ից:

Ձոր է շաղկապեալ սրբոց անտարանչացն ըստ բազմերանց գունոց. ի մի ոստայն, անկելով հանճար:

Ձոր արուեստակեալ անուշողաց, ծաղկանց. իղևփեցական կազմութեամբ, որ ըստ հոգւոյն. յատկութեան իմանի. օանագան որակութեամբ, գաղափարելով ըստ յորունց արփիացելոցն դասակցութեանց: Ան ի յարմարումն եկեղեցու յոյի խաղաղութեամբ գրելոյն պատշաճեալ:

Ձի յայսմանչ կատարելութեան, չորս անտարանք ի բազում պատճառե, նախ զի. չորեքկերպեան կենդանիք՝ մարդ, առիծ, եզն, արծի: (Թ. 298ա): Չորս նիւթք աշխարհիս՝ հող, ջուր, արդ և հուր, թշնամիք անհաշտելիք և սիրելիք անքակտելիք: Չորս՝ չորս գիր անուան ամենասուրբ Երրորդութեան՝ Հայր, Որդի, Հոգի: Չորս գետք ելանեն ի դրախտէն՝ Փիտն, Գեհնոն, Տիգրիս և Եփրատէ: Չորս անկիւն և չորս եղջերք սեղանոյն: Չորս թևք սրբոյ իաշին: Չորս առաքինութիւնք հոգւոյ՝ խոհեմութիւն, արիութիւն, ողջախոհութիւն և արդարութիւն: Չորս ծագք տիեզերաց՝ արևելք, արևմուտք, հիւսիս և հարաւ: Չորք բանք անտարանին՝ պատգամ և պատուիրան, սպասնայիս և անտիս: Չորս բանի խաւսի անտարան՝ հրամանաւ և խրատով, արքիմակով և վկայութեամբ: Եւ այլ բազում պատճառ են յորս գաղափարին չորեքեան անտարանս:

Որոյ ցանկացաւդ եղեալ աստուածա(թ. 298բ)-խաւս և անտարեր սուրբ անտարանիս, որ գրեցաւ ի Կաֆա ի թվ. հալոց ԶԺԵ (1466 թ.—Ն. Մ.):

ՀԻԾԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Սկզբի պահպանակի վրա)  
Նվեր Տէր Գրիգոր քահանայ Տէրտէրեանին  
Տէր Մկրտիչ առագ քահանայ Չորչոփեանից: 1970 թ.:

Թ. 298բ.—915 թ. Փրկչ. 1466 թ. (Թէոդոսիա)  
(Ղրիմու):  
(Վերջին պահպանակի վրա)  
Աղօթք վասն երաշտի.

Տէր Աստուած մեր, որ յաղագս առ քեզ նախանձում՝ լուար Շիլայի մարգարէին ի ժամանակին յայնմիկ և երկնի հրամայեցեր արգելով զանձրև, զի մի տացէ երկիր զպտուղ իւր և դարձեալ յաղագս խնդրոյ նորս ցող պտղաբեր պարգևեցեր:

Դու Տէր յամենայնի շարժեալ ի բարեգթութենէ քումմ՝ անձրև ըստ կամաց քոց պատրաստեցեր ծառանգութեան քում և զբազում միոյ մեր անտես արարեր: Եւ այժմ աղաչենք զքեզ զանձրևս քո առաքելա, որք պէտս ունին և խնդրեն ի քէն: Ուրախ արա՛ զերեսս երկրի յաղագս ժողովրդեան քո և վասն տղայոց և անասնոց և ամենայն կենդանեաց. որք ակն ունին առ քեզ տալ նոցա կերակուր ի ժամու: Ձի դու ես Տէր Աստուած մեր՝ Աստուած բարերար. և քեզ վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յախտեանս յախտեանից, ամէն:


№ 334  
ԱՒԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 302:—**Գրակները՝** 26, յորաքանչյուրը 12-ական թերթից, բացի ԻԶ՝ 5, Ա և Բ՝ 10, Գ՝ 13:—**Մեծութունը՝** 20,7×15×6,8 սմ.:—**Նյութը՝** դեղնած դիմացկուն հաստ մագաղաթ:—**Կազմը՝** կապույտ թավշապատ տախտակ, ունի մի բոնիչ, իսկ կազմի երկու երեսներում կան մետաղյա եռանկյուն գարդեր, որոնք ամրացված են չորս անկյուններում:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** լավ:—**Գրությունը՝** երկպուն:—**Դատարկ թղթերը՝** 1ա, 1բ, 2ա, 3բ, 4ա, 5ա, 6բ, 7բ, 8ա, 9բ, 10բ և 11ա: **Տողերը՝** 21:—**Գծումները՝** ճնշումով:—**Գիրը՝** բոլորգիր: **Զարդագրություն՝** մագաղաթյա սույն արժեքավոր ձեռագիրը Սպահանի մանրանկարչական արվեստի շատ գեղեցիկ անուշենից մեկն է: Մատյանն ունի ութ էջ համաբարբառ (2բ, 3ա, 4բ, 5բ, 6ա, 7ա, 8բ և 9ա), չորս էջ ավետարանիչների գեղեցիկ նկարները (11բ, 93բ, 148բ և 236բ) և չորս էջ սիրուն խորաններ (12ա, 94ա, 149ա և 237ա): Բացի այդ ձեռագրում կան մեկական գեղեցիկ հրեշտակագիր (12ա) և մարդագիր (67ա), երկու գազանագրեր (94ա և 149ա) և բազմաթիվ զարդագրեր ու թոչնագրեր: Կան նաև բազմաթիվ սիրուն լուսանցագրեր, թոչնոցներ և զարդեր:—**Գրիչը՝** Ստեփանոս քահանա:—**Պատվիրատուն՝** Խոջա Գրիգոր:—**Ծաղկողը՝** անհայտ:—**Ժամանակը՝** 1616 թ.:—**Վայրը՝** անհայտ, սակայն շատ հավանաբար Սպահան:—**Ծանոթություն**՝ Մայր Աթոռի Ձեռագրատունն նվեր է ստացել սույն արժեքավոր ձեռագիրը անծանոթ մի նվիրատուից:

ՀԻԾԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

(Բոլոր հիշատակարանները գրված են նոտագրով):  
Թ. 10ա.—(Ո)վ սուրբ անտարանիչ Մատթեոս որ կոչիս երգ կենաց կամ բան ջահից, դու բարեխաւսեալ առ քարոզեալն ի քէն մարդացեալն Աստուած Յիսուս Քրիստոս. զի լուսաւորեսցէ զհոգի սուրբ անտարանիս ըստացողին Խօջայ Գրիգորին, և զուգակցին իւրոյ Սողոմէին, և որդոց իւրոյ պարոն Սուքիասին, Մէլիքին, Ոսկանին, և դատերաց իւրոց Դշխունին, և Գուլիխաս Տատումին, և թոռներաց իւրոց Աստուածատրին, Մալիջան աղին, Յակոբջանին, Սեփուհէ, և այլոցն ամենայնի. զկենդանիսն խաղաղական կենաց պահեսցէ անփորձ մնալ ի չարեաց երևելի և աներևոյթ թշնամոյն, և զննչեցեալսն արժանի արասցէ մտից առագաստին լուսոյ. և ինքն արհնեալ եղէցի յանտարանս ամէն. թվմ. ՌԶԲ (1633 թ.—Ն. Մ.) մայիս ԺԵ, արևն Դ. շաբաթ:

(Ծարմունակելի)



**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և Քեներքերիի նորընտիր արքեպիսկոպոս Դոնալդ Ֆրեդերիկ Գոկանի միջև փոխանակված պաշտոնական գրությունները 3

Քեներքերիի արքեպիսկոպոս Դոնալդ Ֆրեդերիկ Գոկանի հրավեր-ամսակը 3

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի . . . . . 3

Հայոց Հայրապետի ամսակը Քեներքերիի նորընտիր արքեպիսկոպոս Դոնալդ Ֆրեդերիկ Գոկանի . . . . . 4

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ողջույնի և սիրո կոնդակը Քեներքերիի արքեպիսկոպոս Դոնալդ Ֆրեդերիկ Գոկանի . . . . . 5

Հաղորդագրություն . . . . . 6

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Գևորգյան ճեմարանի հիմնադրության 100-ամյակը . . . . . 7

ԿԱՐԱՊԵՏ ՍԱՐԿԱՒԱԳ ՏԷՐ-ՄԿՐՏՉԵԱՆ—Ուկստի խօսք արտասանուած Տ. Տ. Գեորգ Դ կաթողիկոսի շիրմի վրայ . . . . . 10

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆ—Նորին Վեհափառության օծման երկրորդ տարեդարձը և ս. Էջմիածնի ուսումնարանի հիմնարկությունը . . . . . 13

Գևորգյան ճեմարանի դասախոս և սիրված բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանի ճառը ճեմարանի հիմնադրության 15-ամյակի առթիվ . . . . . 16

ՍԱՄՎԵԼ ԱՆԹՈՍՅԱՆ—Հայ դպրության նոր դարբնոցը . . . . . 18

ԽԱԶԱՏՈՒՐ ԿԱՆԱՅԱՆ—Ողջույնի և երախտագիտության խոսք Գևորգյան ճեմարանի 100-ամյակի առթիվ . . . . . 25

ՄԻՀՐԱՆ ԳԱՄԱՂԵԼԻ ԳԱՄԱՂԵԼՅԱՆ—Էջմիածնի Գևորգյան ճեմարան . . . . . 28

Կ. Պոլսի հայոց ամենապատիվ տ. Ծնորհք սրբազան պատրիարքի 1974 թվականի տարեկան տեղեկագիրը . . . . . 35

Խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսի միջազգային քարտուղարության նստաշրջանը Մայր Աթոռ ս. Էջմիածնում . . . . . 38

ՄԱՅՐ ԱԹՈՒՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր . . . . . 47

ԵԶՆԻԿ ԱՅԵՂԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ—Մովսեսի հայոց վարդապետի գրեալ պատասխանիք թղթյն Տրապիզոնի առ հատուածեալ Գրիգոր երէց . . . . . 50

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԿԱՎԱԳ ՍԱՐԳՍՅԱՆ—Մեծ պահոց խոհեր . . . . . 59

Ցուցակ Մայր Աթոռ ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի . . . . . 62

**ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ**

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».  
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS

Հանձնված է արտատրության 6/III 1975 թ.: Ստորագրված է տպագրության 8/IV 1975 թ.:  
Տպագրական 4 մամուլ + 8 ներդիր, թուղթ 80x84<sup>1</sup>/<sub>8</sub>, պատվեր 175

**Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1975 թ.**

